ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ասպիրանտների, մագիստրանտների, հայցորդների գիտաժողովի նյութերի

Երևան
2016

ԳԻՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀՏԴ 001:06
ԳՄԴ 72
Գ 602

Ժողովածուն հրատարակվում է ԷԻԿ ամբիոնի որոշմամբ

Գիտաժողովի կազմկոմիտե՝ Տարոն Մարգարյան ՃՇՀԱՀ Խորհրդի նախագահ
Գագիկ Գալստյան ՃՇՀԱՀ ռեկտոր, , տ.գ.դ-ր., պրոֆ.
Արկադի Բարխուդարյան ՃՇՀԱՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆ.
Եղիազար Վարդանյան Համալսարանի պրոռեկտոր, տ.գ.դ-ր.
Տիգրան Բարսեղյան Ճարտարապետության ֆակուլտետ, ճ.թ պրոֆ.
Կարեն Ռաշիդյանց ամբիոնի վարիչ, տ.գ.թ, պրոֆ.
Սարգիս Ստեփանյան՝ «ԷԻԿ» ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոց.
Արա Հովհաննիսյան «ԷԻԿ» ամբիոն, տնտ. թ., դոց.
Անահիտ Բեգլարյան «ԷԻԿ» ամբիոն, տնտ. թ., դոց.
Գրիգոր Հովակյան «ԷԻԿ» ամբիոնի դասախոս
Տիգրան Մարտիրոսյան, դեկան տնտ.դ. դոցենտ
Ռոբերտ Ազոյան Տրանսպորտային ֆակուլտետ, տ.գ.դ., պրոֆ.
Առնո Սևակ Մուրադյան քարտուղար

Խմբագրական կոլեգիա՝ Բորիս Կարապետյան՝ տ.գ.դ-ր.,պրոֆ., ՀԳԱԱ ակադեմիկոս
Վարդգես Գրիգորյան՝ ՇԱՏԿ ամբիոն վարիչ, տ.գ.դ. պրոֆ.
Դավիթ Քեթմենջյան՝ ճարտ.դ-ր., պրոֆ.
Վաղարշակ Մադոյան՝ բ.գ.դ-ր., պրոֆ.
Արմեն Շահինյան «ԷԻԿ» ամբիոնի դասախոս
Շուշանիկ Գաբրիելյան «ԷԻԿ» ամբիոն լաբորանտ
Արևիկ Ավետիսյան «ԷԻԿ» ամբիոն լաբորանտ

Գ 602 Գիտական աշխատությունների ժողովածու / ՀՀԿԳՆ; ՃՇՀԱՀ, ««ԷԻԿ» ամբիոն.
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ԷԻԿ ամբիոնի հրատարակչություն 2016թ- 68 էջ:

Սույն ժողովածուն ընդգրկում է Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի «Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման» ամբիոնի 2016թ. մայիսի 10-ից 11-ը անցկացված գիտաժողովի նյութերը:

Ժողովածուում ներկայացված են ասպիրանտների, մագիստրանտների, զեկույցները հոդվածներ տեսքով:

Ժողովածուում խմբագրված յուրաքանչյուր հոդված ունի գրախոսական և մասնագիտական ԷԻԿ ամբիոնի եզրակացություն (մարտի 25 № 8 արձանագրություն):

Cáîðíèê âêëþ÷àåò ìàòåðèàëû åæåãîäíîé íàó÷íîé êîíôåðåíöèè êàôåäðû “Ýêîíîìèêè, ïðàâà è óïðàâëåíèÿ” Национального университета архитектуры и строительства Армении. которое было проведено с 10-ого по 11-ое мая 2016г.

В сборнике представленны статьи аспирантов, магистрантов.

Любая опубликованная статья в сборнике имеет заключение от специализированной кафедры “Ýêîíîìèêè, ïðàâà è óïðàâëåíèÿ” университета. В сборнике все статьи отредактированы и имеют рецензию и заключение от кафедры ЭУС (протокол № 8 от 25 марта 2016г)

ՀՏԴ 001:06
ԳՄԴ 72

ISBN 978-9939-1-0374-7 © ՃՇՀԱՀ, Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման ամբիոն, 2016թ.

ՀՏԴ 33 ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄԵՆԵՋՄԵՆԹԸ ԵՎ ԴՐԱ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

Ա. Ս. Ա. Մուրադյան
Հարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան

Բանալի բառեր. *մենեջմենթ, կազմակերպություն, արդյունավետություն:*

Տնտեսական համակարգի զարգացումն ապահովելու նպատակով, մասնավորապես՝ ձեռնարկատիրության լայն և արդյունավետ ծավալման համար, կարևորագույն նշանակություն ունի արդյունավետ կառավարումը: Անընդհատ առաջադիմող տնտեսական աշխարհում, որտեղ գործարարության ու շահույթի ստեղծման գործընթացն ինքնիրեն չի հեշտանում, հաջողությունն ուղեկցում է այն կազմակերպություններին, որոնք ավելի արդյունավետ են կառավարվում, որում կիրառվում են կառավարման տեսության ու պրակտիկայի նվաճումները: Սույն հոդվածը նվիրված է կառավարման և դրա գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Կառավարման գործառույթները, մեթոդներն ու կառուցվածքները, կոմունիկացիաները և որոշումների ընդունման գործընթացը, վերջին հաշվով, ծառայում են մեկ հիմնական նպատակի՝ կազմակերպության գործունեության արդյունավետության ապահովմանը: Կառավարչի պարտականությունն է ռեսուրսները արդյունավետ համակարգելը և այն ուղղելը կազմակերպության նպատակների իրականացմանը [1]: Ինչպես պրակտիկ աշխատողների, այնպես էլ կազմակերպության գործունեությունն ուսումնասիրող ու վերլուծող տեսաբանների համար հիմնականը եղել ու մնում է արդյունավետության հասնելը, նրանք որոնում ու գտնում են արդյունավետ կամ համեմատաբար արդյունավետ գործող կառավարման կառուցվածքներ, կառավարման մեթոդներ, կոմունիկացիոն համակարգեր, խմբերի ձևավորման ու դրանց հետ համագործակցման եղանակներ և այլն [2]:

Էֆեկտիվ կառավարմանը հասնելու համար մեծ դեր ունի ռացիոնալ որոշման նախապատրաստման, ընդունման և իրագործման գործընթացը որը բաղկացած է մի շարք հաջորդական փուլերից՝

1. հիմնախնդրի ախտորոշում և ձևակերպում,
2. որոշումների ընդունման սահմանափակումների և չափանիշների ձևակերպում,
3. այլընտրանքների բացահայտում,
4. այլընտրանքների գնահատում,
5. այլընտրանքներից որևէ մեկի ընտրություն,
6. որոշման իրագործման կազմակերպում:

Կազմակերպության գործառույթները պետք է իրականացվեն հնարավորինս նվազագույն ծախսերով՝ առավելագույն արդյունք կարգախոսով: Տնտեսագիտական ընդունված լուծումը հետևյալն է. «Արտադրական ներուժը կարող է մեծանալ նոր ռեսուրսների կուտակման, ինչպես նաև դրանց արդյունավետ օգտագործման նոր եղանակների ու մեթոդների ստեղծման հաշվին» [3]:

Արդյունավետ կառավարման հասնելու համար պետք է՝

- կառուցել բիզնես ռազմավարություն և նախագիծ,

1. Understanding Management 8th Edition by Richard L. Daft and Dorothy Marcic
2. Հախվերդյան Ս.Ե. և ուրիշն.- «Կառավարման հիմունքներ»

[3] Վալերի Միրզոյան «Կառավարման արդյունավետության տնտեսագիտական և կառավարաբանական ըմբռնումները» էջ 3-4

- իրականացնել տեխնոլոգիաների գնահատում,
- դիտարկել կառավարման կառուցվածքը և մոտեցումը,
- ստեղծել հուսալի հիմք,
- անհրաժեշտության դեպքում փոխել կառավարման մոդելը [4]:

Այսօր կազմակերպության արդյունավետության կառավարման մեթոդներն ու մոտեցումները բազմազան են. ֆինանսական ցուցանիշների հավաքածուից մինչև տնտեսական ավելացված արժեքի ժամանակակից հայեցակարգ (Economic value added), դեպի արժեքն ուղղված կառավարում (Value-based management), ֆրանսիական կառավարման թվային համակարգ (Tableau de bord), ինչպես նաև հաշվեկշռված ցուցանիշների համակարգ (The balanced scorecard):
The balanced scorecard հայեցակարգ – Ցուցանիշների հաշվեկշռված համակարգ.

- կազմակերպության արդյունավետությունը (արժեքի ավելացում) դիտարկվում է 4 ուղղությամբ իրականացվող գործունեության և հեռանկարային պլանների ցուցանիշների տեսանկյունից,
- ֆինանսներ, սպառողներ, բիզնես գործընթացներ, ուսուցում և աճ,
- կազմակերպության 4 ուղղության ռազմավարական նպատակները մասնատվում են մինչև կազմակերպության առանձին ստորաբաժանումների ցուցանիշների:

Economic value added – Տնտեսական ավելացված արժեք.

- կազմակերպության արդյունավետությունը (արժեքի ավելացում) կոռելացված է EVA ցուցանիշի հետ ,
- EVA-ի որոշող գործոնները ընկած են կազմակերպության արժեքի հիմքում,
- կազմակերպության ռազմավարական նպատակները կապ ունեն EVA-ի գործոնների օպտիմիզացման հետ:

Տնտեսական ավելացված արժեքը վերջերս սկսել է կիրառվել աշխարհի բազմաթիվ ավելի քան 250 հայտնի ու առաջատար ընկերություններում (AT&T, Quarker Oats, Briggs & Stratton, Coca-Cola և այլն): EVA-ի էությունը կայանում է նրանում, որ ցույց է տալիս ձեռնարկության շուկայական արժեքի ավելացումը և ընկերության գործունեության արդյունավետության գնահատումը դրա շուկայական գնահատման միջոցով, այսինքն՝ իրենից ներկայացնում է մաքուր շահույթի և դրա ստացման համար օգտագործված կազմակերպության սեփական կապիտալի արժեքի տարբերությունը.
EVA=NOPAT - WACC * CE

որտեղ՝ NOPAT= Net Operating Profit After Tax - զուտ գործառնական շահույթն է հարկումից հետո, CE (Capital Employed)-ն ներդրումային կապիտալն է, WACC (Weighted Average Cost of Capital)-ը կապիտալի արժեքի միջին կշռված մեծությունն է, իրենից ներկայացնում է շահույթի նվազագույն նորման, որը սպասում են ներդրողներն իրենց կատարած ներդրումների դիմաց:

Հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$WACC = \sum_{i=1}^{n} C_i \times Y_i$$

որտեղ՝ C_i - ֆինանսավորման i-րդ աղբյուրի գինն է (%),

Y_i- i-րդ աղբյուրի տեսակարար կշիռն է ընդհանուր ծավալի մեջ՝միավորի հաշվով,

[4] Effective content or records management implementation
by John Mancini

n - աղբյուրների քանակն է (i=1,2,…,n):

Tableau de bord հայեցակարգ – Կառավարման թվային համակարգ

- կազմակերպության արդյունավետությունը դիտարկվում է տարբեր հեռանկարային ուղղությունների տեսանկյունից,
- բաժնետերեր, սպառողներ, հասարակություն, բիզնես գործընթացներ, գործընկերներ, անձնակազմ,
- հնարավոր է վերոնշյալ ուղղությունների ճկուն օգտագործում,
- ցուցանիշների մասնատման հիմքում ընկած է կազմակերպական կառուցվածքը:


Value-based management հայեցակարգ – Արժեքի կառավարման համակարգ

- կազմակերպության արդյունավետությունը (արժեքի ավելացումը) դիտարկվում է ընկերության շուկայական արժեքի աճի տեսանկյունից,
- գնահատում, ռազմավարություն, ֆինանսներ, կորպորատիվ կառավարում,
- գործունեության արդյունավետության գնահատումն իրականացվում է արժեքի կառավարման ցուցանիշների համակարգի միջոցով:

Զարմանալի չէ, որ արժեքի վրա հիմնված ցուցանիշները վերջին տարիներին լայն ուշադրության են արժանանում, իսկ բիզնեսի կառավարման արժեքային կողմնորոշման մոդելը լայն տարածում է ստանում: Այս հայեցակարգի հիմքում ընկած է այն ընկալումը, որ կազմակերպության հիմնական նպատակը բաժնետերերի կամ սեփականատերերի համար դրա արժեքի աճն է: Այս առումով մոդելի տակ հասկացվում է ընկերության արժեքի ստեղծման գործընթացի համակարգային կառավարման շնորհիվ ավելի լավ ֆինանսական արդյունքների ստեղծմանը ուղղված կառավարման հայեցակարգ, որում առանձնացվում են հիմնական 4 մոդուլներ՝

1. գնահատում
2. ռազմավարություն
3. ֆինանսներ
4. կորպորատիվ կառավարում

Նկատի ունենալով այն, որ BSC-ը (ՑՀՀ կամ Ցուցանիշների հաշվեկշռված համակարգ) հանդիսանում է ընկերության արժեքի ստեղծման հզոր շարժիչ, իսկ VBM-ը՝ (ԱԿՀ կամ Արժեքի կառավարման համակարգ) այդ արժեքը գնահատող համակարգ, կարելի է քննարկել հիշյալ երկու հայեցակարգերի՝ ընկերությունում միաժամանակյա ներդրման հարցը: Հաշվի առնելով 2 հայեցակարգերի ինչպես տարբերիչ առանձնահատկությունները, այնպես էլ նմանությունները, կարելի է մշակել կազմակերպությունում երկու հայեցակարգերի միաժամանակյա ներդրման հետևյալ մոդելը.



Նկ. Հայեցակարգերի մոդելը

Հայեցակարգերի միավորման նպատակային էությունը կարելի է բացատրել հետևյալ կերպ. Կառավարման նոր համակարգերի ներդրման ու կիրառման գործընթացը, այսինքն կառավարման արդյունավետության մեծացումն ուղղակիորեն կհանգեցնի կազմակերպությունում կորպորատիվ կառավարման մակարդակի բարձրացման և կորպորատիվ մշակույթի ձևավորման, վերջնական արդյունքում՝ կորպորատիվ կառավարման ընթացակարգերի և կազմակերպության արդյունավետության միջև փոխադարձ կապի գնահատման, հավասարակշռվում են կորպորատիվ հարաբերությունները, մասնավորապես՝ սեփականատերերի շահերի զարգացումը զուգակցվում է հաճախորդների շահերի ապահովման և կազմակերպության անձնակազմի շահադրդման հետ [5]:

Այսպիսով, պետք է հաշվի առնել վերոնշյալ բոլոր պահանջները և ընդունել համապատասխան որոշումներ արդյունավետ կառավարմանը հասնելու համար:

ЭФФЕКТИВНОСТЬ МЕНЕДЖМЕНТА И ПРОЦЕСС ЕГО ПОВЫШЕНИЯ

Мурадян А.С.А.
Национальный университет архитектуры и строительства Армении

Ключевые слова; менеджмент, организация, эффективность.

Для того, чтобы обеспечить развитие экономической системы, в частности, для широкого и эффективного развертывания бизнеса, эффективное управление имеет большое значение. Постоянно растет экономический мир самого бизнеса и процесс создания прибыли не прост, успех приходит к тем организациям, которые управляются более эффективно, у которотых есть достижения в области теории и практики управления. Главной предпосылкой этой статьи является повышение эффективности управления процесса.

MANAGEMENT EFFECTIVENESS AND WAYS TO IMPROVE

A.S.A. Muradyan *National*
University of Architecture and Construction of Armenia

Keywords; management, organization, effectiveness.

Management is a crucial factor for ensuring the development of the economic system in particular for a wide and effective deployment of the business. Constantly growing economic world of business and the process of creating profit is not easy, success comes to those organizations that are managed more effectively, and those companies which have achievements in the theory and practice of management. The main premise of this article is to improve the process of governance.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Understanding Management 8th Edition by Richard L. Daft and Dorothy Marcic
2. Հախվերդյան Ս.Ե. և ուրիշն.- «Կառավարման հիմունքներ»
3. Վալերի Միրզոյան - «Կառավարման արդյունավետության տնտեսագիտական և կառավարաբանական ըմբռնումները» էջ 3-4
4. Effective content or records management implementation by John Mancini
5. Կազմակերպության արդյունավետության կառավարման մեթոդները (Performance based management) http://armeco.am/publ/10-1-0-60#sthash.0SFjPuzu.dpuf

Ստեփանյան Սարգիս Շավարշի
ԷԻԿ *ամբիոնի վարիչ տ.գ.թ. դոցենտ*



Մուրադյան Առնո Սևակ Արսենի
ԷՄ 51 խմբի մագիստրանտ



ՀՏԴ 336 ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԴԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Լ. Գ. Մանասարյան
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան

Բանալի բառեր. *վարկ, հիփոթեք, բնակարանային ֆոնդ, շինարարության ոլորտ, գնողունակություն:*


Հոդվածը նվիրված է հիփոթեքային վարկավորման նշանակությանը բնակարանային շինարարության ճյուղում: Յուրաքանչյուր պետության գերխնդիր է քաղաքացու կայացման և զարգացման համար ապահովել բարենպաստ պայմաններով: Կառուցվող շինարարության քանակը բավականին մեծ է, սակայն սպառումը շատ դանդաղ է: Հայաստանում ներկա պայմաններում մարդկանց գնողունակությունը ցածր է, այդ պատճառով էլ շինարարության ճյուղի զարգացման համար հարկավոր են խթաններ: Հիփոթեքային վարկավորումը կարող է խթանել շին. ճյուղի զարգացմանը, սակայն անհրաժեշտ է կատարելագործել նաև վարկավորման համակարգը:

Յուրաքանչյուր պետության համար գերխնդիր է քաղաքացիների կայացման և զարգացման համար ապահովել բարենպաստ պայմաններ: Ընտանիքը՝ պետության սկզբնաբջիջն է և պետությունը, որքանով կարողանա երաշխիքային պայմաններ ապահովել իր քաղաքացիների ընտանիքների համար, այդքանով էլ կնպաստի քաղաքացիների զարգացմանը և բարգավաճմանը: Վերը նշվածի համար, հարկավոր է ապահովել մարդկանց աշխատատեղերով և համապատասխան կենցաղային պայմաններով, որոնցից կարևորը հանդիսանում է բնակարանը: Մի կողմից բնակարանը կբավարարի մարդու պահանջը՝ ապրելու, զարգանալու, իսկ մյուս կողմից կզարգանա շինարարությունը՝ ապահովելով նաև աշխատատեղերի շինարարության ճյուղում նախագծման, նախահաշվարկման, կառուցման գործում: Բնակարանների ձեռք բերման հարցը այսօր խնդիր է հանդիսանում՝ միջոցների բացակայության, անբավարար լինելու պատճառով: Նախկինում այդ հարցը լուծվում էր պետական սեկտորի հատկացումների միջոցով կամ կոպերատիվների միջոցով: Ներկայումս՝բնակարանների ձեռք բերման համար տրամադրվում են վարկեր՝ մասնավորապես հիփոթեքային: «Հիփոթեք» անվանումը առաջացել է հունարեն hypotheke բառից, որը նշանակում է գրավ և առաջին անգամ ի հայտ է եկել Հին Հունաստանում մ.թ.ա. VII դարի վերջում և կապված էր պարտատիրոջ հանդեպ պարտապանի ունեցած պարտավորությունների ապահովման հետ՝ որոշակի հողային միավորների սեփականության իրավունքի գրավադրմամբ: Հետագայում հիփոթեքային ինստիտուտը զարգացում ստացավ Գերմանիայում, այնուհետև Եվրոպական մի շարք երկրներում: 1848թ. Ֆրանսիայում հիմնադրվեց առաջին հիփոթեքային «Ձեռնարկատիրական դրամարկղներ» կազմակերպությունը: Ավելի ուշ 1857թ. ստեղծվում է «Անշարժ գույքի վարկավորման բանկ» կազմակերպությունը, որը գոյություն ունի նաև ներկայումս[2]: ԱՄՆ-ում հիփոթեքային վարկավորման առաջին փորձը եղավ: Այսպիսով՝ հիփոթեքային վարկավորման համակարգը տարածում գտավ շուկայական տնտեսությամբ բոլոր երկրներում և անհրաժեշտ է հասարակությանը՝ պետության կողմից օգտագործվող և տնտեսական, և սոցիալ քաղաքականության մեջ:

Բնակարանային շինարարության կարիքը տարեց-տարի մեծանում է Հայաստանի Հանրապետությունում, սակայն սակավ են այդ շինարարության ֆինանսավորման աղբյուրները: Այդ պատճառով էլ մեծանում է երկարատև վարկերի անհրաժեշտությունը, որոնք մինիմալ չափով կենթարկվեն ինֆլիացիայի և կլինեն առավելագույնս ապահոված վերադարձնելիությամբ: Հենց այդ պահանջներն է բավարարում հիփոթեքային վարկավորումը: Արտասահմանյան մի շարք երկրների փորձը վկայում է այն մասին, որ պետական քաղաքականության ճիշտ կազմակերպման դեպքում հիփոթեքը կամաց-կամաց վերափոխվում է ինքնաֆինանսավորման համակարգի: Այսպիսով՝ հիփոթեքը վարկի տեսակ է, որը ապահովում է պարտավորությունների կատարումը գրավադրման միջոցով: Հիփոթեքը տրամադրվում է հողի և անշարժ գույքի գրավադրմամբ, ինչը սահմանված է օրենքով[1]: Հիփոթեքային վարկի տրամադրման համար, որպես գրավ կարող են հանդես գալ՝ հողը, բնակարանները, ամառանոցները, ձեռնարկությունները և այլն: Հիփոթեքային վարկեր կարող են տրամադրվել ինչպես

հատուկ հիփոթեքային բանկերի կողմից, այնպես էլ առևտրային այլ բանկերի ապահովագրական ընկերությունների կողմից:

Մասնագիտացված բանկեր



Հիփոթեքային բանկի ռեսուրսները ձևավորվում են սեփական միջոցների կուտակումներից: Հայաստանի Հանրապետությունում հիփոթեքային առանձին բանկեր կարելի է ասել չեն ստեղծվել, սակայն կան ունիվերսալ բազմաբովանդակ և բազմաբնույթ վարկեր հատկացնող բանկեր, որոնք տրամադրում են հիփոթեքային վարկեր: Հայաստանի Հանրապետությունում հիփոթեք է համարվում այն գրավը, որի առարկան անկախ նրանից անշարժ, թե շարժական գույք է գրավատուի կամ երրորդ անձի օգտագործման և տիրապետման ներքո է (ՀՀ քաղ. օր. հոդ.-260): Իսկ հիփոթեքի պայմանագրով մի կողմը՝ գրավառուն է, որը հիփոթեքով ապահովված վարկային պայմանագրով կամ այլ պարտավորությամբ (հիմնական պարտավորությամբ) պարտատերն է, այդ պարտավորությամբ գրավ դրված գույքի արժեքից գրավատուի մյուս պարտատերերի հանդեպ իր դրամական պահանջները բավարարելու նախապատվության իրավունք ունի (ՀՀ քաղ. օր. հոդ.-261): Հիփոթեքի պայմանագրի բուն իմաստից գրավատուն ստանում է հիմնական գումարը, որը լրիվ ապահովվում է հիփոթեքով կամ մի մասը, որը նախատեսված է հիփոթեքի մասին պայմանագրով: Նախատեսվում են հիփոթեքով ապահովված գումարների վճարման հետևյալ դեպքերը. վնասների հատուցում տույժերի տեսքով, որոնք առաջանում են հիփոթեքային պարտավորությունների անպատշաճ կատարման և ուշացման դեպքերում, տոկոսների վճարում հիփոթեքային պայմանագրով նախատեսված դրամական միջոցների անօրինական օգտագործման համար, գրավադրված գույքի իրացման դեպքում դատական և այլ հնարավոր ծախսերի հատուցում: Հիփոթեքային վարկավորումը անխոս բանկային գործունեության հեռանկարային զարգացման ուղղություն է և հիփոթեքային ինստիտուտի կայուն զարգացումը ապահովում է բանկային համակարգի կայունությունը: Շատ ֆինանսական ինստիտուտների համար հիփոթեքային վարկավորումը համարվում է ներդրման և եկամտի ամենակարևոր աղբյուրներից մեկը: Կապիտալի հոսքը ֆինանսական ինստիտուտներից կապիտալի շուկաներ կատարվում է հիփոթեքային վարկավորման միջոցով: Հիփոթեքային վարկավորման զարգացումը ունի դրական ազդեցություն սոցիալական անկայուն իրավիճակի վրա[3]: Հիփոթեքը ազդում է նաև բնակչության զբաղվածության ապահովման վրա: Այդ ազդեցությունը դրական է, քանի որ մարդկանց հնարավորություն է ընձեռնվում աշխատանք ունենալու պայմաններում բավարարել իրենց պահանջմունքները: Հետևաբար, հիփոթեքային հարաբերությունների զարգացումը նպաստում է պետության մեջ մեղմելու երկու կարևոր խնդիրներ՝ բնակչության բնակարանային և զբաղվածության խնդիրները: Իսկ այս երկու հարցերի լուծումը հնարավոր կդարձնի կանխել զգալի չափով հասարակության համար չարիք հանդիսացող արտագաղթը: Ներկայումս Հայաստանում ստեղծված է այնպիսի իրավիճակ, երբ կառուցված բնակարանները դժվար են գտնում

իրենց հասցեատերերին: Իհարկե, այստեղ պատճառները բավականաչափ են՝ գնողունակության նվազում, դրամի արժեզրկում, աշխատատեղերի պակաս և այլն: Այնուամենայնիվ, հնարավոր է հիփոթեքի մեխանիզմների ճիշտ կազմակերպումը որոշակի քայլերի միջոցով՝

- ցածր տոկոսադրույքներով,
- վարկի տրամադրման ժամկետների երկարաձգմամբ (25 տարի և ավելի),
- ապահովագրական ընկերությունների դերի բարձրացմամբ,
- օրենսդրական և նորմատիվային բազայի կատարելագործմամբ, նոր մեխանիզմների ստեղծմամբ,
- ազգաբնակչության կենսամակարդակի բարձրացմամբ:

Այսպիսով՝ հիփոթեքի նշանակությունը երկրի տնտեսության, մասնավորապես շինարարության ճյուղի զարգացման և կայունացման համար կայանում է հետևյալում.

- ձևավորում է բնակարանային շուկան և ապահովում նրա զարգացումը,
- նպաստում է բնակչության պահանջարկի խթանմանը և ապահովում է քաղաքացիների բնակարանային կարիքները,
- ներգրավում է քաղաքացիների միջոցները երկրի տնտեսական շրջանառության մեջ,
- կատարելագործում է վարկավորման և ֆինանսավորման համակարգը,
- բարձրացնում է բնակարանային շինարարության սեկտորների ակտիվությունը և զարգացումը, իսկ շինարարությունը երկրի աճը ցուցանող ցուցանիշ է,
- կարգավորում է տնտեսական վիճակը ամբողջ երկրում:

Կարելի է նշել, որ հիփոթեքային վարկավորումը հանդես է գալիս երկրի տնտեսական և սոցիալական խթան: Ուստի այս վարկատեսակի զարգացումը և տարածումը կապահովի ոչ միայն անշարժ գույքի շուկայում, այլև կաշխուժացնի երկրի տնտեսական վիճակը:

РОЛЬ И ЗНАЧЕНИЕ ИПОТЕЧНОГО КРЕДИТОВАНИЯ В ПАЗВИТИИ СТРОИТЕЛЬНОЙ ОТРАСЛИ

Манасарян Л.Г.
Национальный университет архитектуры и строительства Армении

Ключевые слова; кредит, ипотека, жилищный фонд, строительная отросль, покупательная способность.

АННОТАЦИЯ

В любом обществе, где главной ценностью является человек, необходимо создать условия для его становления и развития. Главной предпосылкой обеспечения выше указанного это удовлитворение членов общества в потребности жилой площяди. В настоящее время в Армении очень много построиного желья, однако покупательная способность у людей не великиа. Поэтому возростает роль и значение ипотечьного кредитования, что способствует продаже жилищного фонда, а значет и дальнейщему развитию строительной отрасли. Очень важны условия выдачи кредитов, сроки , проценты и.т.д. В связи с этим необходимо совершенствовать систему кредитования.

THE ROLE AND IMPORTENCE OF MORTGAGE LENDING IN THE DEVELOPMENT OF THE CONSTRUCTION INDUSTRY

L.G.Manasaryan
Universite nationale architecture et de construction Armenie

Keywords; loan, mortgage, housing, construction industry, the purchasing power.

SUMMARY

In any society where the main value is people, it is necessary to create conditions for its formation and development. The main prerequisite for the above is to meet the needs of members of society in the living ploschyadi. Currently, a lot of new housing in Armenia, but the purchasing power of the people is not great. Therefore, the role and increasing the value of mortgage loans, which promotes the sale of housing, and znachet dalneyschih and development of the construction industry. Very important conditions for the issuance of loans, terms, interest rates, etc. In this connection it is necessary to improve the lending system.

Օգտագործված գրականություն՝

1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք (հոդվածներ 260-272),Եր. 2006թ. 446էջ.
2. Ս.Շ.Ստեփանյան, Վ.Ֆ.Հովհաննիսյան, Ա.Լ.Գրիգորյան, Անշարժ գույքի էկոնոմիկա և կառավարում, Եր. 2007թ. 586էջ :
3. Шершеневич Г.Ф. “Учебник гражданское право ипотека”.

Ստեփանյան Սարգիս Շավարշի
ԷԻԿ *ամբիոնի վարիչ տ.գ.թ. դոցենտ*



Լաուրա Գևորգի Մանասարյան
ԷՄ 41 խմբի մագիստրանտ



ՀՏԴ 658.3.07 ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՎԱՐՔԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆ

Ռ. Ա. Սարդարյան
Հարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան

Բանալի բառեր՝ *կառավարում, արդյունավետություն, ղեկավարում, կազմակերպական վարք, անձնակազմ, ձեռնարկություն*

Կառավարման նկատմամբ տարբեր մոտեցումները լրացնում են միմյանց և դրանցից ոչ մեկը չի կարելի համարել ճիշտ կամ միակ միջոց, որը թույլ է տալիս լավ ղեկավար դառնալ: Տեսություններից յուրաքանչյուրը կանգ է առնում իր հարցերի շարքի վրա, և միայն միասին վերցրած դրանք կարող են փոխանցել արդյունավետ կառավարման հարուստ պատկերը: Հոդվածի շրջանակներում հիմնական ուշադրությունը կենտրոնացված է ձեռնարկությունում կառավարման էության վրա: Տրվում է կառավարման սահմանում և քննարկվում են կազմակերպությունում գործող կառավարիչների տարբեր տեսակները: Ուսումնասիրվել են կառավարման տարբեր մոտեցումներ՝ բնահատուկ առանձնահատկությունների վրա հիմնված մոտեցումը, վարքագծային մոտեցումը, ուղու և նպատակի տեսությունը, ղեկավարների և ենթակաների միջև փոխանակման տեսությունը: Վերլուծվել են կառավարման տեսության և հետազոտությունների մեջ որոշ նոր թեմաներ, ինչպիսիք են՝ գենդերային գործոնը կառավարման մեջ, ձևափոխող և խարիզմատիկ կառավարումը:

Երբ կազմակերպություններում ի հայտ են գալիս խնդիրներ, ապա, սովորաբար դրա մեղավորությունը դրվում է ղեկավարների վրա: Նմանապես, երբ կազմակերպություններում գործերը լավ են, ապա աշխատակիցները սովորաբար դա բացատրում են նրանով, որ ղեկավարները լավ են կատարում իրենց աշխատանքը: Քանի որ համարվում է, որ բարդ իրավիճակներում ղեկավարները էականորեն ազդում են կազմակերպության գործունեության ցուցանիշների վրա, ապա հաճախակի իրավիճակը փոխելու համար տնօրենների խորհրդում ներառվում է նոր անդամ:

Լայն տարածում է գտել այն համոզմունքը, որ ղեկավարները կարող են մեծ ազդեցություն ունենալ առանձին մարդկանց, խմբերի և կազմակերպությունների վրա: Կանգ առելնելով կառավարման երկու ասպեկտների վրա, առաջինը՝ ինչու են կազմակերպության որոշ անդամներ դառնում ղեկավարներ, իսկ մյուսները՝ ոչ, և երկրորդը՝ ինչու են որոշ ղեկավարներ ավելի արդյունավետ իրենց աշխատանքի մեջ, քան մյուսները, ընդհանուր առմամբ հետազոտությունները հաստատել են այն հայտնի պնդումը, որ ղեկավարումը իսկապես անհատական, խմբային և կազմակերպական արդյունավետության կարևոր բաղկացուցիչ է [1, էջ 225]: Լավ ղեկավարներն ակտիվացնում են աշխատանքային խմբի անդամներին և ընդհանուր առմամբ կազմակերպությանը և դրդում նրանց գործելու բարձր մակարդակի վրա և հասնելու սահմանված նպատակներին: Եվ հակառակը, հաճախակի կազմակերպության բոլոր մակարդակներում աշխատանքների ցածր ցուցանիշները կարելի է բացատրել արդյունավետ կառավարման բացակայությամբ:

Բարդ է տալ հստակ սահմանում կառավարմանը: Կառավարման հասկացության մեջ մտնող շատ բնութագրերի վերաբերյալ հետազոտողների կարծիքները չեն համընկնում: Սակայն դրանցից երկուսը տարաձայնություններ չեն առաջացնում:

1. Ղեկավարումը ենթադրում է աշխատողների խմբի մյուս անդամների կամ կազմակերպության վրա ազդեցության ցուցաբերում:

2. Ղեկավարումը ենթադրում է խմբին կամ կազմակերպությանը օգնության ցուցաբերում իր նպատակներին հասնելու համար:

Համախմբելով այդ երկու հիմնական բնութագրերը կարելի է ղեկավարումը սահմանել, որպես խմբի կամ կազմակերպության մեկ անդամի ազդեցություն մյուս անդամների վրա, դրսևորվող, որպեսզի օգնի խմբին կամ կազմակերպությանը հասնել իր առջև դրված նպատակներին [2, էջ 61; 1, էջ 225]:

Կառավարման գաղափարի երկու ամենաառաջին հայացքները հիմնվել են բնահատուկ առանձնահատկությունների և վարքագծի վրա: Բնահատուկ առանձնահատկությունների տեսությունը փորձում է սահմանել այնպիսի անձնական բնութագրեր, որով օժտված է արդյունավետ ղեկավարը: Վարքագծային մոտեցումը կենտրոնացած է այն վարքագծային տիպերի վրա, որը բնորոշ է արդյունավետ ղեկավարներին:

Բնահատուկ առանձնահատկությունները մարդու զգալու, մտածելու և որոշակի ձևով գործելու առանձնահատուկ հակումն է: Առ այսօր անցկացվել են բազմաթիվ հետազոտություններ և արդյունքում առանձնահատկությունների ցուցակը կրճատվել է՝ հասնելով մի քանի միավորի, որոնք ցույց են տալիս արդյունավետ կառավարման հետ դրանց սուր կապը [3, էջ 577; 1, էջ 227].

- Բանականություն
- Լուծվող խնդրի հետ կապ ունեցող գիտելիքների առկայություն
- Գերակայության պահանջ
- Իր ուժերի վրա վստահություն
- Էներգիայի և ակտիվության բարձր մակարդակ
- Սթրեսների նկատմամբ կայունություն
- Ամբողջականություն և ազնվություն
- Էմոցիոնալ հասունություն

Վարքագծային մոտեցումն ուսումնասիրում է այն, թե փաստացի ղեկավարներն ինչ են անում և փորձում է դուրս բերել ղեկավարի այն վարքագծային տիպերը, որոնք օգնում են աշխատակիցներին, խմբերին և կազմկերպություններին հասնել իրնց բազմազան նպատակներին:

Ohio State University-ի հետազոտողները պարզել են, որ ղեկավարների վարքագծային տիպերի մեծամասնությունը ընդգրկում են կամ հարգալիցություն, կամ կառուցվածքի ձևավորում [3, էջ 580; 1, էջ 229]:

Այն վարքագիծը, որը ղեկավարը դրսևորում է ցույց տալով, որ նա վստահում է իր ենթականերին, հարգում ու գնահատում է նրանց, հայտնի է որպես հարգալիցություն:

Վարքագիծը, որն ընտրում է ղեկավարը, որպեսզի վստահ լինի, որ աշխատանքը ճիշտ կկատարվի և իր աշխատողները կատարում են հանձնարարությունը պատշաճ կարգով, հայտնի է որպես կառուցվածքի ձևավորում:

Հարգալիցությունը և կառուցվածքի ձևավորումը ղեկավարների վարքագծի փոխլրացնող, սակայն միմյանցից անկախ ձևեր են: Դրանցից զատ ղեկավարներրը կիրառում են վարքագծային մոտեցման այլ ձևեր ևս, որոնք մեծ ազդեցություն են ունենում իրենց ենթակաների վրա:

Հիմնականում ղեկավարներն են պատասխանատվություն կրում պարգևատրումների բաշխման և պատժամիջոցների կիրառման մեջ [1, էջ 231]: Երբ ղեկավարը ուժեղացնում է ենթակաների վարքագծի ցանկալի ձևը դրական միջոցներով, դա խոսում է նրա վարքագծի պարգևատրող տիպի մասին: Երբ ղեկավարը նախատում է, կամ բացասական է արձագանքում ենթակաների անցանկալի վարքագծի դրսևորման դեպքում, ապա դա խոսում է ղեկավարի պատժող վարքագծային տիպի մասին:

Չնայած պատժող վարքագիծը կարող է արդյունավետ միջոց համարվել կազմակերպությունում անցանկալի կամ պոտենցիալ վտանգավոր իրավիճակներից խուսափելու տեսանկյունից, սակայն այն կարող է ունենալ անցանկալի կողմնակի արդյունքներ, օրինակ՝ վրդովմունք:

Կազմակերպություններում տարածված ընդհանուր կարծրատիպերից մեկն այն է, որ կանայք սովորաբար աջակցում են մյուսներին, հոգատար են և լավ են կառավարում միջանձնային հարաբերությունները: Եվ հակառակը, ըստ այս կարծրատիպի, ի տարբերություն կանանց, տղամարդիկ գործում են դիրեկտիվ և կենտրոնացած են աշխատանքի կատարման վրա, այլ կերպ ասած, նրանք, սովորաբար առաջին հերթին կենտրոնանում են խնդրի վրա: Եթե դատենք այդ կարծրատիպերով, ապա պետք է սպասել, որ գենդերային գործոնը ազդում է ղեկավարման վրա, և սովորաբար կին ղեկավարներն ուղղված են դեպի հարգալիցության մոտեցմանը, իսկ տղամարդիկ՝ կառուցվածքի ձևավորմանը [4, էջ 52; 3, էջ 598; 1, էջ 251]:

Հետազոտությունները ցույց են տվել, որ երբ կազմակերպությունում կանայք և տղամարդիկ զբաղեցնում են ղեկավարման դիրքեր, նրանք սովորաբար միանման են դրսևորում իրենց, այսինքն՝ կանայք միշտ չէ, որ նախընտրում են հարգալիցության մոտեցումը, իսկ տղամարդիկ՝ կառուցվածքի ձևավորման:

Սակայն գոյություն ունի տղամարդկանց և կանանց միջև ղեկավարման առանձնահատկությունների մի տարբերություն: Կանայք ցուցաբերում են ղեկավարման ավելի ժողովրդավարական ոճ, իսկ տղամարդիկ՝ ինքնակալական: Դեմոկրատ ղեկավարները հաճախակի ներգրավում են իրենց ենթականերին որոշումների ընդունման մեջ և փորձում են այնպես անել, որ ենթակաները ունենան դրանց մեջ իրենց ամենատարբեր ներդրումները: Ինքնակալ ղեկավարները սովորաբար չեն ընդլայնում իրենց ենթակաների մասնակցությունը որոշումների ընդունման մեջ և սիրում են լուծել խնդիրներն այնպես, ինչպես դուր է գալիս իրենց:

Ինչու՞ են կին-ղեկավարները ավելի դեմոկրատ: Հետազոտողներն առաջարկել են դրա բացատրության երկու հնարավոր տարբերակներ.

- Կանանց փորձը և կարողությունները միջանձնային հարաբերություններում, ինչը խիստ կարևոր է դեմոկրատ և ներգրավող լինելու համար, որպես կանոն ավելի հարուստ են, քան տղամարդկանցը:
- Կանայք կառավարական դիրքերում հանդիպում են ենթականերից ավելի ուժեղ դիմադրության, քան նույն իրավիճակում գտնվող տղամարդիկ:

Նորանշանակ կին-ղեկավարը հաշվի առնելով իր ենթակայի դիմադրությունը և բացասական զգացմունքները, կարող է փորձել հաղթահարել դրանք ներգրավելով այդ ենթակային որոշումների ընդունման մեջ և փորձելով հասնել նրա մասնակցությանը ամենատարբեր հարցերում:

Բնահատուկ առանձնահատկությունների և վարքագծային տիպերի մոտեցումները օգնում են հասկանալ արդյունավետ ղեկավարման էությունը, մատնանշելով, թե ինչպիսին են լինում արդյունավետ գործող ղեկավարները և այդ դեպքում ինչ են նրանք անում: Չնայած ղեկավարման էությունն ավելի լավ հասկանալու համար անհրաժեշտ է նաև վերլուծել, թե ինչ դեր ունի դրանում իրավիճակը:

Ներկայումս առաջարկվում են ղեկավարմանը նվիրված որաշակի տեսություններ կամ մոտեցումներ, որտեղ հաշվի են առնվում և՛ ղեկավարի հատկանիշները, և՛ իրավիճակի ազդեցությունը, որը հնարավորություն է տալիս ավելի խորը հասկանալ և բացատրել ղեկավարի աշխատանքի արդյունավետությունը: Այդ լրացուցիչ տեսությունների համակցումը՝ հիմնված բնահատուկ առանձնահատկությունների կամ վարքագծային մոտեցման վրա, տալիս է ղեկավարների գործունեության վերաբերյալ ավելի ընդհանուր պատկեր: Դրանցից են «ուղու և նպատակի» և ղեկավարի և նրա ենթակաների միջև փոխանակման տեսությունները:

Ուղու և նպատակի տեսությունը նկարագրում է, թե ինչպես են ղեկավարները մոտիվացնում իրենց ենթականերին գործել բարձր մակարդակով խմբային և կազմակերպական նպատակներին հասնելու համար, և վարքագծի այն տիպերը, որոնք ղեկավարները կարող են ընտրել դրա իրականացման համար [3, էջ 588; 1, էջ 236].

- Արդյունավետ գործող ղեկավարները խթանում են իրենց ենթականերին հասնել խմբային և կազմակերպական նպատակների:
- Արդյունավետ գործող ղեկավարները վստահ են, որ վերահսկում են այն արդյունքների ստացումը, որոնք ցանկալի են իրենց ենթակաների համար:
- Արդյունավետ գործող ղեկավարները պարգևատրում են բարձր արդյունքներ ապահոված և սահմանված նպատակներին հասած աշխատակիցներին, ընդ որում ենթակաները ստանում են նրանց համար ցանկալի արդյունքներ:
- Արդյունավետ գործող ղեկավարները ամրապնդում են ենթակաների համոզմունքը նպատակներին հասնելու և բարձր մակարդակով գործելու նրանց հնարավորության մեջ: Նրանք կարող են անել դա, ցույց տալով ենթականերին նպատակներին հասնելու ուղիները (այստեղից է ուղու և նպատակի տեսություն անվանումը)՝ վերացնելով յուրաքանչյուր խոչընդոտ, որը կարող է հանդիպել այդ ճանապարհին:
- Այն դեպքում, երբ պետք է որոշվի, թե ինչպես վարվել ենթակաների հետ և վարքագծի ինչ տիպեր դրա համար ընտրել, արդյունավետ գործող ղեկավարները հաշվի են առնում իրենց աշխատակիցների առանձնահատկությունները և իրականացվող աշխատանքների տիպերը:

«Ուղու և նպատակի» տեսության հեղինակ Ռոբերտ Հաուզը սահմանել է վարքագծի 4 տիպ, որոնք ղեկավարները կարող են ընտրել իրենց ենթակաների աշխատանքը խթանելու համար:

- Դիրեկտիվ վարքագիծ (նման է կառուցվածքի ձևավորմանը), երբ ենթակային հաղորդում են, թե ինչ առաջադրանքներ նա պետք է կատարի և ինչպես:
- Աջակցող վարքագիծ (նման է հարգալիցությանը), երբ ենթականերին հասկացնում են, որ ղեկավարը հոգ է տանում իրենց մասին և հետևում է իրենց:
- Ներգրավող վարքագիծ, որը հնարավորություն է տալիս ենթկաների վրա ազդեցություն ունեցող որոշումների ընդունման մեջ նրանց ներգրավումը:
- Արդյունքներին հասնելու կողմնորոշվածությամբ վարքագիծ, որը խթանում է աշխատողներին գործել առավելագույնս լավ: Նման վարքագիծը ներառում է դժվար նպատակների սահմանում, աշխատանքի բարձր ցուցանիշների սպասում և ենթակաների հնարավորությունների նկատմամբ վստահության արտահայտում:

Բացահայտելու համար, թե ինչպես խթանել ենթականերին կամ նմանատիպ վարքի տիպերը, ղեկավարը պետք է հաշվի առնի իր ենթակների բնավորությունը և նրանց կողմից կատարվող աշխատանքի բնույթը [1, էջ 238; 3, էջ 590; 4, էջ 156]:

Միևնույն ժամանակ ղեկավարներն իրենց ենթակաների հետ միանման չեն վարվում և կարող են տարբեր աշխատակիցների հետ ձևավորել տարբեր տիպի հարաբերություններ: Ղեկավարի և ենթակաների միջև փոխանակման տեսությունը բնութագրում է ղեկավարների և ենթակների միջև ի հայտ եկող տարբեր տիպի հարաբերությունները, և ցույց է տալիս, թե ղեկավարն ու ենթական ինչ են ստանում նմանատիպ հարաբերություններից և ինչ են տալիս դրա փոխարեն [1, էջ 239]:

Այդ մոդելը կառուցվում է ըստ ղեկավար-ենթակա դիադայի (զույգի)՝, այսինքն ղեկավարների և ենթակաների հարաբերությունների վրա: Չնայած այդ տիպի յուրաքանչյուր հարաբերություն ունիկալ է, այնուամենայնիվ տեսությունը ենթադրում է ղեկավար-ենթակա դիադայում զարգացող հարաբերությունների երկու ընդհանուր տիպի առկայություն:

Որոշ դիադաներում ղեկավարն իր ենթակաների հետ զարգացնում է փոխադարձ վստահությամբ, ակտիվ մասնակցությամբ և ներգրավվածությամբ յուրահատուկ հարաբերություններ: Նման ենթկաների մասին ասում են, որ նրանք «կապի մեջ են»:

Մյուս աշխատողների մոտ ղեկավարի հետ հաստատվում են ավելի ավանդական հարաբերություններ: Նման դիադաներում ենթակաների վրա ազդեցություն ունենալու համար ղեկավարը

հիմնվում է իր ֆորմալ արտոնությունների և կազմակերպությունում իր դիրքի վրա: Նման ենթակաների մասին ասում են, որ նրանք «կապից դուրս են»: Որպես կանոն վերջիններս ավելի քիչ են բավարարված լինում իրենց աշխատանքից և կատարում են իրենց տրված առաջադրանքները ավելի վատ:

Ղեկավարների համար նպատակահարմար է իրենց ենթակաների հետ յուրահատուկ հարաբերությունների հաստատումը, քանի որ «կապի մեջ» կատեգորիայի ենթականերն ամենայն հավանականությամբ կաշխատեն բարձր մակարդակի վրա և ավելի հավատարիմ են իրենց ղեկավարներին, քան նրանք, ովքեր այդ կատեգորիային չեն պատկանում: Բացի դրանից երկու կատեգորիաների միջև կտրուկ արտահայտված տարբերությունները ցանկալի չեն, քանի որ «կապից դուրս» գտնվող ենթակաները բացասական են ընդունում իրենց հարաբերական ցածր կարգավիճակը և իրենց նկատմամբ այլ վերաբերմունքը:

Որոշ հետազոտողներ կասկածի են դրել այն պնդումը, որ կառավարումը կարևոր է աշխատողներին, խմբերին և կազմակերպություններին օգնություն ցուցաբերելու տեսանկյունից: Երբեմն անկախ ղեկավարի գործունեության աշխատակիցները միևնույն է դժգոհ են իրենց աշխատանքից կամ չեն գործում բարձր մակարդակի վրա: Այլ դեպքերում ենթակաները գոհ են իրենց աշխատանքից, հասնում են իրենց առջև դրված նպատակներին և գործում են բարձր մակարդակով, չունենալով իրենց վրա զգալի ազդեցություն ցուցաբերող ղեկավար:

Կազմակերպական վարքի երկու ուսումնասիրողներ, Սթիվեն Քերրը և Ջոն Ջերմիերը, պարզել են, որ երբեմն այն ազդեցությունը, որը ղեկավարները ցուցաբերում են կազմակերպության վրա սահմանափակվում է այսպես կոչված սուբստիտուտներով (փոխարինիչներով) և կառավարման չեզոքացուցիչներով [3, էջ 592; 1, էջ 243]:

Կառավարման սուբստիտուտը դա մի բան է, որը գործում է ֆորմալ ղեկավարի փոխարեն և դարձնում կառավարումը ոչ հարկավոր: Կառավարման չեզոքացուցիչը դա այն է, ինչը խանգարում է ղեկավարին ազդեցություն ցուցաբերել և ամորտիզացնում է նրա ջանքերը: Երբ առկա են այդպիսի չեզոքացուցիչներ ղեկավարի ազդեցությունը թուլանում է: Այս դեպքում ղեկավարը քիչ բան կարող է անել, իսկ փոխարինել իր ջանքերը ոչնչով հնարավոր չէ (այսինքն սուբստիտուտները բացակայում են):

Որպես կառավարման սուբստիտուտ կամ չեզոքացուցիչ կարող են գործել ենթակաների, աշխատանքի, խմբի կամ ընդհանուր առմամբ կազմակերպության որոշ առանձնահատկությունները:

Կառավարման սուբստիտուտները օգտակար են կազմակերպությունների համար, քանի որ ազատում են ղեկավարի ժամանակը ուրիշ պարտականությունների կատարման համար: Եվ հակառակը, կառավարման չեզոքացուցիչները անցանկալի են, քանի որ ղեկավարների ազդեցությունը դրանց պատճառով թուլանում է:

Այն, որ սուբստիտուտները և չեզոքացուցիչները գոյություն ունեն հնարավոր է ստեղծի տպավորություն, որ կառավարումը ոչ այնքան կարևոր է: Սակայն չնայած դրանց առկայությանը, հենց կառավարիչներն են մտցնում կազմակերպության գործունեության մեջ փոփոխություններ և կարող են ունենալ դրական ազդեցություն ենթակաների հարաբերությունների տիպերի և վարքի վրա:

Կառավարման բնագավարի հետազոտող Բերնարդ Բասսը առաջարկել է մի տեսություն, որը վերլուծում է, թե ինչպես են ղեկավարները երբեմն ցուցաբերում զգալի ազդեցություն իրենց հետևորդների և իրենց կազմակերպությունների վրա, փաստացի ձևափոխելով դրանք [3, էջ 594; 1, էջ 246]:

Բասսի կարծիքով ձևափոխող կառավարումը (transformational leadership) իրականացվում է այն դեպքում, երբ ղեկավարը ձևափոխում է իր ենթականերին երեք կարևոր ուղղություններով՝

1. Ձևափոխող ղեկավարները բարձրացնում են ենթակաների, իրենց կողմից կատարվող առաջադրանքների կարևորության և դրանց բարձր մակարդակում իրականացման անհրաժեշտության գիտակցումը:

2. Ձևափոխող ղեկավարները հասնում են նրան, որ ենթակաները ձգտեն անձնական աճի, պրոֆեսիոնալ կատարելագործման և նվաճումների:
3. Ձևափոխող ղեկավարները մոտիվացնում են իրենց ենթականերին աշխատել ի օգուտ կազմակերպությանը, այլ ոչ միայն իրենց սեփական շահերի:

Ձևափոխող ղեկավարները խարիզմատիկ անձիք են: Նրանք ունեն իրենց պատկերացումը այն բանի մասին, թե ինչպես կարելի է բարելավել իրադրությունը կազմակերպությունում համեմատած ներկա իրավիճակի հետ: Խարիզմատիկ ղեկավարները ստույգ են հասցնում իրենց հասկացումը հետևորդներին և ի շնորհիվ նրանց մոտ ծագած էնտուզիազմի ստանում են իրենց գաղափարների ակտիվ աջակցություն: Որպեսզի փոխանցել էնտուզիազմ, խարիզմատիկ ղեկավարները որպես կանոն տիրապետում են իրենց ոժերի հանդեպ բարձր վստահությամբ և բարձր ինքնագնահատմամբ, ինչը հորդորում է իրենց ենթականերին ավելի շատ հարգել նրանց և հիանալ նրանցով [5, էջ 505; 1, էջ 247]:

Ձևափոխող կառավարիչը համոզում է ենթականերին տեսնել խնդիրները այլ տեսանկյունից և զգալ, որ նրանք որոշ չափով նույնպես կրում են պատասխանատվություն դրանց լուծման համար: Ձևափոխող կառավարումը կարող է խրախուսել ենթականերին հասնելու աշխատանքում ավելի բարձր արդյունքների և միաժամանակ օժանդակել նրանց անձնական և պրոֆեսիոնալ կատարելագործմանը և աշխատանքից ավելի բարձր բավարարվածությանը հասնելուն: Ձևափոխող կառավարումը կարող է լինել հատկապես կարևոր ծանր կարգավիճակում գտնվող և նպատակներին չհասնող կազմակերպությունների համար: Հաճախ այդպիսի ձեռնարկությունը հրավիրում է նոր կողմնակի գործադիր տնօրենի, որպեսզի նա օգնի ձևափոխել իրեն [6, էջ 250]:

Կազմակերպության բոլոր մակարդակների ղեկավարները օգնում են ենթականերին, խմբերին և կազմակերպությանը հասնելու իրենց նպատակներին և կարող են կազմկակերպության գործունեության վրա ամենաուժեղ ազդեցությունը ունենալ: Հոդվածում դիտարկված հարցերից կարելի է անել հետևյալ եզրակացությունները. Արդյունավետ գործող ղեկավարները ծախսում են իրենց ժամանակի հիմնական մասը իրենց ենթակաների և աշխատակիցների հետ փոխազդման վրա, նրանք՝

- սովորաբար, կրթված, իշխողական, ակտիվ և անկեղծ են, վստահ են իրենց ուժերի վրա, ունակ են դիմադրել սթրեսներին, հասուն են և տիրապետում են անհրաժեշտ գիտելիքների:
- մոտիվացնում են իրենց ենթականերին տրամադրելով նրանց այնպիսի արդյունքներ, որոնք ենթակաները ցանկանում են ստանալ:
- ցույց են տալիս ենթականերին ուղիները, որոնք կբերեն նրանց նպատակներին հասնելուն, վերացնում են խոչնդոտները, որոնք կարող են իհայտ գալ այդ ճանապարհին:
- շտկում են իրենց վարքագծի տիպերը այնպես, որպեսզի հնարավոր լինի հաշվի առնել ենթակաների բնավորությունը, որոնց հետ նրանք համագործակցում են, և այն աշխատանքի բնույթը, որը նրանք կատարում են:
- ձևավորում են իրենց ենթակաների հետ բարձր որակի հարաբերություններ:
- բարձրացնում են ենթակաների կողմից կատարվող առաջադրանքների կարևորության մասին նրանց իրազեկվածությունը, համոզում են ենթականերին որ իրենց հարկավոր է մասնագիտորեն աճել աշխատանքի ընթացքում:

Р. А. Сардарян

Эффективное руководство как фактор влияющий на организационное поведение

Различные подходы к руководству дополняют друг друга, и ни одна теория не описывает «единственный» или «правильный» способ, позволяющий быть или стать хорошим руководителем. Каждая из теорий останавливается на своих наборах вопросов, и только взятые вместе они передают богатую картину того, что делает руководство эффективным. В рамках статьи основное внимание уделяется сущности

руководства в организации. Даётся определение руководству и обсуждаются различные типы руководителей, действующих в организациях. Исследованы различные подходы к руководству: подход на основе характерных особенностей, поведенческий подход, теория пути и цели, теория обмена между руководителем и подчиненными. Проанализированы некоторые новые темы в теории руководства и исследованиях: гендерный фактор в руководстве; трансформирующее и харизматическое руководство.

***Ключевые слова**: руководство, эффективность, управление, организационное поведение, персонал, предприятие*

R. Sardaryan

Effective leadership as a factor affecting organizational behavior

Different approaches to leadership complement each other, and no single theory describes the "correct" or "only" way to become or to be a good leader. Each of the theories stops on their sets of issues, and only taken together they convey a rich picture of what makes effective leadership. The article focuses on the essence of leadership in the organization. The definition of leadership is given also it discusses different types of leaders operating in organizations. It investigated different approaches to management: trait approach, behavioral approach, path–goal theory, leader-member exchange theory. It analyzed some new themes in leadership theory and research: the gender factor in leadership; charismatic and transformational leadership.

***Keywords:** leadership, efficiency, management, organizational behavior, personnel, company*

Գրականություն

1. Джордж Дж.М., Джоунс Г.Р. «Организационное поведение. Основы управления», М.: ЮНИТИ-ДАНА 2012. — 463 с. — Перевод с англ, под ред. проф. Е.Л. Климова.
2. Аширов Д.А. «Организационное поведение» М. : ТК Велби, 2006. – 360 с.
3. Дафт Ричард Л. «Менеджмент» СПб: Питер, 2007. — 864 с.
4. Карташова Л.В. Никонова Т.В. Соломанидина Т.О. «Организационное поведение» М.: ИНФРА-М, 2001 – 220 с
5. Виханский О.С., Наумов А.И. «Менеджмент» — 4-е изд., перераб. и доп. — М.: Экономистъ, 2006. — 670 с.
6. Армстронг М. «Практика управления человеческими ресурсами» 8-е изд. — СПб.: Питер, 2004. — 825 с.

Հովհաննիսյան Արա Արամի
տնտ.թ. դոցենտ



Սարդարյան Ռոմեն Արթուրի
ԷՄ 41 խմբի մագիստրանտ



ՀՏԴ 339.5.01.54

ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Լ.Ա. Մուրադյան
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան

Առանցքային բառեր. *արտահանում, ներմուծում, արտաքին տնտեսական հարաբերություններ, առևտուր, արտահանման խթանում:*

Ներմուծման փոխարինումը տնտեսության առանձին ճյուղերի զարգացման արդիական գաղափարներից մեկն է, որի իրագործման միջոցով զարգացող երկրները փորձում են հասնել զարգացածներին: Ներմուծման փոխարինման քաղաքականության հիմնական առանձնահատկությունն է արտադրանքի ներմուծման սահմանափակումը, ինչը բերում է տնտեսության ինդուստրացման ակտիվացման: Այս աշխատանքում ուսումնասիրված են տնտեսության ծրագրեր, որոնք կկարողանան համակողմանիորեն գնահատել երկրի և դրա առանձին տարածքների մրցակցային առավելությունները, մարդկային, հանքահումքային արտադրական ռեսուրսները և այլն, ինչը թույլ կտա էականորեն մեծացնել Հայաստանի վարչատարածքային միավորների տնտեսական ներուժի զարգացման արդյունավետությունը: Նաև ուսումնասիրելով արտահանման և ներմուծման հիմնախնդիրները կարելի է հանգել հետևյալին ուսումնասիրելով և զարգացնելով ներքին շուկան, պետությունը կկարողնա ինտեգրվել արտաքին շուկաներ միայն վերելքներ ապրելով:

Յուրաքանչյուր երկրի տնտեսական աճը պայմանավորող առաջնային արտաքին գործոններից է տվյալ երկրի արտաքին առևտուրը: Արտաքին առևտուրը երկրների միջազգային տնտեսական հարաբերությունների կարևորագույն ձևն է, որն առանցքային դեր է խաղում երկրի տնտեսության զարգացման համակարգում և համաշխարհային տնտեսության ձևավորման համար կարևոր նախադրյալներից մեկն է: Մրցունակ արտահանման գնահատման առաջին կարևոր քայլը մակրոտնտեսական այդ բաղադրիչը պայմանավորող գործոնների ազդեցության չափի բացահայտումն է: Վերջինս թույլ կտա հասկանալ, թե ինչպես կարելի է փոխել արտահանման ծավալներն ու կառուցվածքը, որպեսզի ստացվեն առավելագույն օգուտներ: Բացահայտված կապերը հնարավորություն կտան կատարելու նաև կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ կանխատեսումներ՝ ըստ մի քանի սցենարային մոտեցումների: Արտահանման կանխատեսելի ծավալները կօգնեն հստակեցնել այն հիմնական գործոնները, որոնց միջոցով քաղաքականություն մշակող և իրականացնող օղակները (Կառավարություն, Կենտրոնական բանկ և այլն) կարող են ազդել արտահանման ծավալների վրա՝ դրանով ապահովելով արտաքին աշխարհի հետ փոխշահավետ համագործակցությունը:

Հայաստանի տնտեսության զարգացման քննարկումների կենտրոնում սովորաբար աշխարհագրական մեկուսացվածության խնդիրն է: Դա մի կողմից՝ բնական է երկրի լեռնային տեղադրվածության և ծովային ելք չունենալու պատճառով, մյուս կողմից՝ բացատրվում է արհեստական տնտեսական շրջափակմամբ: Շրջափակման ազդեցությունը ՀՀ արտաքին առևտրի վրա փորձել են հաշվարկել Լ. Ֆրենկմանը, Եվ. Պոլյակովը և Կ. Ռևենկոն [1]: Հիմնվելով ստանդարտ վիճակագրական մոդելների վրա՝ նրանք գնահատել են արտահանման ծավալների կամ արտաքին առևտրի ծավալների նվազման հետևանքով առաջացած կորուստները կամ վնասները, իսկ ՀՀ արտաքին առևտուրն այլ երկրների արտաքին առևտրի հետ համեմատելու համար օգտագործել են երկու հայտնի՝ տնտեսության բացվածության և գրավիտացիայի առևտրային մոդելները: Նրանք գնահատել են առևտրի ծավալների և եկամուտների մակարդակը՝ հիմք ընդունելով

երկրի տարածքի և աշխարհագրական առանձնահատկությունների միջև գոյություն ունեցող առնչությունները:

Այլ կերպ ասած, Հայաստանի արտաքին տնտեսական քաղաքականության առաջնային նպատակը պետք է լինի հնարավորին չափ խորությամբ ինտեգրվել համաշխարհային տնտեսությանը: Համաշխարհային տնտեսությանն ինտեգրվելու լավագույն միջոց է միջազգային առևտրի ակտիվ մասնակից դառնալը: Հայաստանը կարճ ժամանակամիջոցում կկարողանա մուտք գործել համաշխարհային շուկա, եթե իրականացնի ճիշտ արտաքին առևտրային քաղաքականություն: Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրային քաղաքականությունը ձևավորվել և իրականացվում է ազատական սկզբունքների հիման վրա: Ընդհանուր առմամբ, ՀՀ արտաքին առևտրային քաղաքականության գլխավոր և նախապատվելի ուղղություններն են.


1) համաշխարհային տնտեսության մեջ ՀՀ ինտեգրացումը,
2) արտահանման խթանումը,
3) առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդի կրճատումը,
4) աշխարհի զանազան երկրների հետ միջպետական տնտեսական համագործակցության ընդլայնումը,
5) արտաքին առևտրային գործունեության արդյունավետությունը բարձրացնող համապատասխան ենթակառուցվածքների զարգացումը [2]:

Համաշխարհային տնտեսության մեջ ինտեգրման գործընթացի արագացման տեսանկյունից Հայաստանի Հանրապետության համար կարևորվում է առևտրային համագործակցության զարգացման և որակական նոր հիմքերի վրա խորացման անհրաժեշտությունը ինչպես ԱՊՀ շրջանակներում, այնպես էլ նրա շրջանակներից դուրս [3]: Այսպես, ԱՊՀ-ի որպես միության զարգացումը կնպաստի անդամ երկրների միջև առևտրային արգելքների վերացմանը, որը կմեծացնի երկրների միջև իրականացվող ապրանքաշրջանառության ծավալները: Իսկ Եվրամիության հետ առևտրային համագործակցության առումով կարևորվում է Թուրքիայի հետ առևտրային կապերի զարգացումը, երկու երկրների միջև առկա սակագնային և ոչ սակագնային խոչընդոտների նվազեցումը և այլն: Ընդհանուր առմամբ, ՀՀ կառավարությունը մի շարք երկրների հետ կնքել է բազմաթիվ երկկողմ առևտրային համաձայնագրեր առևտրի այս կամ այն ռեժիմի ձևավորման վերաբերյալ:

Արտահանման խթանման և համայնքների համաչափ զարգացման գործում փոքր չէ նաև միջազգային կազմակերպությունների դերը: Որոշ խնդիրներ, որոնք չեն կարող լուծում ստանալ մասնավոր հատվածի կամ տեղական ուժերով, լուծվում են այդ կազմակերպությունների օգնությամբ: Դրանց շարքում առանձնանում են հատկապես շրջակա միջավայրի պահպանության ծրագրերը: Մասնավորապես, ԵԱՀԿ-ի, ՄԱԿ-ի գլոբալ բնապահպանական հիմնադրամի համաֆինանսավորմամբ և ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության, Սյունիքի կառույցի օժանդակությամբ տարածաշրջանում իրականացվել են անտառապատման և բնապահպանական այլ աշխատանքներ:

Վերամշակող ձեռնարկությունների զարգացման նպատակով անհրաժեշտ է անդրադառնալ նաև երկրի առանձին մարզերի տնտեսության կառուցվածքի և զարգացման առաջնահերթություններին: Հաշվի առնելով հանքահումքային ռեսուրսների սահմանափակ լինելու հանգամանքը՝ հրատապ է դառնում ոչ հանքարդյունաբերական ճյուղերի և ձեռնարկությունների ստեղծման, տնտեսության բազմազանեցման ճանապարհով նոր աշխատատեղերի ու լրացուցիչ եկամուտների ապահովումը: Տնտեսության բազմազանեցման ցանկացած ծրագիր պետք է համակողմանիորեն գնահատի երկրի և դրա առանձին տարածքների մրցակցային առավելությունները, մարդկային, հանքահումքային արտադրական ռեսուրսները և այլն, ինչը թույլ կտա էականապես մեծացնել Հայաստանի վարչատարածքային միավորների տնտեսական ներուժի զարգացման արդյունավետությունը: Արտահանման խթանման գործում էական է նաև պետական

հովանավորության դերը: Արտաքին շուկաներ մուտք գործող ընկերություններն իրենց ճանապարհին հաճախ խոչընդոտների են հանդիպում, այդ իսկ պատճառով մի շարք զարգացած և զարգացող երկրներ մշակել և իրականացնում են արտահանման խրախուսման ծրագրեր՝ հիմնականում համապատասխան լիազորություններով օժտված առանձնացված մարմնի միջոցով: Ստեղծվում են նաև արտահանման տեղեկատվական կենտրոններ, որոնք էլ հիմնականում կատարում են արտահանման խրախուսման ծրագրերի իրագործման առաքելությունը: Դրանք աջակցում են արտահանում իրականացնող ձեռնարկություններին, տրամադրում են դրամաշնորհներ, կազմակերպում են ցուցահանդեսներ և տոնավաճառներ, ապահովում են ընկերությունների մասնակցությունն այդ միջոցառումներին և այլն: Հայաստանում որպես այդպիսի մարմնի օրինակ կարող է ծառայել հետևյալ կառույցը (նկար).



Նկար 1. Արտահանման խթանման մասնագիտացված կառույցի ընդհանուր պատկերը

Ընդհանուր առմամբ ակնհայտ է, որ արտահանման ռազմավարության վրա էական ազդեցություն կարող է ունենալ արտաքին միջավայրը: Վերջինիս ազդեցության հիմնական գործոնները կարող են քաղաքական, տնտեսական, իրավական և այլ բնույթ կրել: Դրանք ինչպես առանձին-առանձին, այնպես էլ միասին կարող են դառնալ արտահանումը խթանող կամ արգելակող գործոններ: Նշենք նաև, որ մի շարք երկրների դեպքում, ինչպիսին նաև Հայաստանն է, արտահանման առումով կարևորվում են աշխարհագրական դիրքը, արժութային ռիսկերը, մշակութային առանձնահատկությունները, սփյուռքի առկայությունը, ինչպես նաև արտահանման համար նախընտրելի համարվող երկրում արտաքին առևտրի բնագավառում ձևավորված ավանդույթներն ու իրականացվող քաղաքականությունը: Հանրապետությունում

արտահանումը մեթոդաբանական ճիշտ հիմքերի վրա դնելու նպատակով անհրաժեշտ է քանակական վերլուծության մեթոդների օգտագործմամբ կազմել նախընտրելի երկրների ցանկը և, ըստ ներկայացված յուրաքանչյուր երկրի ու ազդեցության նշված գործոնների, կատարել գնահատում և համեմատական վերլուծություն: Ընդ որում, մատրիցում ներառվող գործոնների առումով որևէ սահմանափակում չկա: Ավելին, որքան շատ լինեն ընդգրկված գործոնները, այնքան կմեծանա արտահանման երկրների ընտրության արդյունավետությունը:

Արտահանման վրա արտաքին միջավայրի ազդեցության տնտեսական գործոններից առաջին հերթին անհրաժեշտ է առանձնացնել այնպիսի ցուցանիշներ, որոնք բնութագրում են տնտեսական իրավիճակը տվյալ երկրում և թույլ են տալիս ուղղակի կամ անուղղակի կերպով գնահատել որևէ այլ երկրից ապրանքներ ներմուծելու նրա հակվածությունը: Այդ առումով, հիմնական կարող են լինել տնտեսության կառուցվածքը, տնտեսական աճի կամ գնաճի տեմպերը, մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ մակարդակը բնութագրող ցուցանիշները:

Հայաստանի Հանրապետության համար առանձնահատուկ խնդիր է դարձել հատկապես գյուղմթերքների վերամշակմամբ զբաղված ընկերությունների գործունեության ընթացքում ծագող ռիսկերի զսպումն ու արդյունավետ կառավարումը: Պայմանավորված գյուղատնտեսական արտադրության սեզոնայնությամբ, բերքատվության պարբերականությամբ, բնական պայմաններով, կապիտալ ներդրումների հատուցման ցածր մակարդակով՝ ոլորտն անընդհատ առնչվում է մեծ ռիսկերի հետ, որոնց կառավարումը, ի տարբերություն տնտեսության այլ ճյուղերի, չափազանց դժվար է և, ենթադրում է պետական համակողմանի աջակցություն:

Աշխարհի առաջավոր երկրներում արտահանման քաղաքականությունը դիտվում է որպես տնտեսական զարգացման ռազմավարական ուղղություն և դրան ակտիվ աջակցություն է ցույց տրվում պետության կողմից: Հիմնվելով այդ ասպարեզում առկա միջազգային փորձի վրա՝ Հայաստանի համար հատկապես կարևոր է դառնում հատուկ մասնագիտացված կառույցի ստեղծման անհրաժեշտությունը: Ըստ էության, արտահանման խթանման մասնագիտացված կառույցը «պետություն–մասնավոր հատված» համագործակցությունը կազմակերպող կարևորագույն օղակ է, որի հիմնական գործառույթները պետք է լինեն արտահանման կողմնորոշում ունեցող վերամշակող կազմակերպություններում թողարկվող արտադրանքի ծավալի մեծացման խթանումը և ներկրվող ապրանքները տեղական արտադրությամբ փոխարինման գործարար ծրագրերի մշակումը: Մասնավորապես, հանրապետության գյուղատնտեսության ոլորտում գործունեության գերակա ուղղություն պետք է համարել օրգանական գյուղատնտեսական հումքի վերամշակումը, բարձրորակ ալկոհոլային խմիչքների՝ հատկապես կոնյակի, հյութերի խտանյութի, տոմատի մածուկի, պահածոների, չոր մրգերի արտադրության ընդլայնումը:

Արտահանման խթանման մասնագիտացված կառույցը պետք է նպաստի նաև վերամշակող ընկերություններում արտադրատնտեսական հարաբերությունների կատարելագործմանը, ինչպես նաև դրանց նպատակամետ գործունեությունն ապահովող այլ ոլորտների համալիր զարգացման ծրագրերի մշակմանն ու իրականացմանը: Կառույցի գործունեության կարևորագույն ուղղություններից մեկը պետք է դառնա արտոնյալ պայմաններով արտահանման վարկավորումը: Ներկայումս, ֆինանսական ռեսուրսների չափազանց թանկ լինելու պայմաններում, մասնագիտացված կառույցի աջակցությունն արտահանմանը կողմնորոշված վերամշակող կազմակերպություններին պետք է իրականացվի ոչ միայն բյուջետային արտոնյալ վարկերի, այլ նաև դրանց զարգացման ու արդիականացման պետական երաշխիքների տրամադրմամբ:

Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետությունում արտահանման ներուժի զարգացման և արտաքին տնտեսական արդյունավետ քաղաքականության իրականացման համար անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալ սկզբունքներով:

1. Ներկայումս Հայաստանի արտահանման հիմնական ոլորտը հանքարդյունաբերությունն է: Հանրապետության արտահանման կառուցվածքում ունենալով ամենամեծ տեսակարար կշիռը՝ ոլորտի հանքավայրերը չեն շահագործվում ժամանակակից տեխնոլոգիաներով և ցանկալի արդյունավետությամբ, թողարկվում է միայն պղնձի և մոլիբդենի խտանյութ, որն արտաքին շուկաներում իրացվում է չափազանց ցածր գներով: Ավելին, բացի նշվածներից, հանքավայրերում կան հազվադեպ հանդիպող թանկարժեք մետաղներ, որոնց մի մասն ընդհանրապես չի կորզվում և, կուտակվելով պոչամբարներում, թունավորում է շրջակա միջավայրը՝ ստեղծելով էկոլոգիական նոր խնդիրներ: Հանրապետության հանքարդյունաբերության զարգացման և ոլորտի արտահանման ներուժի ընդլայնման հիմնական ուղի պետք է դառնա ոչ թե խտանյութի ստացումը, այլ հնարավոր վերջնական արտադրանք ստեղծող արտադրությունների զարգացման ճանապարհով պատրաստի արդյունքի թողարկումն ու իրացումը:

2. Հայաստանի արտահանման ներուժի զարգացման կարևորագույն ուղղություններից պետք է լինի գյուղատնտեսական արտադրանքի վերամշակմամբ զբաղվող ձեռնարկությունների համալիր զարգացումը, որոնց գործունեության սահմանների հնարավոր առավելագույն ընդլայնումը թույլ կտա ոչ միայն էականորեն մեծացնել արտահանման ծավալները, այլև նպաստել հանրապետության տարածքային զարգացման անհամաչափությունների համահարթեցմանը և ՀՆԱ կառուցվածքի բարելավմանը: Սակայն այդ նպատակին հասնելու համար վերամշակող յուրաքանչյուր ձեռնարկություն պետք է ունենա իր գործունեությանը հատուկ արտահանման ռազմավարական համալիր ծրագիր, որը երկարաժամկետ հեռանկարում ենթադրում է սեփական արտադրության շարունակական արդիականացում և միջազգային շուկաների պահանջներին համապատասխան արտադրանքի թողարկում: Ակնհայտ է, որ հատկապես Հայաստանի պայմաններում այդպիսի ծրագրերի իրագործումը, առանց պետական համակարգված աջակցության, գրեթե բացառվում է: Այդ աջակցությունը պետք է կատարվի վարկավորման արտոնյալ ռեժիմների սահմանման, ապահովագրական ծառայությունների ձևավորման, նորամուծությունների խթանման, արտադրության ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործման, իրացման պայմանների կատարելագործման, տրանսպորտային ուղիների արդիականացման, արտաքին շուկաներ ներթափանցելու գործընթացների պարզեցման, որակի միջազգային չափորոշիչների ներդրման ճանապարհով:

3. Գյուղատնտեսական հումքի վերամշակման ոլորտի պետական աջակցության հիմնական գործառույթները պետք է դառնան.

- արտաքին առևտրի ռազմավարության հստակեցումը և արտահանման շուկաներում իրադրության փոփոխությունների մասին ձեռնարկություններին տեղեկությունների տրամադրումը,
- գործարար տեղեկատվության պատրաստումն ու տարածումը, գիտագործնական և մարքեթինգային ուսումնասիրությունների ընդլայնումը,
- մասնագետների պատրաստմանն ու նոր տեխնոլոգիաների ներդրմանն օժանդակությունը,
- շուկայի պահանջներին արագ արձագանքող արտադրությունների ընդլայնման խթանումը,
- վերամշակող ընկերությունների, հատկապես՝ գինիների, մուրաբաների, ջեմերի, կոնֆիտյուրների, օշարակների, չրերի, համեմունքների, ազգային աղանդերի, ըմպելիքների, խոտաբույսերի, դեղաբույսերի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խթանումը,
- ներքին և արտաքին շուկաներում վերամշակումից ստացված արտադրատեսակների մրցակցության մակարդակը բարձրացնելու նպատակով փոխշահավետ առևտրային կապերի ընդլայնումը, ցուցահանդեսներին մասնակցության, տեղեկատվական միասնական դաշտի ձևավորման և տնտեսավարող սուբյեկտներին տեղեկատվության մատչելիության ապահովումը:

4. Լինելով Հայաստանի տնտեսության արտահանման կարևոր ուղղություններից մեկը՝ սննդամթերքի արտադրությունը պետք է մեծ դեր ունենա հանրապետության գյուղատնտեսության զարգացման խնդիրների լուծման գործում: Մասնավորապես, կոնյակագործության բնագավառում ներկայումս մթերվում է խաղողի բերքի շուրջ 60 % և այստեղ աշխատում է ավելի քան տասը հազար մարդ: Ուստի ոլորտի զարգացման հիմնական խնդիրը պետք է լինի արտադրանքի բարձր որակի ապահովումը և հայկական կոնյակի վարկանիշի պահպանումը: Այլ կարևոր և համալիր լուծում պահանջող խնդիրներից են հումքային բազայի կատարելագործումն ու ամրապնդումը, սերտիֆիկացման աշխարհագրության ընդլայնումը, տրանսպորտային հաղորդակցության ուղիների արդիականացումը, արտաքին շուկաներում մարքեթինգի ապահովումը և այլն:

5. Արտաքին տնտեսական կապերի առումով, Ռուսաստանի Դաշնությունը եղել և մնում է Հայաստանի գլխավոր քաղաքական և տնտեսական գործընկերը: Ռուսաստանի շուկան խոշորագույններից է, որի հետ ներկայումս ձևավորվել են հարաբերականորեն կարգավորված տրանսպորտային հաղորդակցության կապեր: Եվրասիական Տնտեսական Միությանը Հայաստանի անդամակցության պարագայում դրանք ավելի կամրապնդվեն, ինչն, ըստ էության, կդառնա ինչպես տնտեսական կապերի առավել խորացման, այնպես էլ արտահանման ծավալների ավելացման կարևորագույն պայման: Հանքարդյունաբերության արտադրանքը խտանյութի տեսքով, ինչպես նաև թանկարժեք քարերը հիմնականում արտահանվում են եվրոպական երկրներ, իսկ գյուղատնտեսական արտադրանքի իրացման աշխարհագրությունը սահմանափակվում է հետխորհրդային մի քանի երկրներով՝ Ռուսաստան, Վրաստան, Ուկրաինա և Բելառուս: Հարկ է նշել, որ արտահանվող հայկական գյուղատնտեսական արտադրանքը, փոքր աշխարհագրությունից բացի, բազմազանեցման չափազանց ցածր մակարդակ ունի, ինչը զգալիորեն մեծացնում է հանրապետության կախվածությունն արտաքին շուկաներից: Նշված բացասական երևույթները բացառելու համար անհրաժեշտ է մեծ պահանջարկ վայելող մշակաբույսերի, մրգերի, պտուղների և գյուղմթերքի վերամշակումից ստացվող այլ արտադրանքի տեսականու ընդլայնում և արտադրական նոր տեխնոլոգիաների ներդրում:

6. Արտաքին տնտեսական կապերի խորացումը, արտահանման ծավալների մեծացումը, արտաքին շուկաների աշխարհագրության ընդլայնումը, նոր տեխնոլոգիաների ներդրումը, արտահանման կառուցվածքի բարելավումը կապված են մեծ ռիսկերի հետ, որոնց արդյունավետ կառավարումը պահանջում է արտահանման գործընթացի բոլոր մասնակիցների շահերի պաշտպանություն և մրցակցային հավասար պայմանների ապահովում: Ռիսկերի կառավարման առավել բարդ խնդիրները ծագում են հատկապես գյուղատնտեսության ոլորտում և դրա հումքը վերամշակող կազմակերպություններում: Այդպիսի խնդիրների լուծման համար անհրաժեշտ է նախապես գնահատել և համադրել «արտադրող-վերամշակող-մատակարարող-սպառող» շղթայի մասնակիցների հնարավոր ռիսկերը, որոնց վերացման կամ մեղմման նպատակով հարկ է ստեղծել ապահովագրական համապատասխան ծառայություններ:

7. Հայաստանի պայմաններում գյուղատնտեսության ասպարեզում ռիսկերի արդյունավետ կառավարումը պահանջում է.

- ապահովագրական համակարգի ներդրում,
- հակակարկտային համակարգի վերականգնման ծրագրի իրագործում,
- ռեսուրսախնայողական տեխնոլոգիաների օգտագործում,
- երաշտի և սակավաջրության պայմաններում ոռոգման ջրի սպառման հատուկ ռեժիմների սահմանում,
- հակահեղեղային և սողանքների կանխարգելիչ միջոցառումների իրականացում,
- գյուղատնտեսական բերքի կանխատեսման ու ծրագրավորման համակարգի ձևավորում:

8. Արտահանման գործընթացն արդյունավետ կազմակերպելու և հնարավոր ռիսկերից ենթադրվող հետևանքները հեշտորեն վերացնելու համար, առաջին հերթին, անհրաժեշտ է արտահանման շուկայի ճիշտ ընտրություն: Այս հանգամանքը հատկապես Հայաստանի վերամշակող կազմակերպությունների համար սկզբունքային նշանակություն ունի, քանի որ հանրապետությունում թողարկվող արտադրանքն իր որակական հատկություններով կարող է դեռևս լիարժեքորեն չբավարարել միջազգային շուկայում ձևավորված պահանջները: Այդ առումով տնտեսավարող սուբյեկտի կողմից արտահանման շուկայի ճիշտ ընտրությունը դառնում է հետագա արդյունավետ գործունեություն իրականացնելու կարևոր պայման: Միևնույն ժամանակ, հարկ է օգտվել քանակական վերլուծության ժամանակակից ապարատից, քանի որ միջազգային շուկայում առկա պայմանները և իրադրության արագ փոփոխությունները պայմանավորված են բազմաթիվ գործոններով, որոնց ազդեցության սահմանները հնարավոր է որոշել դրանց պարամետրերի քանակական համադրության արդյունքում միայն:

9. Արտահանման շուկաների ընտրության հիմնավորվածությունը մեծապես կախված է տրանսպորտային հաղորդակցության ուղիների վիճակից: Այս տեսանկյունից, Հայաստանը բախվում է որոշակի դժվարությունների, որոնց հաղթահարման համար անհրաժեշտ է այդ ուղիների կատարելագործում: Հանրապետությունում ներկայումս արտահանման առավել նպատակահարմար միջոց է դարձել ավտոմոբիլային տրանսպորտը: Վերջինիս արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է միջպետական նշանակության ավտոճանապարհային ցանցի ընդլայնում և պահպանում: Այսօր արդեն իսկ սկսված են «Հյուսիս-հարավ» ավտոմայրուղու շինարարության խոշորածավալ ծրագրի իրականացման աշխատանքները: Մեր կարծիքով, պետք է ստեղծել նաև նպատակային հիմնադրամ, որը բացառապես կզբաղվի ավտոճանապարհների շահագործմամբ և պահպանմամբ: Բնականաբար, այդպիսի հիմնադրամի ֆինանսավորման համար անհրաժեշտ կլինի միասնական նպատակային հարկի սահմանումը, սակայն սկզբնական փուլերում որպես ֆինանսավորման հիմնական աղբյուր կարող են ծառայել ավտոտրանսպորտային միջոցների շահագործման և բեռնափոխադրումների դիմաց գանձվող գումարները:

10. Արտահանման ներուժի զարգացման և դրա հետ կապված գործընթացների համակարգման նպատակով անհրաժեշտ է ստեղծել համապատասխան լիազորություններով օժտված հատուկ մասնագիտացված կառույց, որի հիմնական գործառույթները պետք է լինեն հանրապետության արտահանման ընդհանուր ռազմավարության մշակումը, արտահանման կողմնորոշում ունեցող վերամշակող կազմակերպությունների գործունեության խթանումը, ներկրվող ապրանքատեսակները հնարավորինս տեղական արտադրությամբ փոխարինման գործարար նախագծերի պատրաստումը, ձեռնարկություններում դրանց ներդրման և իրագործման գործընթացներին աջակցումը, արտահանող կազմակերպություններում արտադրատնտեսական հարաբերությունների կատարելագործումը, ինչպես նաև վերջիններիս գործունեությանը նպաստող այլ արտադրությունների զարգացման ուղղությունների նախանշումը: Սկզբնական շրջանում արտահանման խթանման մասնագիտացված կառույցն իր գործունեությունը պետք է ծավալի հանքարդյունաբերության և գյուղատնտեսության հումքի վերամշակմամբ զբաղվող ձեռնարկությունների արտահանման ներուժի զարգացման և ընդլայնման, հատկապես մետաղամալուխային արտադրանքի և ճշգրիտ սարքերի թողարկման, օրգանական հումքի մշակման, հյութերի, խտանյութերի և պահածոյացված սննդամթերքի պատրաստման, ալկոհոլային խմիչքների նոր տեսակների ստեղծման և դրանց որակական հատկանիշների բարելավման, ինչպես նաև չոր և շաքարածո մրգերի արտադրության կազմակերպման ուղղությամբ:

Ավարտելով աշխատանքը՝ կարելի է հանգել մի քանի եզրահանգումների. միջ ազգային առևտուրը մի գործընթաց է, որի ժամանակ երկրները փորձում են հնարավորինս բավարարել իրենց երկրի պահանջմունքները կամ շահերը: Ներկայումս երկրները պետք է համաշխարհային շուկա ներթափանցեն բավա-

կանին երկար կշռադատելուց հետո միայն, որ միջազգային առևտուրը բացասաբար չազդի իրենց տնտեսության վրա, մասնավորապես, այդ երկրներում չառաջանա առևտրային հաշվեկշռի շարունակական պակասորդ:

ОСНОВНЫЕ ЗАДАЧИ ИМПОРТОЗАМЕЩЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИИ

Л. А. Мурадян
Национальный университет архитектуры и строительства Армении

Ключевые слова. *экспорт, импорт, внешнеэкономических связей, торговли, стимулирование экспорта*

Импортозамещение продукции является одной из актуальных идей развития отраслей экономики, при реализации которой развивающиеся страны пытаются догнать развитые. Основной особенностью политики импортозамещения является ограничение импорта продукции, что приводит к активизации индустриализация экономики. В этой работе изучались экономические программы, которые будут способствовать всесторонней оценке конкурентного преимущества страны и ее отдельных территорий, человеческие, горнодобывающие производственные и других ресурсов, которые позволят существенно повысить эффективность экономического потенциала развития административно-территориальных единиц Армении. Кроме того, изучив проблемы экспорта и импорта можно прийти к следующему, исследуя и развивая внутренний рынок, государство сможет интегрироваться в иностранные рынки имея только положительную тенденцию развития.

THE MAIN TASKS OF THE IMPORT SUBSTITUTION REPUBLIC OF ARMENIA

L. A. Muradyan
National University of Architecture and Construction of Armenia

Keywords. *export, import, foreign economic relations, trade, export promotion*

Import substitution is one of the modern ideas for developing different branches of economy. The developing countries use this idea to catch up with the developed ones. The main peculiarity of import substitution is the limitation of the import of products, which results in activation of the industrialization of the economy. In this paper economic programs are studied, which can comprehensively assess the competition advantages, human resources, mining production resources and other factors of the country, as well as its different regions, considerably enhancing the effectiveness of developing the economic potential of administrative-territorial units of the Republic of Armenia. Also studying the problems of export and import, we can conclude that through studying and developing the inner market, the state can integrate into foreign markets thus securing its rise.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

1. **Ֆրենկման Լ., Պոլյակով Եվ., Ռևենկո Կ.**, Շրջափակման ծախքերը Հայաստանի արտաքին առևտրի ոլորտում // Տնտեսական քաղաքականություն և աղքատություն.- 2004.- N 8.- էջ 8–12, http://www.edrc.am:
2. http://www.armstat.am/am/
3. **Նիկլսոն Մ.**, Ինտեգրումը համաշխարհային տնտեսությանը օրենքի գերակայության միջոցով // Տնտեսական քաղաքականություն և աղքատություն.- 2004.- N 8.- էջ 1http://www.edrc.am

Բեգլարյան Անահիտ Արեստի
տնտ.թ. դոցենտ



Մուրադյան Լիլիթ Ավետիքի
ԷՄ 41 խմբի մագիստրանտ



ՀՏԴ 314.742

ԱՐՏԱԳԱՂԹԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Մ. Դ. Դավթյան
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան

Առանցքային բառեր. *արտագաղթ, աշխատանքի շուկա, զբաղվածություն, գործազրկություն, «ուղեղների արտահոսք»:*

Մեծ թվով երկրների սեցիալ-տնտեսական զարգացման կարևորագույն գործոններից կարելի է համարել բնակչության միջազգային միգրացիան: Այն գերակա խնդիր է համարվում նաև Հայաստանում:


Այս աշխատանքում ուսումնասիրված են արտագաղթի սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական հետևանքները Հայաստանի Հանրապետությունում, որոնք լինում են դրական և բացասական: Բերված են նաև համապատասխան առաջարկություններ, որոնց իրագործման արդյունքում որոշ չափով կլուծվի զբաղվածության հիմնախնդիրը Հայաստանում:

Միջազգային գաղթը տնտեսական ազդեցություն է թողնում ինչպես աշխատուժ ընդունող, այնպես էլ այն տրամադրող երկրների վրա: Ամբողջ աշխարհում բնակչության գաղթն աստիճանաբար հիմնականում որպես ռեսուրս է ընկալվում, որի արդյունավետ օգտագործումից կարող է էականապես կախված լինել երկրների տնտեսական զարգացումը [1, 2]:

XX դարի երկրորդ կեսից սկսած բնակչության զանգվածային գաղթը դարձել է համաշխարհային հանրության կյանքի բնորոշ կողմերից մեկը: Գաղթը հոսքերը վերածվել են համաշխարհային հանրության կյանքի բոլոր կողմերի վրա ազդող համընդգրկուն երևույթի: Մեր խնդիրն է՝ ուսումնասիրել, թե վերջին մեկուկես տասնամյակում արտագաղթը սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական ինչ հետևանքներ է թողել ՀՀ-ի վրա: Նշեմ, որ դրանք եղել են և դրական, և բացասական:

Նախ քննարկենք դրական հետևանքները:

- Արտագաղթը որոշ չափով բարելավել է Հայաստանի Հանրապետության աշխատուժի շուկան: Այն երկրներում, որտեղ աշխատուժի շուկան ավելցուկային է, արտագաղթի հետևանքով, որպես կանոն, նշանակիորե կրճատվում է տվյալ երկրի գործազուրկների թիվը: Թեև արտագաղթը մասամբ թուլացրել է լարվածությունը աշխատուժի շուկայում, այնուամենայնիվ, գործազրկության մակարդակը Հայաստանում դեռևս մտահոգիչ է: ԱՊՀ երկրների մեջ Հայաստանը գործազրկության մակարդակով Ռուսաստանի, Ուկրաինայի և Ղազախստանի հետ բաժանում է 1…4-րդ տեղերը: ՀՀ-ում գործազրկությունը, որի մեջ բարձր տոկոս է կազմում տնտեսապես ակտիվ տարիքում (20…45) բնակչությունը, դարձել է առաջնահերթ լուծում պահանջող խնդիր: Գործազրկության մակարդակը ցանկացած երկրի, այդ թվում Հայաստանի Հանրապետության տնտեսության վիճակը բնութագրող կարևոր ցուցանիշներից է:
- ՀՀ-ում գործազրկության մակարդակը նվազեցնելու համար պետք է ստեղծել նոր աշխատատեղեր, իսկ դրա համար անհրաժեշտ են ներդրումային հսկայական միջոցներ, որոնց հայթայթումը կապված է մի շարք դժվարությունների հետ (նկար):



Նկար. Աշխատուժի առաջարկը և աշխատանքով ապահովվածները 2014 թ. հունվարի վերջի դրությամբ [3]

ՀՀ-ում գործազրկության հիմնախնդիրը պահանջում է տնտեսության մեջ կատարել մեծ չափերի հասնող կապիտալ ներդրումներ, իրականացնել արմատական փոփոխություններ տնտեսական քաղաքականության մեջ, մշակել հանրապետության բոլոր ոլորտների զարգացման համար համալիր ծրագիր: Այսպիսով, վերջին 1,5 տասնամյակում արտագաղթը ՀՀ բնակչության մի մասին ստիպել է աշխատանք փնտրել արտերկրում, որը շատ թե քիչ նպաստել է բնականոն կենսագործունեությանը: Չարտագաղթելու դեպքում նրանց մեծ մասը կհամալրեր գործազուրկների բանակը:

- Աշխատող արտագաղթները տարբեր ուղիներով իրենց հարազատներին են փոխանցում հսկայական ֆինանսական միջոցներ, որոնք նպաստում են մեր երկրի ֆինանսական վիճակի բարելավմանը: Ճիշտ է, փոխանցված դրամական միջոցներն անմիջականորեն չեն մտնում պետական գանձարան, այնուամենայնիվ, դրանք բարձրացնում են բնակչության եկամուտների մակարդակը և որոշ դրական ազդեցություն են թողնում երկրի վճարային հաշվեկշռի վրա:
- Հայաստանի Հանրապետությունից արտագաղթողների ճնշող մեծամասնությունը աշխատանքային ակտիվ տարիքում գտնվող գործազուրկներն են: Մյուս կողմից, միջին տարիքի բնակչության (25…54 տարեկաններ) բարձր գաղթային ակտիվությունն անդրադառնում է Հայաստանի բնակչության տարիքային կառուցվածքի վրա: Գաղթողների միջին տարիքը 38 տարեկանն է:
- Հայ արտագաղթողներն արտասահմանյան երկրներում ձեռք են բերում աշխատանքային փորձ և գիտելիքներ, ծանոթանում տեխնիկայի և տեխնոլոգիաների նորագույն նվաճումների ու նորարությունների հետ և հայրենիք են վերադառնում ավելի բարձր որակավորում ստացած և ավելի բարձր արտադրական մշակույթ և բիզնես կազմակերպելու ունակություններով: Նրանք հայրենիք են բերում նաև նյութական արժեքներ և խնայողություններ: Արդյունքում ոչ միայն ավելանում է մեր ազգային տնտեսության մեջ ներդրվող կապիտալը, այլև երկիրն առանց հավելյալ գումար ծախսելու ստանում է բարձր որակավորում ունեցող լրացուցիչ աշխատուժ:
- Արտագաղթային հոսքերը հնարավորություն են տվել որոշ չափով խուսափելու որակյալ աշխատուժի բարոյական արժեզրկումից, թեև հանրապետությունից «ուղեղների արտահոսքը» մինչ օրս չի դադարում:

Այժմ նշենք արտագաղթի բացասական հետևանքները:

- Հայաստանից հեռացել և շարունակում են հեռանալ բարձր որակավորում ունեցող անձիք: «Ուղեղների արտահոսքը» տեղի է ունենում կամ աշխատանք փնտրելու նպատակով արտերկիր մեկնելով, կամ զարգացած երկրներում հայ երիտասարդները բարձրագույն կրթություն ստանալուց հետո այլևս չեն վերադառնում հայրենիք: Չնայած դրան, 2014 թ. առկա էր հետևյալ պատկերը (աղյուսակ):

Աղյուսակ

Աշխատուժի պահանջարկը և աշխատանք փնտրողների աշխատանքով ապահովվումն ըստ տնտեսական գործունեության տեսակի (2014 թ.)

Աշխատանքային ոլորտը	Աշխատուժի պահանջարկի վերաբերյալ հայտ ներկայացնող գործատուների քանակը, մարդ	Թափուր աշխատատեղերի թիվը	Ապահովվել են աշխատանքով, մարդ
Գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն, ձկնորսություն, ձկնաբուծություն	28	86	86
Արդյունաբերություն	149	635	546
Շինարարություն	54	185	169
Առևտուր, ավտոմեքենաների, կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգում	175	387	483
Հյուրանոցներ և ռեստորաններ	57	141	174
Ընդամենը	884	2,453	2,406

«Ուղեղների արտահոսք»-ի հետևանքով ՀՀ-ն կորցնում է իր ամենաթանկ կապիտալը՝ մարդկային ռեսուրսը: Օրինակ, ՌԴ-ն «ուղեղների արտահոսք»-ից տարեկան կորցնում է 50…60 մլրդ դոլար, քանի որ ռուս գիտնականների 1/3-ն աշխատում է արտասահմանյան երկրներում:

- Արտագաղթողներն արտասահմանյան երկրներ մեկնելու համար պետք է ստանան որոշակի ծառայություններ և դրանց դիմաց կատարեն վճարումներ: Այդ ծառայությունները սկզբնական շրջանում արտագաղթողներին մատուցվել են արտասահմանյան կազմակերպությունների կողմից, քանի որ մեզ մոտ նման ծառայություններ մատուցող կազմակերպություններ կամ չեն եղել,

կամ էլ եղածներն այն չէին, որպեսզի բավարարեին նրանց պահանջները: Արդյունքում տեղի է ունեցել ֆինանսական կապիտալի արտահոսք, ինչն էլ իր բացասական ազդեցությունն է ունեցել մեր երկրի տնտեսության վրա: Զանգվածային արտագաղթի հետևանքով մեր երկիրը ֆինանսական կորուստներ է կրել նաև այն պատճառով, որ արտագաղթողները հիմնականում եղել են նրանք, ովքեր կրթություն և մասնագիտական պատրաստվածություն են ստացել պետական միջոցների հաշվին, բայց գաղթողի կարգավիճակով հարկ վճարում են արտասահմանյան երկրում:

- Վերջին տարիներին արտագաղթի հոսքերը ներառել են նախկին աշխատանքային գաղթողների ընտանիքի անդամներին, որոնք 1990-ական թվականներին արտագաղթել են մշտական բնակություն հաստատելու համար: Դա վկայում է այն մասին, որ գաղթողները սկզբնական շրջանում հանրապետությունից իբր դուրս են գալիս ժամանակավորապես, բայց հետագայում իրենց են ձգում հայրենիքում մնացած հարազատներին: Դա նաև նշանակում է, որ նախկին աշխատանքային գաղթը դարձել է արտագաղթը խթանող կարևոր գործոն: Փաստորեն նվազում է ընտանիքների միջին մեծությունը, որը կնվազի նաև հետագայում, որը լուրջ մտահոգության առիթ է տալիս, քանի որ այդ երևույթի շարունակման դեպքում կարող է վտանգվել բնակչության վերարտադրության և, առհասարակ, հայ ազգի գոյատևման հարցը:
- Մշտական արտագաղթի հետևանքով ազգային աշխատուժի շուկայի որակազրկման գործընթացը դարձել է ավելի արտահայտիչ, քանի որ արտագաղթողների մեջ բարձր որակավորում ունեցող մասնագետների տեսակարար կշիռը բավական մեծ է: Շարունակվում է «ուղեղների», ասել է թե՝ բարձր որակավորում ունեցող և միջազգային աշխատաշուկայում մրցունակ մասնագետների արտահոսքը դեպի զարգացած երկրներ, ինչը թուլացնում է երկրի գիտական, ստեղծագործական և տնտեսական ներուժը: Հայաստանը համարվում է շինարարների երկիր և ունի բարձր որակավորում ունեցող մասնագետների պահանջարկ: Ցավալի է, որ այսօր Հայաստանից արտագաղթողների գերակշիռ մասը հենց շինարարության ոլորտի մասնագետներն են:
- Շարունակական բնույթ կրող արտագաղթի հետևանքով Հայաստանում արտադրվող ՀՆԱ-ն և պետական բյուջեի եկամուտները դեռևս չեն հասել այն ծավալներին, որ կառավարությանը հնարավորություն տան պետական ֆինանսների հաշվին մեծացնելու ներդրումները և համապատասխան ծախսեր կատարելով՝ պատշաճ մակարդակով լուծելու սոցիալական բնույթի բազմաթիվ հարցեր:
- Արդյունաբերապես զարգացած նախկին ՀՀ-ն վերածվել է սպառող երկրի: Բազմաթիվ գործոնների ազդեցությամբ իջել է թողարկվող արտադրանքի մրցունակությունը:
- Հանրապետության տնտեսության շատ ոլորտներում մեծացել է աշխատանքային օրվա տևողությունը և աշխատանքի ինտենսիվությունը: Վերելք ապրող օրգանիզմը չնայած կարող է դիմանալ օրական 12…14 ժամվա գերլարված աշխատանքին, այնուամենայնիվ, նման մարդկանց աշխատանքային ակտիվության կորագծի իջեցման ընթացքն արագանում է: Գերլարված աշխատանքից այն, ինչ շահում են երիտասարդ հասակում, ավելին կորցնում են հետագայում: Ահա թե ինչու ժամանակին մարդիկ պայքարել են հասնելու 8-ժամյա աշխատանքային օրվա և հնգօրյա աշխարանքային շաբաթի: Իսկ այժմ Ֆրանսիայի բանվորները պայքարում են չորսօրյա աշխատանքային ռեժիմի անցնելու համար:

ՀՀ-ն կորցրել է առավել աշխատունակ տարիքում գտնվող աշխատանքային ռեսուրսների զգալի մասը: Մինչդեռ ցանկացած երկրի գլխավոր հարստությունը դրա աշխատանքային ռեսուրսներն են: Երկրի տնտեսական ու սոցիալական բոլոր հիմնախնդիրների լուծման հանգուցակետում այդ գլխավոր հարստության ակտիվության բարձրացման հիմնախնդիրն անխուսափելիորեն պետք է դառնա պետության սոցիալ-տնտեսական ծրագրի և գաղթի քաղաքականության կարևորագույն բաղադրամասը: Աշխա-

տանքային ռեսուրսներն ավելացնելու նպատակով կատարվող ներդրումները փոխհատուցվում են արագորեն և դառնում նոր ներդրումների աղբյուր, քանի որ աշխատունակ մարդն իր աշխատանքով ստեղծում է բարիք ոչ միայն իր, այլև հասարակության համար՝ հարստացնելով տվյալ երկիրը: Արտագաղթի պատճառով հանրապետության բնակչությունը ծերանում է, քանի որ արտագաղթողների մեջ բարձր է մինչև 50 տարեկանների, մասնավորապես երիտասարդների տեսակարար կշիռը:

- ՀՀ-ից արտագաղթը որոշակի ազդեցություն է ունեցել նաև բնակչության գենոֆոնդի և թվաքանակի վրա: Արտագաղթի հետևանքով կրճատվել է ոչ միայն ՀՀ-ի բնակչության թվաքանակը, այլև պակասել է երեխաների ծնունդը և 1988 թ. համեմատությամբ գրեթե 3 անգամ նվազել է բնական աճը: Լայնածավալ արտագաղթի հետ կապված՝ ՀՀ բնակչության բնական աճի խիստ նվազումը դարձել է ազգային անվտանգության կարևոր խնդիր, քանի որ արտագաղթողները հիմնականում չեն վերադառնում և ձուլվում են այլ ազգերին և ազգություններին:
- Արտագաղթի պատճառով զգալի չափով փոխվել են ՀՀ-ի բնակչության ազգային կազմը և հայաստանաբնակ հայերի տեսակարար կշիռը աշխարհի հայերի ընդհանուր թվի մեջ:

ՀՀ-ում բնակվող ազգային փոքրամասնությունների և էթնիկ խմբերի կողմից դրսևորվող առավել մեծ գաղթային ակտիվության պատճառով այժմ հանրապետության մշտական բնակչության գերակշիռ մասը կազմում են հայերը, երկրորդ տեղում են եզդիները, երրորդում՝ ռուսները:

- ՀՀ-ից արտագաղթը հասցրել է այն բանին, որ աշխարհի հայերի ընդհանուր թվաքանակի մեջ իջել է հայաբնակ հայերի տեսակարար կշիռը: Հայ բնակչության արտագաղթի հետևանքներից մեկն էլ այն է, որ ընդունող շատ երկրներում ձևավորվում են հայկական համայնքներ, որոնք մի կողմից իրենց սովորություններն են թելադրում տեղական բնակչությանը, մյուս կողմից իրենք են ինտեգրվում: Աշխարհում տեղի ունեցող նման գործընթացներն արագացնում են վերազգային հասարակության ձևավորումը, որի դրական և բացասական կողմերն ի հայտ կգան ժամանակի ընթացքում: Կատարված վերլուծությունները ցույց են տալիս, որ վերջին մեկուկես տասնամյակի ընթացքում հայերի զանգվածային արտագաղթն առաջացրել է տարբեր բնույթի խնդիրներ, որոնց լուծումն անպայման ենթադրում է արդյունավետ գաղթային քաղաքականության իրականացում:

Հայաստանում զբաղվածության հիմնախնդիրը լուծելու նպատակով առաջարկում է պետության վերահսկողության ներքո գործնականում ակտիվացնել տնտեսություն-աշխատաշուկա-կրթական համակարգ կապը, դրանց միջև արդյունավետ փոխգործակցության ապահովումը, որը պետք է նպատակաուղղված լինի մասնագիտական ճիշտ կողմնորոշմանը, տնտեսության գործող ճյուղերը բարձր որակավորում ունեցող կադրերով համալրմանը, հիմնականում հնարավորինս հաշվի առնելով աշխատաշուկայի պահանջարկը:

Հաշվի առնելով Հայաստանում արդյունաբերության մի շարք ճյուղերի զարգացման առկա միտումները՝ առաջարկվում է ակտիվացնել պետության դերակատարությունը բարձրակարգ մասնագետների կադրային համապատասխան բազա ստեղծելու գործում, որն էապես կխթանի կարճ ժամանակահատվածում արդյունաբերության առաջատար ճյուղերի արդյունավետ զարգացմանը: Այդ նպատակով անհրաժեշտ է տնտեսության մեջ նորագույն տեխնոլոգիաների ներդրմանը զուգահեռ պետական աջակցությամբ, մասնագիտական բարձր որակավորման ապահովման նպատակով, լուծել արտերկրում համապատասխան մասնագետների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման խնդիրը:

Ժամանակն է նշված խնդրի արդյունավետ լուծման գործում զերծ մնալ ձևական մոտեցումներից և մշակել ակտիվ զբաղվածության քաղաքականություն: Նոր աշխատատեղերի ստեղծմանը կարող են նպաստել ներդրումների խթանումը, պետական աջակցությամբ գործարարության զարգացմանը նպաստող պայմանների ստեղծումը, երկրում ֆինանսավարկային ճիշտ քաղաքականության իրականացումը:

Արդյունքում կկանխարգելվի սահմանամերձ և այլ ռազմավարական նշանակություն ունեցող տարածքների բնակչության շարունակական կրճատումը, կխթանվի վերջինիս ոչ միայն աճը, այլ նաև կնպաստի կենսամակարդակի բարձրացմանը, կկանխվի ազգի ծերացումը և կլուծի այդ ոլորտում ազգային անվտանգության խնդիրը:

СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИЕ И ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПОСЛЕДСВИЯ ЭМИГРАЦИИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

М. Д. Давтян
Национальный университет архитектуры и строительства Армении

Ключевые слова. *миграция, рынок труда, деятельность, безработица, "утечка мозгов"*

Международная миграция населения может рассматриваться как один из ключевых факторов социально-экономического развития большого числа стран.Она считается преобладающей проблемой в Армении тоже.

В этой работе были изучены последствия социально-экономической и демографической миграции в Республике Армения которые могут быть положительными и отрицательными.Также были сделаны некоторые предложения и в случае их осуществления проблема занятости в Армении более или менее решится.

SOCIO-ECONOMIC AND DEMOGRAPHIC CONSEQUENCES OF EMIGRATION IN REPUBLIC OF ARMENIA

M. D. Davtyan
National university of architecture and construction of Armenia

Keywords. *migration, labor market, activity, unemployment, ''brain drain''*

International migration of population can be considered as one of the key factors of social-economicdevelopment of a large number of countries.It is considered to be a prevailing problem in Armenia as well.

In this work the consequences of social-economic and demographic migration in the Republic of Armenia have been studied which can be positive and negative.There also have been made some suggestions and in case of their fulfillment the problem of employment in Armenia will be solved more or less.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Мукомель В.И.**, Миграционная политика в России.- Постсоветские контексты.- М., 2005.- 351 с.
2. Վիճակագրական տարեգիրք 2015 թ., էջ 601:

Բեգլարյան Անահիտ Արեստի
տնտ.թ. դոցենտ



Դավթյան Մեղրիկ Դավթի
ԷՄ 41 խմբի մագիստրանտ



ՀՏԴ-336.02

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՈՒՂՂԱԿԻ ԵՎ ԱՆՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ ԴՐԱԿԱՆ և ԲԱՑԱՍԱԿԱՆԿՈՂՄԵՐԸ

Լ.Տ. Հակոբյան
Ճարտարապետության և Շինարարության Հայաստանի Ազգային Համալսարան

Բանալի բառեր *՝ Հարկային քաղաքականություն, ուղղակի հարկեր, անուղղակի հարկեր, եկամուտ, շահութահարկ:*

Հոդվածում ներկայացված է հարկային համակարգի զարգացման էվոլյուցիան, թեմայի արդիականությունը և կարևորությունը, ուղղակի հարկերի գանձման վիճակի որակական և քանակական ցուցանիշների փոփոխությունների գնահատումը, Հայաստանում եկամտային հարկերի գանձման մոտեցումներում առկա հիմնախնդիրները: Ինչպես նաև ներկայացված է կիրառման ենթակա ՝ առավել կատարելագործված մոտեցումներ:

Հարկային քաղաքականությունը հանդիսանում է ցանկացած երկրի տնտեսական կյանքի գլխավոր բաղկացուցիչներից մեկը: Հարկային հարաբերությունների ձևավորմանը և տնտեսության կայուն զարգացմանը օժանդակող, ինչպես նաև բարենպաստ գործարար միջավայր ապահովող հարկային համակարգերի կառուցման հիմնախնդիրրները արդիական են եղել բոլոր ժամանակներում և բոլոր սոցիալ-տնտեսական ու հասարակական-քաղաքական համակարգերի համար: Համաշխարհային տնտեսությունում ազգային տնտեսությունների ինտեգրումը պահանջում է հարկային քաղաքականությունները մշակելիս հաշվի առնել տվյալ երկրի առանձնահատկությունները: Խնդիրը կայանում է նրանում, որ ոչ ստանդարտ ուղղվածությունը կարող է բացասաբար անդրադառնալ տնտեսության բազմակողմանի և համաչափ զարգացման վրա, ինչը ևս մեկ անգամ հավաստում է, որ հարկերը բոլոր ժամանակներում պետության ֆինանսական համակարգում անփոխարինելի գործիք են եղել: Սակայն պետք է նկատել, որ հարկային պարտավորությունները պետք է ունենան համակարգված բնույթ և պետության ու հարկատուների միջև հարաբերությունները պետք է լինեն հստակ, մատչելի և հասկանալի:

Ցանկացած երկիր, որպեսզի կարողանա լուծել բնակչության դիմաց ծանրացած խնդիրները, ինչպես նաև տարբեր գործառույթների իրականացում կատարելու համար պետք է ունենա համապատասխան ֆինանսական միջոցներ: Այդ միջոցների հավաքագրման եղանակները փոփոխության են ենթարկվել տարբեր հասարակարգերում սակայն բոլոր ժամանակաշրջաններում էլ հավաքման հիմնական եղանակը եղել, մնում են և կմնան հարկերը, քանի որ այն՝ ըստ ինձ ամենա արդյունավետ և ժողովրդավարական եղանակն է: Երբեմն օրենքով սահմանված կարգով հարկերի վճարումը փաստացի կատարողների փոխարեն վճարը կատարում են ուրիշները սա տեղի է ունենում տնտեսության գործընթացների վրա ցուցաբերվող բարդ և բազմակողմանի ազդեցությունների հետևանքով: Սկզբունքորեն շատ կարևոր այս խնդիրն առաջին անգամ համակարգված ձևով հետազոտել է ամերիկացի տնտեսագետ Է. Սելիգմենը (1861-1939) իր՝ <<the shifing and inc dencc of Takation>> (1892թ.) մենագրության մեջ:<<Փոխադրում>>(shifting) տերմինի ներքո նա հասկանում էր հարկային բեռի տեղափոխումը իր սկզբնական կետից դեպի վերջնական կետը, որտեղ հաստատվում էր բեռի վերջնական վերաբաշխումը, գործողության իրական ոլորտը, հարկային ծանրաբեռնվածության աստիճանը: Հարկային հիմնախնդիրների հետազոտության մեջ մեծ ներդրում է ունեցել նաև շվեդ տնտեսագետ Կ.Վիկսելը (1851-1926թթ.): Նրա կողմից հիմնավորվել է այն դրույթը, ըստ որի, շուկայական տնտեսության պայմաններում առանձին անհատները շահագրգռված չեն ազատ և բաց կերպով դրսևորել իրենց նախասիրությունները հասարակական բարիքների նկատմամբ, քանի որ յուրաքանչյուրի անձնական վճարումների չափերը շատ աննշան ազդեցություն ունեն նմանատիպ բարիքների հատկացման վրա : Այս խնդիրը Կ. Վիկսելը բացատրում է, այսպես ասած, <<Անտոմսի բարդույթի>>, առկայությամբ: Ահա թե ինչու, ըստ Կ. Վիկսիլի, նման դեպքերում պահանջարկի նառաջարկի կորդինացումը պետք է իրականացնի պետությունը, ընդ որում, յուրաքանչյուր քաղաքացու ազատության պահպանման նպատակով որոշումները պետք է ընդունվեն միաձայն, իսկ հարկման հիմքում պետք է դնել շահագրգռվածության սկզբունքը, այսինքն՝

պետության օգտին վճարումների և պետության կողմից մատուցվող ծառայությունների միջև պետք է հաստատվի հավասարակշռություն:

Բնութագրելով հարկերի տնտեսական բովանդակության հասունացման էվոլյուցիայի առանձնահատկությունը՝ Է. Սելիգմենն իր <<Essay in taxation>> (1895թ.) աշխատության մեջ նշում է . <<Սկզբից գերակշռում էր պարգևի գաղափարը. Միջին դարերում անհատը նվեր է անումկառավարությանը: Երկրորդ մակարդակում կառավարությունը համերաշխ ձևով խնդրում էր ժողովրդին աջակցել իրեն: Երրորդ փուլում մենք հանդիպում ենք օգնության գաղափարին, որը հատկացվում է պետությունը: Չորրորդ փուլում ի հայտ է գալիս զոհի գաղափարը, որը կատարում է անհատը պետության շահերի համար: Նա այժմ հրաժարվում է ինչ-որ բանից հասարակական շահերի օգտին: Հինգերորդ վճարողի մոտ սկսվում է զարգանալ պարտքի, պարտավորության զգացումը: Միայն վեցերորդ փուլում ենք հանդիպում պետության կողմից հարկադրանքի կիրառման գաղափարին: Յոթերորդ և վերջին փուլում տեսնում ենք որոշակի մասնաբաժին կամ հաշվառման գաղափարը, որը հաստատվում կամ հաշվանցվում է պետության կողմից՝ անկախ վճարողի կամքից: Այսինքն, հարկերը միաժամանակ հանդես են գալիս և որպես կամավոր վճարներ՝ տրամադրված հասարակական ապրանքների դիմաց,և որպես հարկադրական վճարներ, վերցրված հարկատուների գույքի մի մասից՝ արտաքին նպատակների համար:

Տարբեր երկրներում ձևավորված հարկային համակարգերն ունեն ինչպես յուրահատկություններ, որոնք պայմանավորված են այդ երկրների տնտեսական համակարգերի քաղաքական, պատմական, մշակութային, կրոնական և այլ առանձնահատկություններով, այնպես էլ ընդհանրություններով: Արևմտյան երկրների զարգացման պատմությունը վկայում է, որ հարկային քաղաքականությունը մշտապես օգտագործվել է տնտեսության պետական կարգավորման նպատակով, այստեղ ֆիսկալ համակարգի միջոցով վերաբաշխվում է ՀՆԱ-ի 30-50% –ը:

Այն փաստը, որ տնտեսության վրա ազդելու և զարգանալու տեսանկյունից հարկային քաղաքականությունը հզոր գործիք է, հիմք է տալիս ենթադրել,որ հարկագանձման ընթացքը և վերջինիս բաշխվածության վիճակի ցուցանիշները կարող են բնութագրել երկրում տիրող տնտեսական վիճակը, բացահայտել առկա հիմնախնդիրները: Հատկապես ուղղակի և անուղղակի հարկերի գծով համակարգի ձևավորումը, հարկային քաղաքականության իրականացումը պայմանավորված են տվյալ երկրում գործող տնտեսական քաղաքականության առանձնահատկություններով, վերափոխումների գործընթացում տեղի ունեցած հաջողություններով և այլն: Ստորև ներկայացվող աղյուսակում պատկերված է ուղղակի հարկերի մասնաբաժինը ՀՀ համախմբված բյուջեում 2010-2014թթ.

Ուղղակի հարկերի մասնաբաժինը ՀՀ համախմբված բյուջեում 2010-2014թթ.					
	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.
Ընդամենը եկամուտներ	804297	906071	975096	1101729	1178188
Հարկեր և տուրքեր	718348	796960	898415	1022052	1087378
Շահութահարկ	77813	97842	118653	124597	103597
Եկամտային հարկ	73939	81210	91667	105795	171500
Գույքահարկ	11262	11793	12089	12768	14502
Հողի հարկ	4585	4429	4209	4157	4108

Ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանում հարկերի, տուրքերի և պարտադիր սոցիալական վճարների հանրագումարային մեծությունը կազմել է համախմբված բյուջեի եկամուտների շուրջ 90%-ը, նշեմ նաև, որ զարգացած շուկայական տնտեսությամբ երկրներում բյուջեի եկամուտների միայն 60-70%-ն է ձևավորում հարկերի և տուրքերի միջոցով:

Եթե դիտարկենք ուղղակի հարկերի մասնաբաժինը ՀՆԱ-ում 2007-2015թթ, ապա կարելի է տեսնել, որ տատանվել է 2.1%-ից մինչև 4.7%, ինչը 2-3 անգամ պակաս է, քան նույն տարիներին անուղղակի հարկերի մասնաբաժինը ՀՆԱ-ում: Միջին ցուցանիշը կազմել է 3.5%:ՈՒսումնասիրվող ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում ըստ պետական բյուջեի ուղղակի և անուղղակի հարկային եկամուտների տեսակարար կշիռներն ընդհանուր բյուջետային եկամուտներում և ՀՆԱ-ում ունեցել են հետևյալ ցուցանիշները.անուղղակի հարկերի բաժինը ՀՆԱ-ում տատանվել է 7.7%-ից մինչև 10%, իսկ միջին ցուցանիշը կազմել է 9.1%: Ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2008-ին և 2010-ին 10%, որից հետո տեղի է ունեցել կրճատում 0.4 տոկոսային կետով:

Փորձ է արվել վերլուծել նաև ուղղակի և անուղղակի հարկերի տեսակարար կշիռը պետական բյուջեի հարկային եկամուտներում, ինչը բնորոշում է տվյալ երկրի հարկագանձման կողմնորոշումը՝ դեպի տնտեսվարող սուբյեկտները կամ վերջնական սպառողները: Ինչպես վերը նշված պաշտոնական տվյալները, հարկային եկամուտների մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմում անուղղակի հարկերը. 2007-2015թթ. ժամանակահատվածում այդ ցուցանիշը հիմնականում ունեցել է անկում, ինչը դրական տեղաշարժ է: 2007-2008թթ այն կրկին բարձրացել է՝ դառնալով 64.9% այնուհետև սկսել է նվազել՝ 2011թ. կազմելով շուրջ 47.7%: Ուստի կարելի է եզրակացնել, որ համանման ցուցանիշների հետընթացը բերել է իրավիճակի վատթարացմանը (2007-2015թթ. ժամանակաշրջանի համար հաշվարկված միջինացված ցուցանիշը կազմել է մոտ 52%), ինչը վկայում է, որ հարկային բեռը հանրապետությունում հիմնականում ընկած է վերջնական սպառողի վրա: Ուղղակի հարկերի մասնաբաժինն այդ նույն ժամանակահատվածում անհամեմատ փոքր է եղել: 2007-2008թթ. գրանցված անկումից հետո (համապատասխանաբար 26.6% և 24.9%), 2009թ-ին դարձյալ աճել է՝ դառնալով 29.7% (որն, ի դեպ, ամենաբարձր ցուցանիշն է եղել այդ ժամանակաշրջանի համար): Միջինացված ցուցանիշը ուղղակի հարկերի համար կազմել է մոտ 24%, ինչը մոտ 3 անգամ փոքր է անուղղակի հարկերի մասնաբաժնից:

ՀՀ Համախմբված բյուջեի եկամուտների կառուցվածքը և տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտներում, մլրդ դրամ

Ցուցանիշ	Տարիները					
	2008	2009	2010	2011	2012	2013
Ընդամենը եկամուտներ	802.9	711.7	804.3	906.1	975.1	1080.2
Հարաբերությունը ՀՆԱ-ին,%	22.5	22.7	23.2	24.0	24.4	*26.8*
Այդ թվում՝						
1. Հարկեր,տուրքեր և պարտադիր սոցիալականապահովության վճարներ	736.4 736.4	642.8 642.8	718.4 718.4	797.0 797.0	898.4 898.4	966.0 966.0
Մասնաբաժինըընդ.եկամուտներում,%	91.7	90.3	89.3	88.8	92.1	*89.4*
ՀարաբերությունըՀՆԱ-ին,%	20.6	20.5	20.8	21.1	22.5	*21.9*
1.1. Հարկերևտուրքեր	634.5	539.9	613.0	673.5	796.4	961.6
Մասնաբաժինըընդ.եկամուտներում,%	79.0	75.9	76.2	74.3	81.7	*89.0*
Հարաբերությունը ՀՆԱ-ին,%	17.8	17.2	17.7	17.8	19.2	*20.4*
1.1.1.Հարկային եկամուտներ	610.4	518.5	589.9	647.8	741.8	932.0
Մասնաբաժինը ընդ.եկամուտներում,%	76.0	72.9	73.3	71.5	76.1	*86.2*
Հարաբերությունը ՀՆԱ-ին,%	17.1	16.5	17.0	17.2	18.6	*18.9*
1.1.2.Տուրքեր	24.1	21.4	23.1	25.7	27.6	29.6
Մասնաբաժինը ընդ.եկամուտներում,%	3.0	3.0	2.9	2.8	2.8	*2.7*
ՀարաբերությունըՀՆԱ-ին,%	0.7	0.7	0.7	0.7	0.7	*0.7*
1.2.Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	105.0 105.0	102.9 102.9	105.3 105.3	123.4 123.4	129.1 129.1	4.4 4.4
Մասնաբաժինը ընդ.եկամուտներում,%	13.1	14.5	13.1	13.6	13.24	*0.4*

Հարաբերությունը ՀՆԱ-ին,%	2.9	3.3	3.0	3.3	3.2	*0.3*
2.Պաշտոնական դրամաշնորհներ	15.4	21.7	30.6	59.4	18.7	22.6
Մասնաբաժինը ընդ.եկամուտներում,%	1.9	3.1	3.8	6.6	1.9	*2.0*
Հարաբերությունը ՀՆԱ-ին,%	0.4	0.7	0.9	1.6	0.5	*0.4*
3.Այլ եկամուտներ	48.0	47.2	55.3	49.7	58.0	62.0

Աղյուսակում ներկայացված ցուցանիշները ցույց են տալիս, որ չնայած Հայաստանում հարկային համակարգի ձևավորման սկզբից սկսված և ողջ զարգացման ընթացքում իրականացվող հարկային բարեփոխումներին, նոր հարկատեսակների ներմուծման ու հարկագանձման մեխանիզմների փոփոխության ողջ գործընթացին՝ 2008-2013թթ.ընթացքում հարկագանձման ընդհանուր մասնաբաժին արտահայտող հարկերի և ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշը, կամ պետության կողմից վերաբաշխվող ազգային արդյունքի մասնաբաժինը էական փոփոխությունների չի ենթարկվել, և կազմել է 20.4 %-ը, իսկ սոցիալական վճարների հետ միասին՝ 21.9 %-ը:

Ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցության քննարկման և միջազգային համեմատական վերլուծությունների իրականացման ժամանակ հաճախ արձանագրվում է, որ օրինակ եվրոպական երկրներում ավելացված արժեքի հարկ մասնաբաժինը միջինում 3-4 անգամ ցածր է ՀՀ համապատասխան ցուցանիշից Միաժամանակ, անձնական եկամտային հարկերի մասնաբաժինը, ընդհակառակը, նույնքան անգամ ավելի է ՀՀ համապատասխան ցուցանիշի մեծությունից Հիմք ընդունելով նման պատկերի առկայությունը՝ հաճախ փորձ է արվում հարկային մեխանիզմներ մշակել Հայաստանում այդ հարաբերակցության շտկման ուղղությամբ Այնուամենայնիվ, կարծում ենք, Հայաստանում ուղղակի և անուղղակի հարկերի նման հարաբերակցությունը օբյեկտիվ պատճառներ ունի, ինչն արտահայտվում է բնակչության եկամուտների կառուցվածքում Հայտնի է, որ բնակչության եկամուտների զգալի մասը ձևավորվում է տրանսֆերտների միջոցով, իսկ վերջիններս եկամտային հարկով չեն հարկվում: Փոխարենը դրանք հարկվում են արդեն օգտագործման, այսինքն՝ սպառման փուլում՝ նպաստելով ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի կառուցվածքային մասնաբաժնի ավելացմանը:

Ամփոփելով վերոգրյալ խնդիրները և կատարված վերլուծության արդյունքները՝ կարելի է հիմնավորել, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում էական առաջընթաց հարկային համակարգի կատարելագործման, հարկագանձման մեխանիզմների բարելավման ուղղությամբ չի կատարվել:

Հայաստանի Հանրապետության գործող ուղղակի հարկերից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունը, դրանք միմիանցից տարբերվում են հաշվարկման ինքնուրույն մեխանիզմներով և որոշիչ ներգործություն են ունենում երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ու առաջադրված խնդիրների լուծման վրա:

Հարկերի արդյունավետ քաղաքականության իրականացումը, հարկերի հաշվարկման մեթոդների մշակումն ու կիրառումը ունեն ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալական,քաղաքական և հոգեբանական նշանակություն: Մասնավորապես, օրինակ, երբ խոսքը վերաբերում է եկամտային հարկերի հաշվարկման կառուցվացքին, անկասկած կարելի է փաստել, որ վերջիններս հետապնդում են երկու նպատակ, դրանք են. բյուջեի եկամուտների ապահովումը ճիշտ ժամանակին և կայուն ֆինանսական միջոցների ամբողջական համալրումը, ինչպես նաև պետության տնտեսական և սոցիալական առաջընթացը:

Օրինակ, <<Շահութահարկի մասին>> ՀՀ օրենքում հարկվող շահույթի հաշվարկման մոտեցումներում առկա խնդիրներից է այն, որ հոդված 9-ով սահմանվող համախառն եկամտից թույլատրվող որոշ նվազեցումներ հստակեցման կարիք ունեն: Խնդիրն այն է, որ սահմանված նվազեցումը, որոնք վերաբերում են ինչպես համախառն եկամտին, այնպես էլ դրանց հետ ստացման հետ կապված անհրաժեշտ ու փաստաթղթերով հիմնավորված ծախսերին, երբեմն չարդարացված ու անհասկանալի կերպով ավելացնում են նվազեցումների չափը: Արդյունքում ստացվում է այնպես, որ հանրապետության շատ հարկատուներ, ունենալով հաշվեկշռային շահույթ, շահութահարկ չեն վճարում հարկվող շահույթի բացակայության պատճառով, քանի որ օրենքով սահմանված նվազեցումները այնքան ծավալուն և ընդգրկուն են, որ շահութահարկի հարկման բազան վերածվում է փոքր մեծության:

Յուրաքանչյուր պետության մեջ գոյություն ունեն քաղաքական տարբեր ուժեր, ինչպես նաև տնտեսական քաղաքականության մշակման բազմաբնույթ կենտրոններ, որոնցից յուրաքանչյուրն իր պատկերացումներն ունի հասարակական շահերի վերաբերյալ, ինչը հնարավորություն է ստեղծում, որ հարկագանձմանը վերաբերող որոշումները կայացվեն պետական մարմինների և ազդեցիկ խմբերի ազդեցության ներքո: Դրանով իսկ, նման հարկագանձումը կարող է հանդես գալ որպես օրենսդիրների և պետական պաշտոնյաների համար սեփական շահերի ապահովման, այլ ոչ թե տնտեսական գործընթացների ռացիոնալ կարգավորման գործիք:

Ելնելով շահութահարկի հաշվարկման մեթոդաբանության և վարչարարություն կատարելագործման հիմնախնդիրներից հավաքագրելով առավել հաճախ կրկնվող սխալները, վերլուծությունները, այնուհետև պաշտոնական պարզաբանում տալով սխալների վերաբերյալ, այդ վերլուծությունները կարող են դառնալ հարկերի հաշվարկման մեթոդաբանության կիրառման արդյունավետության գնահատման գլխավոր չափանիշը:

Անհրաժեշտ է նաև օժանդակել այն տնտեսվարող սուբյեկտներին, որոնց շահույթի գումարը ընդհանուր շրջանառու և հիմնական միջոցների մեջ առավել մեծ տեսակարար կշիռ է կազմում:

Այսինքն՝ հարկման համակարգը պետք է որպես խթան ծառայեցնել շահութաբերության մակարդակի բարձրացման համար, այլ ոչ թե հակառակը: Այս խնդիրը լուծելով հատկապես ՓՄՁ շրջանակներում, հնարավոր կլինի ձևավորել մրցունակ փոքր և միջին ձեռնարկատիրական միջավայր, որը չխուսափելով միջոցներ ներդնել, սեփական արտադրության շահութաբերության մակարդակի բարձրացման նպատակով՝ կբարելավի սեփական մրցունակության մակարդակը:

СТРУКТЫРА ПРЯМЫХ И НЕПРЯМЫХ НАЛОГОЖАПОЛОЖИТЕЛЬНЫЕ И ОТРИЦАТЕЛЬНЫЕ СТОРОНЫ

Л. Т. Акопян
Армянская Национальная Академия Архитектуры и Строительства

Ключевые слова: *налоговая политика, прямые налоги, непрямые налоги, доход, налог на прибыль.*

В данной статье представлена эволюция развития налоговой системыреальность и реалность и важность рассматриваемой темы,состояние уплаты прямых налогов в качественных и количественных изминенных показателях ,основные проблемы уплати подоходных налогов в Армении. Также представлено применяемый перечень усовершенствованных подходов.

POAITIVE AND NEGATIVE ASPECTS OF STRUCTURAL MOUEMENTS OF DIRECT AND INDIRECT TAXES

L. T. Hakobyan
National University of Architecture and Construction of Armenia

Keywords*: tax policy, direct taxes, indirect taxes, income, luctative taxes.*

The article presents the development of the evolution of the tax system modexnity and impoetance of the topic, assessment of chenges in qualitative and qualitative indecators of direct tax collection, approaches to existing problems of Armenia's lucrative tax fees.

Also, more advanced approaches are presented for use.

Գրականություն

1.Է. Սելիգմեն <<the shifing and inc dencc of Takation>> (1892թ.)
2.Վ.Գ. Բաղդասարյան-ՀՀ-ում գործող ուղղակի հարկերը:
3.Ն.Ն. Սելեզնովա-Հարկայիմ մենեջմենտ:

4.Ա.Գ. Ճուղուրյան-Հարկեր և հարկային քաղաքականուփյուն:
5.ARMSTAT.AM, LIBRARY.ANAU.AM

Աղաջանյան Հերմինե Ալբերտի
ամբիոնի դասախոս



Լևոն Տիգրանի Հակոբյան ԷԻԿ
ԷՄ 41 խմբի մագիստրանտ



ՀՏԴ 004.051 ՍԱՐՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

ՌԵՆՏԳԵՆՅԱՆ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ԳՈՐԾԻՔ

Մ.Ա.Պապյան
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան

Առանցքային բառեր. *Ռենտգենյան ճառագայթային գործիք, իոն, էռակտորդինատ թեքումնաչափ, կորելացիա, ֆունտ-դույմ, կոմպրեսիվ:*

Ներկայացված է ռենտգենյան ճառագայթային գործիք, որն օգտագործվում է շինարարության մեջ: Այս գործիքի միջոցով որոշվում է շենքի կամ շինության ամրությունը, ինչպես նաև նախագծանախահաշվային ստանդարտների համապատասխանությունը: Այն շատ հաճախ օգտագործվում է արդեն իսկ իրականացված մոնոլիտ բետոնային աշխատանքների (թաքցված աշխատանքների) մեջ երկաթյա կարկասների համապատասխանությունը նախագծանախահաշվային տվյալների հետ ստուգման համար: Ռենտգենյան ճառագայթային գործիքը չափում է ճշգրիտ էռակտորդինատ թեքումաչափով և անկյունը փոխելով:

Ռենտգենյան ճառագայթային գործիքն օգտագործվում է շինարարության մեջ, որպեսզի պարզվի կատարված շինարարական աշխատանքների որակը և արդյոք ամրանային աշխատանքները կատարվել են նորմերին համապատասխան: Այն կարող են նաև օգտագոծվել պետական շինարարական կազմակերպությունները շենքի ամրությունը և ստանդարտներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Գործիքի նորույթը կայանում է նրանում, որ այս գործիքը դեռևս չի կիրառվում Հայաստանի Հանրապետությունում ոչ մի շինարարական կազմակերպության կողմից: Արտասահմանյան շատ երկրներում ռենտգենյան ճառագայթային գործիքը հայտնի է և ունի լայն կիրառություն: Ես լինելով շինարարության գծով տնտեսագետ գտնում եմ, որ այս գործիքը կիրառելով շինարարության մեջ կխնայենք բավականին ժամանակ և գումար: Նախկինում չօգտագործելով այս գործիքը բոլոր շինարարական կազմակերպությունները ծախսել են, թե հավելյալ գումար, թե բանվորական ուժ: Նախկինում այս գործիքի կատարած աշխատանքը կատարում էին ձեռքով, ինչը անարդյունավետ էր և ոչ ճշգրիտ:



նկ.ա Ռենտգենյան ճառագայթային գործիքի ընդհանուր տեսքը:



նկ.բ Ռենտգենյան ճառագայթային գործիքի պարագաները:

Ռենտգենյան ճառագայթային գործիքը (ՌՃԳ) համապատասխանում է՝ ԵՆ-12504-2-ին և C-805-ին [1], թույլ է տալիս կենտրոնացնել անհատականացված թեստավորման գործընթացը և ունի 2ՄԲ պահուստային հզորություն(նկ.ա), պահպանում ,ցուցադրում և բեռնում է տվյալները դեպի համակարգիչ USB կրիչի միջոցով (նկ.բ): Գործիքը չափում է որոշակի ճշգրիտ եռակոորդինատ թեքաչափումով և անկյունը փոխելով: Այս գործիքը համեմատելով նախորդ թեստավորման գործիքի հետ ես կարող եմ ասել, որ այժմյան գործիքն ունի բավականին առավելություններ:



նկ.գ Թեստավորման գործիք

Նախորդ գործիքը աշխատում է հարվածի հիման վրա, իսկ այժմյան գործիքը աշխատում է էլեկտրական տարբերակով: Բացի այդ այժմյան գործիքը իրականացնում է ավելի ճշգրիտ հաշվարկներ քան նախորդ գործիքը: Նոր գործիքը բավականին արդի է և ունի ավելի լայն կիրառում նախորդ գործիքի համեմատ: Այժմյան գործիքը ավելի հարմարավետ է և ավելի մատչելի, համեմատաբար փոքր է իր չափերով քան նախորդ գործիքը:

Առաջարկություն

Ելնելով այն հանգամանքից ,որ Հայաստանը գտնվում է սեյսմիկ գոտում և հիշելով 1988թ Սպիտակի ավերիչ երկրաշաժը ես առաջարկում եմ շենքերի և շինությունների ամրությունը ստուգել ռենտգենյան ճառագայթային գործիքով, որը ցանկալի է կատարել հիմնական շինարարական աշխատանքների իրականացման ժամանակ: Ավարտական ակտ պետք է տրամադրվի միայն այն շինություններին , որոնք կհամապատասխանեն ստանդարտներին և նախագծերին: Այս գործիքը օգտագործելով բոլոր շինարարական կազմակերպությունները կխնայեն և բանորական ուժ և գումար:

М.А.Папян

РЕНТГЕНОВСКИЙ ЛУЧЕВОЙ ИНСТРУМЕНТ

Представлен рентгеновский прибор, используемый в строительстве. Этот инструмент определяет прочность здания или конструкций, а также соответствие стандартам проектирования. Он часто используется разработчиками, чтобы обеспечить окончательный акт. Рентгеновский прибор измеряет угол и меняющийся точный yerakoordinat tekumachapov.

Ключевые слова. *Рентгеновский прибор, ион, yerakoordinat tekumnachap, корреляция, фунт-дюйм, kompresiv.*

M.A.Papyan

X-RADIATION INSTRUMENT

Presented ray device used in the construction. This tool determines the strength of the building or structures, as well as compliance with design standards. It is often used by developers to ensure that the final act. The X-ray device measures the angle and I have exactly yerakoordinat tekumachapov.

Keywords. *The X-ray device, an ion, yerakoordinat tekumnachap, correlation, lb-in, kompresiv.*

Գրականություն

1. http://www.controls-group.com/

Հովհաննիսյան Անդրեաս Սամվելի
ԷԻԿ ամբիոնի դասախոս

Պապյան Մարիամ Արսենի
ԷՄ 45 խմբի մագիստրանտ





ՀՏԴ 0.04

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՈԼՈՐՏ

Ա.Լ. Եգանյան
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան

Առանցքային բառեր. Տեղեկատվական տեխնոլոգիաներ , տեխնոլոգիական նորարարություն, անշարժ գույք, անշարժ գույքի կառավարում, ռիելթոր, դեվելոփեր, օնլայն-բազաներ.

Սույն հոդվածում ներկայացված է Տեղեկատվական Տեխնոլոգիաների ոլորտի զարգացումը Հայաստանի Հանրապետությունում և դրա ներդրումը անշարժ գույքի ոլորտ, ազդեցությունը տվյալ ոլորտի վրա և , դրա շնորհիվ, ոլորտի զարգացման միտումները:

Ներկայացված են Հայաստանում SS ոլորտի մասնաբաժինը, հիմնական ցուցանիշները, հիմնադրված ձեռնարկությունները՝ թվային տվյալներով:

Հոդվածում մեկնաբանվում է նաև SS ոլորտի ազդեցության մասին անշարժ գույքի ոլորտի վրա, թե ինչպես է դրա օգնությամբ մեզ հասանելի դառնում անշարժ գույքի ոլորտում ամենակարևոր բաղադրիչը՝ ինֆորմացիան:

Տեղեկատվական տեխնոլոգիաները [այսուհետ՝ SS] վերջին տասնամյակներում մի շարք երկրների տնտեսությունների զարգացման հիմք են հանդիսացել կամ մեծ դերակատարություն են ունեցել տնտեսությունների զարգացման գործընթացներում:

SS-ը դարձել են Հայաստանի տնտեսության հիմնական ոլորտներից մեկը՝ նպաստելով երկրում տեխնոլոգիական նորարարության և արտադրողականության բարձրացմանը:


Համաշխարհային բազմաթիվ ընկերություններ մուտք են գործել հայաստանյան տեխնոլոգիական ոլորտ, քանի որ վերջինս ունի հարուստ գիտակրթական ավանդույթներ և բարձրակարգ կադրեր: Այսօր Հայաստանում արդեն գործում են Եվրոպայի, Ռուսաստանի և ԱՄՆ-ի բարձր տեխնոլոգիաների ոլորտի մի շարք ընկերությունների գիտահետազոտական և ծրագրավորման կենտրոններ: Այդ կենտրոնները աշխատում են աշխարհի բազմաթիվ կորպորացիաների կողմից կիրառվող գերժամանակակից տեխնոլոգիաներով և միջոցներով՝ թողարկելով նոր արտադրանք և ծառայություններ կամ առաջարկելով բիզնես խնդիրների լուծումներ: Վերջին տասը տարիների ընթացքում ծրագրային ապահովման և ծառայությունների սեգմենտը արձանագրել է հիրավի լուրջ աճի տեմպեր՝ ապահովելով 27% տարեկան աճ: 2010թ. Հայաստանի ՀՆԱ-ում SS ոլորտի մասնաբաժինը կազմել է շուրջ 1.7%, ինչը կարող է համեմատվել Հնդկաստանի՝ 1.4% և Գերմանիայի՝ 1.3% հետ: 2008-2011թթ. ընթացքում ոլորտում գրանցվել է 16% միջին տարեկան աճ: Ոլորտի մասնաբաժինը արտահանումների ընդհանուր ծավալում աճել է 2003թ. գրանցված 3.6%-ից մինչև 2010թ. 8.55%, ինչը վկայում է Հայստանի տնտեսության համար ծրագրավորման ոլորտի աճող նշանակության մասին [2]:

Վերջին տարիներին տեղական ոլորտը արձանագրել է արտասահմանյան ներդրողների խոշոր ներհոսք, որոնք մուտք են գործել հայկական շուկա տեղի բարձրակարգ երիտասարդ կադրերի շնորհիվ:

SS ոլորտի հիմնական ցուցանիշները. [1]

- ոլորտում ակտիվ աշխատում են ավելի քան 450 ընկերություններ
- ոլորտում ներգրավված է 13000 մասնագետ
- ոլորտի ընդհանուր շրջանառությունը կազմում է շուրջ 550 մլն ԱՄՆ դոլար
- 2015թ. ոլորտում գրանցվել է ավելի քան 17% աճ

Գրաֆիկ.



ՏՀՏ ընկերությունների ընդհանուր թիվը, ըստ հիմնադրման տարիների

SS-ի զարգացումը մեծ դերակատարում ունի տնտեսության բոլոր ոլորտների առաջխաղացման համար: Նաև անշարժ գույքի ոլորտն է բավականին աճել SS-ի ներդրմամբ:

Համակարգիչը և համացանցը թույլ են տալիս նոր կերպով կառուցել և զարգացնել բիզնեսը տարբեր ոլորտներում: Անշարժ գույքի ոլորտի փորձագետները սպասում էին, որ մարդկանց ազատ մուտքը դեպի համացանց արմատախիլ կանի որոշ մասնագետների՝ անշարժ գույքի գործակալների, պահանջարկը շուկայում: Սակայն, դա տեղի չունեցավ: Անշարժ գույքի առք ու վաճառքի ոլորտում գործակալներին և միջնորդներին բացառելու փոխարեն, տվյալ ճյուղին անհրաժեշտ եղան նոր մասնագետներ, այդ թվում՝ մարդիկ, ովքեր պետք է սպասարկեն համացանցի միջոցով տարածվող ինֆորմացիայի հոսքը: Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը հնարավորություն ընձեռեց ստանալ արժեթղթերի, հիփոթեքային վարկերի տոկոսադրույքների, թաղամասի դեմոգրաֆիական ցուցանիշների և այլ արժեքավոր ցուցանիշների մասին տեղեկատվություն, որը նախկինում հասանելի չէր: Իսկ հասանելի ինֆորմացիայի ծավալի մեծացումը բերեց դրա որակի բարձրացմանը, որն իր հերթին բերեց սպառողների լավ տեղեկացվածությանը: Արդեն տիրապետելով ինֆորմացիային՝ սպառողները սկսեցին պահանջել գործակալներից սպասարկման որակի բարձրացում: Օրինակ՝ անշարժ գույքի ոլորտում առցանց տեղեկատվությունը ներառում է այնպիսի գործիք, ինչպիսին վիրտուալ շրջագայությունն է [virtual navigation] , որպեսզի սպառողը պատկերացում ունենա թաղամասի ինֆրակառուցվածքի մասին: Արդյունքում՝ համակարգիչը և համացանցը հիմք հանդիսացան անշարժ գույքի ոլորտի և այդ ոլորտում

առկա մասնագետների կատարելագործմանը: Տեղեկատվական տեխնոլոգիաները նպաստեսցին նոր մասնագիտացումների ստեղծմանը՝ կապված գործարքների կնքման ինովացիոն մոդելների հետ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հետ մեկտեղ համացանցը դարձավ անփոխարինելի միջոց անշարժ գույքի առուվաճառքի ոլորտում: Եթե նախկինում վաճառողը և գնորդը անհրաժեշտ տեղեկատվությունը փնտրում էին թերթերում, ապա այժմ հանդիսանում են համացանցից ակտիվ օգտվողներ, տիրապետում են շուկայի և գների մասին բազային ինֆորմացիային և չեն խուսափում գործակալություններին դիմելուց: Նաև ռիելթորական ընկերությունները արագ հասկացան, որ պետք է ակտիվ օգտագործեն SS ոլորտի ընձեռած հնարավորությունները և ակտիվ գործունեություն ծավալեն այս ոլորտում: Ռիլթորոկան ընկերությունները սկսեցին ստեղծել հայտարարությունների կայքեր՝ օնլայն-բազաներ, որտեղ վաճառողը, տեսնելով առաջարկները, կարողանում է պատկերացում կազմել իր անշարժ գույքի մոտավոր գնի մասին, իսկ գնորդը փնտրում է իրեն հետաքրքրող առաջարկ [3]:

Տեղկատվական տեխնոլոգիաների ներդրումը մեծ դեր է խաղում նաև անշարժ գույքի ընկերությունների ճանաչման գործում: Համաշխարհային ցանցը հնարավորություն է տալիս հսկայական թվով մարդկանց պատմելու տվյալ ընկերության մասին: Վիրտուալ ինֆորմացիայից ճիշտ և գրագետ օգտվելը հնարավորություն է տալիս լուծելու բազմաթիվ խնդիրներ՝ ինչպես գործակալության գովազդի, այնպես էլ ընկերության հիմնական գործունեության՝ անշարժ գույքի առք ու վաճառքի հետ: Տվյալների վիրտուալ բազան պոտենցիալ գնորդներին ազատում է անհրաժեշտությունից գնալու և տեսնելու օբյեկտը: Օնլայն փաստաթղթերի փոխանակումը հնարավորություն է տալիս ստուգելու ապագա գործարքի օրինականությունը՝ առանց տանից դուրս գալու:

SS-ի զարգացումը, անկասկած, օգնեց անշարժ գույքի առուվաճառքի ոլորտը դարձնել մի կազմակերպված կառուցվածք, որում անշարժ գույքի գործակալությունները իրենց վրա են վերցնում համակարգող մարմնի դերը՝ օգնելով կողմնորոշվել շուկայում և' վաճառողին, և' գնորդին:

Անշարժ գույքի կառավարման ոլորտում ևս իրենց ուրույն դերակատարումը ունեն տեղեկատվական տեխնոլոգիաները:

Անշարժ գույքի կառավարման գործընթացի մասնակիցներն են համարվում՝ պետական մարմինները, առևտրային ընկերությունները, ֆիզիկական անձինք: Մասնավորապես՝ պետական ռեգիստրը, կադաստրի և քարտեզագրության ֆեդերալ, տեղական և մունիցիպալ ծառայությունները, դեվելոփեր և կառավարող ընկերությունները, անշարժ գույքի գործակալությունները, տարբեր անշարժ գույքի սեփականատերեր, իրավաբանական և ֆիզիկական անձինք: Յուրաքանչյուր մասնակից, իր իրավասության սահմաններում լուծում է խնդիրներ՝ ինչպես օբյեկտի ստեղծման փուլում, այնպես էլ կառավարման և շահագործման փուլերում: Անշարժ գույքի կառավարման գործում գլխավոր դերակատարությունը վերապահված է պետությանը: Այն ապահովում է տեղեկատվության ինֆրակառուցվածքը պետական, տարածքային և մունիցիպալ մակարդակներով: SS-ի ներդրումը պետական անշարժ գույքի կառավարման ոլորտում ընձեռում է որոշ հնարավորություններ, ինչպիսիք են՝

- ✓ Հողային կադաստրի համակարգի կատարելագործումը,
- ✓ Անշարժ գույքի օբյեկտների պետական հաշվառման ավտոմատացումը,
- ✓ Պետական մարմիններին արժանահավատ տեղեկատվության ապահովումը,
- ✓ Անշարժ գույքի ձևավորման, հաշվառման, գնահատման, իրավունքների գրանցման, գործընթացի ավտոմատացումը:

SS-ն նաև օգնում է անշարժ գույքի շուկայի մեկ այլ կարևոր մասնակցի՝ *դեվելոփեր ընկերություններին* (ինվեստիցիոն-շինարարական): Դեվելոփմենթ ասելով՝ հասկանում ենք տարածաշրջանի զարգացման տեխնոլոգիա և այնպիսի օբյեկտների ստեղծում, որոնց արժեքը ընթացքում

աճում է և ավելանում է այդ տարածաշրջանի գրավչությունը: Դեվելոփեր ընկերությունները լուծում են հետևյալ խնդիրները՝ նախագծում, նախագծի փորձաքննություն, բուն շինարարություն, որոնք պահանջում են այնպիսի տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործում, ինչպիսիք են նախագծերի կառավարումը, նախագծման ավտոմոտացումը և այլն:

Անշարժ գույքի շուկայում կա ևս մեկ մասնակից - *կառավարող ընկերությունը*: Երբ օբյեկտը մտնում է շահագործման փուլ, շենքի սեփականատիրոջ համար հիմնական խնդիր է դառնում դրա ճիշտ կառավարումը: Որոշ սեփականատերեր իրենք են ստեղծում սեփական կառավարման ծառայություն: Սակայն լայն տարածում են ստանում կառավարող ընկերությունները, որոնք ունեն որակավորված մասնագետներ: Այս ընկերությունները կարող են օգտվել համակարգչային տարբեր ծրագրային փաթեթներից՝ դարձնելով գույքի կառավարումն ավտոմատացված, հարմարավետ և դյուրին:

Շուկայի մասնակից են համարվում նաև *ռիելթորական ընկերությունները* [անշարժ գույքի գործակալություններ]: Անշարժ գույքի գործակալությունները իրականացնում են լայն սպեկտորի ռիելթորական ծառայություններ՝ բնակարանների, գրասենյակային տարածքների, տների վարձակալություն և վաճառք, խորհրդատվական ծառայություններ, բնակարանային ծրագրեր, անշարժ գույքի հետ գործողությունների իրավաբանական ուղեկցում: Նման ընկերությունները սովորաբար ունենում են առցանց կայքեր, որտեղ տեղադրված է ինչպես ընկերության մասին ինֆորմացիան, այնպես էլ իրենց բազայում առկա բոլոր վաճառվող, վարձակալության տրվող անշարժ գույքերի մասին ինֆորմացիա [4]:

Այսպիսով՝ ՏՏ-ն անկասկած կարևոր նշանակություն ունեն անշարժ գույքի ոլորտի զարգացման, առաջխաղացման մեջ: Դրանք ապահովում են ճիշտ, հասանելի և լայն ինֆորմացիա՝ դարձնելով օբյեկտի կառավարումը դյուրին և հարմարավետ՝ իր կյանքի տևողության բոլոր փուլերում: Բազմաթիվ ծրագրային ապահովումների միջոցով մասնագետը կարողանում է լուծել իր առջև դրված խնդիրները՝ թ՛ե օբյեկտի կառավարման, թ՛ե առք ու վաճառքի և վարձակալության կազմակերպման, թ՛ե գնահատման և թ՛ե շուկայի վերլուծությունների համար: Հայաստանի Հանրապետությունում ևս անշարժ գույքի և տեղեկատվական տեխնոլոգիայի ոլորտների համատեղումը դրական միտումներ է գրանցում՝ հեռանկարային դարձնում անշարժ գույքի ոլորտի աճն ու զարգացումը, որն էլ իր հերթին հանդիսանում է երկրի տնտեսության հիմքը:

INFORMATION TECHNOLOGIES INVESTMENT IN THE SPHERE OF REAL ESTATE

Magister- A.L. Yeganyan
National Univercity of Architecture and Construction of Armenia

Key words. *Information technologies, technological innovation, real property, real estate management, realtor, developer, online databases.*

This article presents the development of information technologies in Armenia and its contribution to the real estate industry, the impact on this sector and, consequently, the industry of development trends.

The part of IT sector in Armenia, the main indicators, the established enterprises with digital data are presented.

The article also commented on the impact of IT in the real estate sector and how the most important component in real estate industry which is the information becomes available to us.

ВЛОЖЕНИЕ ИНФОРМАЦИОННЫХ ТЕХНОЛОГИЙ В СФЕРЕ НЕДВИЖИМОСТИ

Магистр - А.Л. Еганян
Национальный Университет Архитектуры и Строительства Армении

Ключевые слова. *Информационные технологии, технологическая инновация, недвижимость, управление недвижимости, риэлтор, девелопер, онлайн база данных.*

В данной статье представлены развитие информационных технологий в Республике Армении и ее вклад в сфере недвижимости, воздействие на данный отрасль и , как следствие, тренды развития отрасли.

Цифровыми данными представлены часть сферы Информационных Технологий в Армении, основные показатели сектора, созданные предприятия.

В статье также объясняется о влиянии сфере Информационных Технологий на сфере недвижимости, как с ее помощью нам становится доступным наиболее важный компонент в сфере недвижимости – информация.

Գրականության ցանկ

1. Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ - <<Հայաստանում տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտի հետազոտություն 2014>> - Երևան, 2014թ.
2. http://www.globalspc.am/publications/publication-3.pdf
3. http://innovanews.ru- Как информационные технологии изменили рынок недвижимости- 02.02.2010
4. www.kuprava.ru - Информационные технологии по областям применения

Շահինյան Արմեն Զավենի
ԷԻԿ ամբիոնի դասախոս

Եգանյան Անահիտ Լևոնի
ԷՄ 44 խմբի մագիստրանտ





ՀՏԴ 697.113

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Դ.Լ. Եգանյան
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան

Առանցքային բառեր. *բազմաբնակարան բնակարանային ֆոնդ, Էներգախնայողություն, էներգաարդյունավետություն, ջերմամեկուսացում, նորմատիվատեխնիկական փաստաթղթեր:*

Հոդվածում ներկայացված են Հայաստանի Հանրապետության բազմաբնակարան բնակելի շենքերի էներգախնայողության և էներգաարդյունավետությանն ուղղված խնդիրները: Հանրապետության մարզերում և տարածքներում կան շենքեր, որոնք չեն համապատասխանում արդի շինարարական նորմերին. առավել ևս դրանք չունեն նվազագույն ցուցանիշները ջերմամեկուսացման խնդիրը լուծելու համար, ինչի արդյունքում կանգնում ենք ծախսերի առջև: Բարձրացված է շենքերում էներգախնայողության ապահովման և էներգետիկ ծախսերի նվազեցման արդյունավետ ուղիները գտնելու հարցը:

Բազմաբնակարան բնակարանային ֆոնդը երկրի առանցքային ակտիվներից մեկն է և լուրջ ուշադրության կարիք ունի, և ժամանակի մարտահրավերները ներկայացնում են նոր, ավելի մեծ պահանջներ բազմաբնակարան բնակարանային ֆոնդի հետագա նորացման և արդիականացման նկատմամբ: Մեր տարածաշրջանի երկրների մեծ մասում էներգիայի օգտագործման 30%-ը ուղղված է բազմաբնակարան շենքերի ջեռուցմանը [1], քանի որ նախկին շինարարական և ջեռուցման մեթոդաբանություններն ուղղված չէին էներգաարդյունավետությանը (ԷԱ): Հայաստանում բնակչության կեսից ավելին բնակվում է բազմաբնակարան շենքերում, որոնց շուրջ 75 %-ը կառուցված են 1951-1990 թթ. ընկած ժամանակահատվածում: Հայաստանի բնակարանների մեծ մասը բաղկացած է պանելային բազմահարկ շենքերից, որոնք սովորաբար վատ են ջերմամեկուսացված և որպես արդյունք ապահովում են ԷԱ-ի ցածր մակարդակ: Երկրի տնտեսության մեջ սպառվող էլեկտրաէներգիայի ավելի քան 35 %-ը, ջերմային էներգիայի ավելի քան 25 %-ը և դրանց հետ պայմանավորված՝ ջերմոցային գազերի արտանետումների ավելի քան 40 %-ը բաժին է ընկնում բնակարանային հատվածին [1]: Բազմաբնակարան շենքերի ջերմամեկուսացման և էներգախնայողության ներկայիս ցուցանիշները գոհացուցիչ չեն:

ՀՀ կառավարությունը, հիմք ընդունելով էներգետիկ ռեսուրսների արդյունավետ օգտագործումը և շրջակա միջավայրի պահպանության, ջերմոցային գազերի արտանետումների կրճատման անհրաժեշտությունը, առաջնային է համարում բազմաբնակարան շենքերի և այլ շինությունների էներգախնայողության (ԷԽ) և էներգաարդյունավետության բարձրացման խնդիրները և վարում է նպատակաուղղված քաղաքականություն [2]:

Կառավարության կողմից 2011 թ. հավանության է արժանացել <<ՀՀ բազմաբնակարան բնակարանային ֆոնդի կառավարման, պահպանման և շահագործման, բարելավման հնգամյա ռազմավարական ծրագիրը>>, որով ամրագրվել են.

- բազմաբնակարան բնակարանային ֆոնդի կառավարման, պահպանման և շահագործման բնագավառի բարեփոխումների հիմնական սկզբունքները,
- կառավարման նոր մոդելի կիրառման փուլերը,
- պետական աջակցության ձևերն ու մեխանիզմները:

Ռազմավարական ծրագրի իրականացման արդյունավետության նախադրյալներից է միջոցառումների ժամանակացույցով նախատեսված՝ բազմաբնակարան բնակարանային ֆոնդի վերաբերյալ օրենսդրական դաշտի կատարելագործումը և բնագավառը կարգավորող հիմնական օրենքի կատարելագործումը, միջոցառման իրականացումը, որը ներկայումս գտնվում է մշակման փուլում:

Այսօր ՀՀ-ում գործող օրենսդրական ակտերը, որոնք առնչվում են այս ոլորտին, հետևյալն են՝ §Էներգետիկայի մասին¦, §Էներգախնայողության և վերականգնվող էներգիայի մասին¦, §Քաղաքաշինության մասին¦, §Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին¦, §Համատիրությունների մասին¦ ՀՀ օրենքները: Կարևորվում է նաև 2007 թ. ՀՀ Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ազգային ծրագիրը, 2010 թ. հաստատվել են՝ էներգաէֆեկտիվության գործողությունների ազգային ծրագիրը և քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համակարգի հայեցակարգը, իսկ 2011 թ.՝ բազմաբնակարան բնակելի շենքերի ԲԲԾ կառավարման, պահպանման և շահագործման բարելավման հնգամյա ռազմավարական ծրագիրը: Դրա հետ մեկտեղ կարևոր նշանակություն ունի նաև ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի կողմից 2013 թ. ընդունված՝ կայուն բնակելի ֆոնդի և հողի կառավարման ռեգիոնալ ռազմավարությունը 2014-2020 թթ. համար:

Ոլորտում առկա հիմնախնդիրները բխում են հետևյալ պահանջների բացակայությունից.

- «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքում և քաղաքաշինության բնագավառում գործող այլ իրավական ակտերում ԷԱ և ԷԽ ներկայացվող ցուցանիշները,
- ներկայումս գործող օրենսդրական դաշտում շենքերի ԷԱ վերաբերվող հստակ պահանջները,
- ԷԽ-ի հարցերի վերաբերյալ հանրային իրազեկման ռազմավարության բացկայություն, մասնավորապես, սպառողներին շենքերի էներգետիկ ցուցանիշների վերաբերյալ տեղեկության տրամադրումը:

Բազմաբնակարան շենքերի ԷԱ-ի բարձրացման ծրագիրը նպատակ ունի ցույց տալ, որ համակցված ջանքերն այս ոլորտում կարող են էականորեն բարելավել Հայաստանում ցածր եկամուտ ունեցող ընտանիքների կացության պայմանները, նվազեցնեն էներգիայի ծախսերը և ծխագազերի արտանետումները: ԷԱ-ի ոլորում աշխատող մասնագիտացված ընկերությունները, Էներգախնայող նյութեր արտադրող և ներմուծող կազմակերպությունները, շինարարական ընկերությունները, ֆինանսական ինստիտուտները, համատիրությունները և քաղաքապետարանները միահամուռ ուժերով մշակում են բազմաբնակարան շենքերի կենսունակ և կայուն ֆինանսական մոդելներ:

Ստորև բերված են բազմաբնակարան շենքերի ԷԱ-ն բարձրացնող ծրագրի հիմնական նպատակները.

- բարելավել ՀՀ-ում բազմաբնակարան շենքերի ԷԱ-ի ներդրումների մակարդակը,
- մշակել և փորձարկել կենսունակ ֆինանսական մոդելներ,
- նպաստել համատիրությունների կայացմանը,
- զարգացնել ազգային ինստիտուցիոնալ կարողությունները,
- առաջ բերել էկո տուն, էկո համակարգ հասկացությունը:

Բազմաբնակարան շենքերում ԷԱ-ի բարձրացման ուղղությամբ իրականացվում և իրականացվել են նաև հետևյալ ծրագրերը [2].

- «Շենքերի էներգետիկ արդյունավետության բարձրացում» ծրագիրը: Այն 2010 թ. իրականացնում է կառավարությունը ՀՀ Բնապահպանության նախարարության հետ համատեղ՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրերի և Գլոբալ Էկոլոգիական Ֆոնդի աջակցությամբ,
- «Բնակելի շենքերում էներգաարդյունավետության բարելավման ուսումնասիրություն» ծրագիրը, որն իրականացվում է Կառավարության կողմից Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի աջակցությամբ:
- Գերմանական KFW բանկի կողմից նախապատրաստվում է հանրապետության դպրոցներում իրականացվող ԷԽ և ԷԱ ծրագրերը:

Ներկայացված բազմաբանակարան բնակարանային շենքերի նկարներից (նկ. 1 և 2) կարելի է ենթադրել, որ եթե կատարվի շենքի երեսպատում՝ օգտագործելով որակյալ հումք և նյութեր (նկ. 1), հնարավոր է ապահովել էներգաարդյունավետության և էներգախնայողության բավականին զգալի մակարդակ բնակելի շենքում (նկ. 2): Պատկերացման համար կարելի է նշել էներգաարդյունավետ է համարվում այն շինությունը, որում էներգիայի խնայողությունը համահունչ է միկրոկլիմային: Այդպիսի տներում էներգախնայողությունը կարող է հասնել 90%-ի: Էներգախնայող տներում տարեկան անհրաժեշտ ջերմատվությունը կարող է չգերազանցել 15 կՎտ/ժ 1մ^2-ի համար:


Դեռևս գոյություն չունի <<Էներգախնայող տուն>> հասկացության միջազգային սահմանումը, բայց և այնպես Եվրոպայում գոյություն ունի հետևյալ դասակարգումը [3,4].

- *Ցածր էներգաէֆեկտիվ տներ.* օգտագործում են մոտ 50%-ով ցածր էներգիա քան ստանդարտ շինությունները, որոնք կառուցվել են սովետական ժամանակաշրջանում գործող նորմերին համապատասխան:


- *Տներ՝ ծայրահեղ ցածր էներգիայի սպառմամբ.* կարող են լինել շինություններ, որոնք ապահովում են ավելի բարձր էներգաարդյունավետություն և ցուցաբերում են աննշան ազդեցություն շրջակա միջավայրի վրա: Ուլտրաէֆեկտիվ էներգախնայողության տները ծախսում են մոտ 70-90% ավելի քիչ քան նախկինում կառուցված տները: Ուլտրախնայող էներգախնայողությամբ հստակ ցուցադրված պահանջներով տների օրինակ հանդիսանում են գերմանական <<Passive House>>-ը, ֆրանսիական <<Effinergie>>-ը, շվեցարական <<Minergie>>-ն:

- *Տներ, որոնք իրենք են էներգիա ստեղծում.* շինություններ են, որոնք արտադրում են էլեկտրաէներգիա սեփական կարիքների համար: Որոշ քանակությունը կարող են ամռանը վաճառել էներգետիկ կազմակերպությանը և ձմռանը վերագնել այն: Գերազանց ջերմամեկուսացումը, դիզայնի նորարարական մոտեցումները և էներգաարտադրության մոտեցումների կիրառումը հիմք են հանդիսանում նմանատիպ շինությունների գոյության համար:


- Շինություն՝ ածխաթթու գազի զրոյական արտանետմամբ. շինությունը չի արտանետում ածխաթթու գազ: Դա նշանակում է, որ տունն իր իսկ արտադրած էներգիայով ապահովում է ջեռուցում, հովացում, տաք ջրի մատակարարում, լուսավորություն: Մեծ Բրիտանիայում 2016 թվականի դրությամբ բոլոր նոր տները նախատեսում են կառուցել այս ստանդարտով:




Նկ. 1. Բնակելի շենք՝ ջերմամեկուսացման աշխատանքներ կատարելիս



Նկ. 2. Ջերմամեկուսացված բնակելի շենք



Նկ. 3. Բնակելի տուն՝ առանց ջերմամեկուսացման



Նկ. 4. Բնակելի տուն՝ ջերմամեկուսացված

Նկ. 3-ում պատկերված է բնակելի տուն, որը ջերմամեկուսացված չէ և ջեռուցվում է անհատական ջեռուցման համակարգով: Նկարից երևում է, որ պատերը (նշված է կապույտ գույնով) սառն են:

Նկ. 4-ում պատկերված է բնակելի տուն, որը ջերմամեկուսացված է: Տաք եղանակին ներսում հով է, իսկ ցուրտ եղանակին՝ տաք:

Շենքերում էներգախնայողության ապահովման և էներգետիկ ծախսերի նվազեցման ամենաարդյունավետ եղանակը եղել և մնում է պատշաճ ջերմամեկուսացումը, որը կհամապատասխանի ստանդարտներին, որոնք մշակված են էներգիայի օգտագործման ցուցանիշների նվազեցման համար: Հետևաբար, կարևոր է բավականին լուրջ ուշադրություն դարձնել այս ոլորտին, որի զարգացման համար անհրաժեշտ միջոցները կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

- օրենսդրական և նորմատիվ դաշտի կատարելագործում, որը կխթանի ԷԽ և ԷԱ ոլորտում եվրոպական և միջազգային փորձի կիրառում,
- տեղական էներգաարդյունավետ շինանյութերի արտադրությունը խթանելու պայմանների ստեղծում,
- շենքերի ԷԽ և ԷԱ միջոցառումների կիրառմամբ ինտեգրված նախագծում,
- ԷԽ և ԷԱ միջոցառումների կիրառման առավելությունների անհրաժեշտության վերաբերյալ կառուցապատողների իրազեկում,
- ՄԱԿ-ի և այլ միջազգային կառույցների կողմից իրականացվող ծրագրերին Հայաստանի ակտիվ մասնակցության համար անհրաժեշտ պայմանների ստեղծում:

Այսպիսով՝ բնակելի ֆոնդում էներգաօգտագործման խնդրի լուծման համար անհրաժեշտ է վերանայել շինությունների կառուցման ժամանակ օգտագործվող նորմատիվները, համապատասխան կլիմայական պայմաններում մշակել ադապտիվ տեխնիկական լուծումներ էներգաէֆեկտիվ շերտավոր պատերի համար: Բացի այդ հանրապետությունում պետք է ապահովել բարձրորակ կերամիկական ջերմամեկուսիչ երեսպատման սալի, անկերային և մետաղական ամրանների արտադրությունը, որոնք պետք է համապատասխանեն եվրոպական ստանդարտներին: Այժմ օրեցօր առավել արդիական են դառնում էներգախնայող տեխնոլոգիաները, ինչպիսին են՝ բազալտե գերնուրբ մանրաթել՝ պատված ալյումինե փայլաթերթով, պեռլիտե սալեր, փրփրապլաստեր, ջերմաանդրադարձիչներ (Thermo–Reflex), երեսպատման և ներքնապատման պեռլիտե սալեր: Էներգիայի ռացիոնալ օգտագործումը զգալիորեն նպաստում է ֆինանսական ծախսերի նվազեցմանը՝ տների և բնակարանների ջեռուցման և հովացման գործընթացում: Այդ իսկ պատճառով յուրաքանչյուր շինարարական կազմակերպության համար

էներգախնայողությունը դառնում է հիմնական նպատակային ուղղվածություններից մեկը: Նմանատիպ տեխնոլոգիաների ներդրումը շինարարական գործընթացի մեջ ոչ միայն հետքրքրում է շինարարական կազմակերպությանը, այլև սեփականատիրոջը:

Էներգախնայողությունը պետք է դառնա հիմնական կարևոր ուղղություններից ինչպես նախագծման,այնպես էլ շինարարության, գնահատման և վաճառքի գործընթացում բնակելի և կոմերցիոն շինությունների համար:

Էներգաէֆեկտիվ տեխնոլոգիաները դառնում են առավել պահանջվող և հասանելի: Բայց և այնպես հիմանական արգելքը օգտագործվող տեխնոլոգիաների գնի բարձր լինելն է, սակայն, այն ժամանակի ընթացքում ամբողջապես կոմպենսացվում է ծախսված էներգիայի հաշվին: էֆեկտիվ ջերմամեկուսիչ նյութերի օգտագործումը և նոր տեխնոլոգիաների կիրառումը Էներգախնայողության բարձրացման հիմնական ուղղություն է հանդիսանում ինչպես նորակառույց շինությունների, այնպես էլ արդեն կառուցված և շահագործման հանձնվածների համար, որոնցում անհրաժեշտ կլինի իրականացնել կապիտալ վերանորոգում կապված էներգախնայողության բարձրացման հետ:

ПРОБЛЕМЫ ЭНЕРГОСБЕРЕЖЕНИЯ МНОГОКВАРТИРНЫХ ЗДАНИЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Д.Л. Еганян
Национальный университет архитектуры и строительства Армении

Ключевые слова: *фонд многоквартирных зданий, энергосбережение, энергоэффективность, теплоизоляция, нормативные документы.*

Рассматриваются проблемы энергосбережения и энергоэффективности многоэтажных жилых зданий Республики Армения. В марзах или регионах нашей страны существуют здания, которые не соответствуют действующим стандартам строительства, более того они не обладают минимальными средствами для решения проблем теплоизоляции, в результате чего сталкиваются с большими затратами. Поднимается важный вопрос: энергоэффективность зданий и поиск наиболее эффективных способов снижения затрат на электронасителей.

ENERGY SAVING PROBLEMS OF ARMENIAN'S APARTMENT BUINDINGS

D.L. Yeganyan
National Univercity of Architecture and Construction of Armenia

Key Wards. *apartment housing found, energy saving, energy efficiency, thermal insulation, normative documents.*

This article presents the problems of apartment buildings energy saving and energy efficiency in Republic of Armenia. Now in our country's regions, there are buildings that do not meet modern construction standards; moreover, they do not have the minimum rates in order to solve the problem of thermal insulation, as a result, faced with high costs. The article tries to raise important issues on ensuring energy efficiency in buildings and on finding the most effective ways to reduce energy costs.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Иванова Н. “Энергоэффективные дом.” Загородное обозрение. - 2011. - №11. - С. 10-12.
2. Ковалев В. Цель - экономия, или "Зеленый дом" - наше будущее?/ Идеи вашего дома. - 2010. - № 11. - С. 188-198.

3 Habitat for Humantiy Armenia «Բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության բարձրացման ծրագիր՝ ուղղված ցածր եկամուտ ունեցող ընտանիքներին».(փորձնական ծրագիր) Երևան քաղաքի համատիրությունների ներուժի հետազոտություն 26.11.2013-15.03.2014թթ. Հաշվետվություն (պատրաստված է ՈՒրբան կայուն զարգացման հիմնադրամի կողմից)
Երևան, Հայաստան էջերի քանակը 76, 28 փետրվարի 2014թ.
4. Հայաստանի Հանրապետությունում վերկանգնվող էներգետիկայի զարգացման ուղեցուցային ծրագիր.
Ներկայացվել է Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ (ՀՎԷԷՀ)։ Մշակվել է Դենիշ Էներջի մենեջմենթ A/S։ մայիս 2011թ. Էջերի քանակը 11։

Հովհաննիսյան Աշխեն Հարությունի
ԷԻԿ ամբիոնի դասախոս



Եգանյան Դավիթ Լևոնի
ԷՄ 44 խմբի մագիստրանտ



ՀՏԴ 336 ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՍՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հ. Է. Հարությունյան

Ճարտարապետության և Շինարարության Հայաստանի Ազգային Համալսարան

Բանալի բառեր[a] *հարկեր, տնտեսական աճ, հարկային քաղաքականություն*

Հոդվածում հիմնականում խոսվում է ,որ Հանրապետությունում պետական բյուջեի եկամտային մասի ձևավորման ժամանակ պետք է հաշվի առնել այն, որ իրականացվող հարկային քաղաքականությունը դեռևս շատ հեռու է կատարյալ լինելուց: Տնտեսական նոր հարաբերություններին անցման փուլի համար հարկային բեռը բավականաչափ բարձր է, օրենսդրությունը խիստ բարդ է, հարկային ծառայությունների մասնագիտական և տեխնիկական հագեցվածությունը զգալիորեն ցածր է և այլն: Նման պայմաններում ստեղծվում է այնպիսի իրավիճակ, երբ բարեխիղճ հարկատուներն իրենց վրա կրում են ողջ հարկային ճնշումը այն դեպքում, երբ մի շարք խոշոր տնտեսավարող սուբյեկտներ խուսափում են հարկերի վճարումից կամ ընդհանրապես չեն վճարում:

Տնտեսական գործունեության համար հարկային բարենպաստ դաշտի ստեղծման, հարկման օբյեկտների ու սուբյեկտների սահմանման, հարկերի դրույքաչափերի, դրանց կարգավորման, հարկային կարգապահության, պատասխանատվության և վերահսկողության հետ կապված խնդիրների լուծումն, ըստ էության, երկրում արդյունավետ հարկային համակարգի կառուցման հիմնական նախադրյալներն են: Հարկային համակարգը որպես կարգավորման գործիք դիտարկելիս հարկ է նշել դրա նշանակությունն ինչպես պետության համար՝ բյուջեի եկամուտների համալրման մասով, այնպես էլ իբրև զարգացման տնտեսական և սոցիալական ոլորտների վրա ազդող ֆինանսական կատեգորիա, որը համակարգում է դրանք պահանջվող համամասնություններով՝ պետության կայուն զարգացման և ժողովրդի բարեկեցությունը բարձրացնելու համար: Հարկերը պետք է խրախուսեն տնտեսական աճը, բարձրացնեն աշխատանքի արտադրողականությունը, բարելավեն արտադրության որակը, շուկայական մեխանիզմի գործունեության առումով կրեն հիմնական բեռը: Ցանկացած պետության հարկային համակարգը մեծապես որոշվում է երկրի զարգացման ազգային, պատմական և տնտեսական պայմաններով, հետևաբար՝ դրանց գնահատման համար առավել չափօրինակ բնութագրեր առանձնացնելը գործնականում բավական բարդ է: Անհրաժեշտ է նշել, որ հարկերին միաժամանակ բնորոշ է և կայունություն, և ճկունություն: Ինչքան կայուն է հարկային համակարգը, այնքան ավելի հաստատ է իրեն զգում ձեռնարկատերը, քանի որ նա կարող է նախօ- րոք և բավականին ճիշտ հաշվարկել այս կամ այն տնտեսական որոշման, կնքված պայմանագրի կամ ֆինանսական գործարքի

արդյունավետությունը: Անորոշությունը ձեռնարկատիրության թշնամին է: Ձեռնարկատիրական գործունեությունը միշտ կապված է ռիսկի հետ, այդուհանդերձ, այն կրկնապատկվում է, եթե անկայուն տնտեսական վիճակին գումարվում է հարկային համակարգի անկայունությունը՝ դրույքաչափերի, հարկման պայմանների և հատկապես հարկման սկզբունքների անընդհատ փոփոխությունը: Հարկային տոկոսադրույքների և հարկման դրույքաչափերի անորոշության պայմաններում անհնար է հաշվարկել, թե սպասվող եկամտի որ մասն է գնալու բյուջե և որ մասն է մնալու ձեռնարկատերերին: Հարկային համակարգի կայունությունը չի նշանակում, որ հարկերի տեսակները, դրույքները, արտոնությունները և պատժամիջոցները կարող են հաստատվել մեկ անգամ և ընդմիշտ: Քարացածե հարկային համակարգ չկա և չի կարող լինել: Ցանկացած հարկային համակարգ պետք է արտացոլի հասարակական զարգացման միտումները, երկրի տնտեսական, սոցիալքաղաքական իրավիճակը, կառավարության նկատմամբ բնակչության վստահության աստիճանը և այլն: Հակառակ դեպքում, հարկային համակարգը դադարում է դառնալ տնտեսության կարգավորիչ և զարգացմանը խթանիչ գործոն, մտնում է հակադրության մեջ ազգային շահերի և զարգացման օբյեկտիվ այլ պայմանների հետ: Այս հանգամանքից ելնելով, հարկային համակարգում և վարվող հարկային քաղաքականությունում կատարվում են անհրաժեշտ փոփոխություններ: [4]:

2013թ. հունվարի 1-ից §Եկամտային հարկի մասին¦ ՀՀ օրենքում կատարվել են մի շարք փոփոխություններ:

Համաձայն §Եկամտային հարկի մասին¦ ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի՝

Աղյուսակ 1.

1. Եկամտային հարկը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով.

Ամսեկան հարկվող եկամտի չափը	Հարկի գումարը
Մինչև 120.000 դրամ	Հարկվող եկամուտի 24.4 տոկոսը
120.000 դրամից ավելի	29.280 դրամին գումարած 120.000 դրամը գերազանցող գումարի 26 տոկոսը

Աղյուսակ 2.

2. Չհարկված եկամուտներից եկամտային հարկը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով.

Ամսեկան հարկվող եկամտի չափը	Հարկի գումարը
Մինչև 1.440.000 դրամ	Հարկվող եկամուտի 24,4 տոկոսը
1.440.000 դրամից ավելի	351.360 դրամին գումարած 1.440.000 դրամը գերազանցող գումարի 26 տոկոսը

Այս դրույքաչափերով չեն վերբերվում հետևյալ 2 կետերին՝

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կամավոր կուտակային կենսաթոշակային ապահովագրության պայմաններով կուտակված միջոցները օրենսդրությամբ սահմանված դեպքերում ֆիզիկական անձի կողմից միանվագ ստացման դեպքում եկամտային հարկը հաշվարկվում է սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դրույքաչափերով՝ հաշվի չառնելով սույն օրենքով սահմանված նվազեցումները:

2. Հաստատագրված վճար վճարող անհատ ձեռնարկատերի համար եկամտային հարկը հաշվարկվում է 3 տոկոս դրույքաճաձով՝ սույն օրենքով սահմանված կարգով որոշված եկամտից: [1]:

Հարկ է նշել, որ հանրապետությունում մինչև վերջերս օրենսդրորեն ամրագրված չէր նվազագույն սպառողական զամբյուղի հաշվարկման պարտադիր բնույթը, որի պատճառով էլ այդ ուղղությամբ պաշտոնական հաշվարկներ չէին իրականացվում, և տվյալ խնդիրն էլ հիմնարար լուծում չէր ստանում: Անկախ այն հանգամանքից, որ՝Աշխատանքի վարձատրության մասին՝ ՀՀ օրենքում ամրագրված է դրույթ կենսաապահովման նվազագույն զամբյուղի արժեքին հասնելու մասին, այդուհանդերձ, օրենքում բացակայում է դրույթ դրա և եկամտահարկով չհարկվող շեմի հավասարեցման մասին:

Ըստ էության պետք է նշել, որ դրույքաչափերի փոփոխությունը էականորեն թեթևացրեց միջին և դրանից բարձր աշխատավարձ ստացողների հարկային բեռը, որը, նկատի ունենալով նաև առաջիկա ժամանակահատվածում բնակչության կենսամակարդակի գոյություն ունեցող մակարդակի բարելավման չնախատեսումը, կոշտ բյուջետային քաղաքականության շարունակումը և այլն, կարելի է դրական համարել:

Միևնույն ժամանակ պետք է նշել որ կատարված փոփոխություններով դեռևս ամբողջությամբ և լիարժեք լուծում չստացավ չփաստաթղթավորված շրջանառության խնդիրը, ինչը պահանջում է հարկային վարչարարության արդյունավետության և ֆինանսական կարգապահության կտրուկ բարձրացում: [2]:

Չնայած վերջին տարիներին հանրապետության հարկային ոլորտում իրականացված բարեփոխումները էականորեն նպաստեցին հանրապետության հարկաբյուջետային համակարգի

կայացմանը, այնուհանդերձ, ներկայումս այդ ոլորտում առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնք նվազեցնում են հարկային համակարգի արդյունավետությունը, ինչը պայմանավորված է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով: Ըստ էության, հանրապետության հարկային քաղաքականության վրա ազդող օբյեկտիվ գործոնների շարքին կարելի է դասել օրենսդրությամբ սահմանված ծավալով եկամուտների կենտրոնացման գործում հարկային համակարգի ցածր հնարավորությունները, հարկային բեռի ծավալը ՀՆԱ-ում, հարկային բեռի բաշխումը հարկատուների առավել նեղ շրջանակի վրա, որի արդյունքում մեծանում է վերջիններիս վրա հարկային ճնշումը, հարկային համակարգի վերափոխումը որպես տնտեսական աճին խանգարող, ներդրումային ակտիվությունը նվազեցնող գործոնի, տնտեսության իրական հատվածի հնարավորությունների նվազումը, ձեռնարկատիրական ակտիվության ուղղությամբ հարկային մեխանիզմի կարգավորիչ և խթանիչ լծակների թուլացումը և այլն: [3]:

Հարկային քաղաքականության գլխավոր խնդիրը միջին ժամկետ հեռանկարում պետք է լինի կառուցվածքային և ինստիտուցիոնալ բարեփոխումների ապահովման միջոցով տնտեսական զարգացման համար համապատասխան պայմանների ստեղծումը: Բյուջեի եկամտային բազան պետք է լինի իրական: Ինչպես ցույց է տալիս փորձը, որպես կանոն, կառավարության կանխատեսումներն այս ուղղությամբ գրեթե միշտ չեն համապատասխանում իրականությանը:

Այդ առումով, կարծում եմ, հանրապետության հարկային համակարգում իրականացվող վերափոխումները պետք է ունենան երեք հիմնական ուղղություն.

- հարկային դրույքաչափերի իջեցում և դրանց կայունացում,
- հարկային օրենսդրության պարզեցում,
- հարկային ծառայությունների մասնագիտական և տեխնիկական հագեցվածության մակարդակի բարձրացում:

Կարծում եմ, որ նշված պահանջներին զուգահեռ, խիստ կարևորվում է նաև իրականացվող քաղաքականության կայունության և կանխատեսելիության ապահովումը:

О. Э. Арутюнян

РА СИСТЕМА НАЛОГООБЛОЖЕНИЯ ДЛЯ РАСЧЕТА НАЛОГА НА ПРИБЫЛЬ ПОДХОДЫ И ВОПРОСЫ МЕТОДОЛОГИИ

При формировании доходной части бюджета следует учитывать тот факт, что налоговая политика все еще очень далека от совершенства. Переходный период для налоговой нагрузки достаточно высок, законодательство очень сложное, техническое оборудование и профессиональные услуги в сфере налогообложения значительно ниже, и так далее. Такие условия создаются в такой ситуации, когда все честные налогоплательщики несут налоговое давление в случае, когда ряд крупных предприятий, уклонения от уплаты налогов не платят вообще.

Ключевые слова: *налоги, экономический рост, налоговая политика*

H. Harutyunyan

AR TAXATION SYSTEM FOR INCOME TAX CALCULATION APPROACHES AND ISSUES OF METHODOLOGY

During the formation of the revenue side of the budget should take into account the fact that tax policy is still very far from being perfect. of the transition period for the tax burden is sufficiently high, the legislation is very complicated, technical equipment and professional tax services is much lower and so on. Such conditions are created in such a situation, when all honest taxpayers to bear the tax pressure in the case when a number of major businesses avoid paying taxes or do not pay at all.

Key words: *taxes, economic growth, tax policy*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. §Եկամտային հարկի մասին¦ ՀՀ օրենք
2. ДЕРНБЕРГ Р. Л. Международное налогообложение. Пер. с англ. М.£ ЮНИТИ 1997г. 375 стр.
3. ДУКАНИЧ Л. В. Налоги и налогообложение. Уч. Пос. Феникс 2000 г. 416 стр.
4. КУГАЕНКО А. А. Теория налогообложения. Вузовская книга 1999г. 344 стр.

Աղաջանյան Հերմինե Ալբերտի
ԷԻԿ ամբիոնի դասախոս



Հարությունյան Հովիկ Էդվարդի
ԷՄ 41 խմբի մագիստրանտ



ՀՏԴ 336.027

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լ. Ն. Միքայելյան
Ճարտարապետության և Շինարարության Հայաստանի Ազգային Համալսարան

Բանալի բառեր *– բանկային համակարգ, ֆինանսական ծառայություն, ֆինանսական միջնորդ, պլաստիկ քարտեր, ֆինանսական արդյունք, տոկոսային եկամուտներ, շահույթ*

Հոդվածը նվիրված է բանկային ծառայությունների հարցերի կարգավորանը ՀՀ-ում:

Բնականաբար, տվյալ բանկի կողմից պահանջված և որակյալ ծառայության առաջարկը (օր.՝ ինտերնետ - բանկ ծառայություն) աստիճանաբար ամրապնդում է նրա դիրքերը բանկային մրցակցային շուկայում: Տվյալ ժամանակակից ծառայությունը տալիս է հնարավորություն առանց բանկ այցելելու կատարել բանկային փոխանցումներ աշխատավայրից կամ բնակարանից, որը տնտեսում է, և՛ ֆինանսական ծախսերը, և՛ ամենակարևորը՝ ժամանակը:

Այժմ ՀՀ բանկային համակարգում քարտերով կարելի է իրականացնել մի շարք գործարքներ, որը ուղղակի խնայում է շատ մեծ ժամանակ: Քարտերով կարելի է կատարել կանխիկացում, տարբեր վճարումներ (օրինակ՝ կոմունալ վճարումներ, բջջային հեռախոսների լիցքավորում, քարտով այլ քարտային հաշիվներին փոխանցումներ, ինտերնետով տարբեր ծառայությունների պատվիրում կամ ապրանքների ձեռքբերում, այլ երկրներում հյուրանոցային համարների ամրագրում, ավտոմեքենաների վարձույթ, առողջապահական ու ապահովագրական ծախսերի կատարում և այլն), իսկ մի շարք եվրոպական զարգացած երկրներում պլաստիկ քարտով կարելի է անգամ օգտվել հասարակական տրանսպորտից:

Բանկային համակարգը, ինչպես գիտենք, ցանկացած տնտեսության ամենակարևոր հատվածներից մեկն է, որի բնականոն գործունեությունը վճռորոշ ազդեցություն ունի տնտեսության զարգացման վրա: Բանկերը, որպես տնտեսության կարևոր օղակ կարելի է բնութագրել այն գործառույթներով, որոնք նրանք կատարում են տնտեսության մեջ: Դժվարությունը, սակայն, կայանում է նրանում, որ ոչ միայն բանկերի, այլ նաև դրանց հիմնական մրցակիցների գործառույթները (ֆունկցիաները) ժամանակի ընթացքում մշտապես փոփոխվում են: Իրականում շատ ֆինանսական ինստիտուտներ ձգտում են մատուցվող ծառայությունների առումով հնարավորինս մոտենալ բանկերին, իսկ բանկերը, իրենց հերթին, ոչ բանկային մրցակիցների հետ պայքարում առաջարկում են մրցակիցներին ոչ բնորոշ ծառայություններ: Ի տարբերություն վարկային կազմակերպությունների կամ այլ ֆինանսական կառույցների բանկը առանձնահատուկ ֆինանսական կազմակերպություն է, որը ներգրավում է ավանդներ, տրամադրում վարկեր, վճարում չեկեր և մատուցում տարբեր ֆինանսական ծառայություններ կառավարությանը, տնտեսավարող սուբյեկտներին, քաղաքացիներին և միմյանց: Բանկը հանդես է գալիս որպես միջնորդ դրամական միջոցներ առաջարկողների և օգտագործողների միջև: Այդ դրամական միջոցները հավաքագրվում են երեք աղբյուրներից՝ պահանջ, խնայողական և ժամկետային ավանդներից, այլ բանկերից ստացված կարճաժամկետ փոխառություններից և սեփական կապիտալից: Բանկերը կատարում են նաև հաճախորդների վճարման հանձնարարականները, այդ թվում՝ դրամական միջոցների փոխանցումներ, գնում կամ վաճառում են արժեթղթեր, կառավարում հավատարմագրային հաշիվներ, իրականացնում ֆակտորինգային, լիզինգային և այլ ֆինանսական գործառնություններ և այլն: Բանկն իրավաբանական և ֆիզիկական անձանցից ներգրավված դրամական միջոցները տեղաբաշխում է իր անունից և իր ռիսկով՝ վերադարձելիության, վճարելիության և ժամկետայնության պայմաններով: Բանկերի դերը տնտեսության մեջ առաջին հերթին բնութագրվում է նրանով, որ բանկերը ֆինանսական միջնորդներ են: «Ֆինանսական միջնորդ» տերմինը նշանակում է ձեռնարկություն (կազմակերպություն), որը տնտեսության մեջ

փոխհամագործակցում է երկու տեսակի՝ անհատների կամ կազմակերպությունների հետ: Բանկը կատարում է այս երկու խմբերի՝ վերջնական փոխառուների և ֆինանսական ռեսուրսների աղբյուրների միջև միջնորդության կարևոր գործառույթը:

Բանկերը տնտեսության մեջ կատարում են հետևյալ կարևորագույն գործառույթները՝ միջնորդություն վարկավորման գործում, դրամական եկամուտների խնայողությունների տեսքով հավաքագրում և դրանց վերածում կապիտալի, միջնորդություն վճարումներում: Դա բանկերի կարևորագույն գործառույթներից մեկն է: Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվողներին իրենց կողմից իրականացվող գործառնությունների ընթացքում հաճախ հարկ է լինում կատարելու անկանխիկ վճարումներ իրենց բանկային հաշիվներից: Բանկերը՝ հանդես գալով որպես միջնորդներ վճարումներում, իրենց վրա են վերցնում հաճախորդների համար այս գործառնության կատարումը: Տնտեսավարող սուբյեկտները շահագրգռված են վճարումներում բանկային միջնորդությամբ, քանի որ դրամական գործառնությունների և հաշվարկների համակենտրոնացումը բանկերում կրճատում է նրանց ծախսերը գանձապահների, հաշվապահների և այլ հաստիքների պահպանման համար:

Բանկերի այս գործառույթը սերտորեն կապված է առաջին գործառույթի հետ: Արդի պայմաններում բանկերը հաճախորդների հանձնարարությամբ իրականացնում են ապրանքների ու ծառայությունների համար վճարումներ (օրինակ, վճարումների էլեկտրոնային համակարգի օգտագործմամբ չեկեր դուրս գրելու և հաշվանցելու, բանկային հաշիվներից կանխիկ դրամական միջոցների հանձնելու համար բանկոմատների միջոցով): Տվյալ գործառույթը հանդես է գալիս նաև այն դեպքերում, երբ բանկերը ֆոնդային բորսայում արժեթղթերով գործառնություններում հանդես են գալիս որպես միջնորդ, ներդրումային խորհրդատվություն իրականացնող, ներդրումային ընկերություն հանդիսացող կազմակերպություն:

Շահույթը բանկերի ֆինանսատնտեսական գործունեության վերջնական ֆինանսական արդյունքն է: Բանկի շահույթի մեծությունը հաշվարկվում է որպես տոկոսային եկամուտների, ոչ տոկոսային եկամուտների, հաշվեկշռից դուրս գրված ակտիվների վերադարձի գումարի և տոկոսային ծախսերի, ոչ տոկոսային ծախսերի և ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին կատարված հատկացումների գումարի միջև տարբերություն:

Վերջին տարիներին ՀՀ բանկային շուկայում, այդ թվում՝ նրա առանձին հատվածներում, նկատվում են բանկերի դիրքերի կամ նրանց ցուցանիշների անընդհատ տեղաշարժեր. կախված բանկերի կողմից ընտրված ռազմավարության՝ փորձում են առաջարկել այնպիսի ծառայություններ, որոնք ՀՀ բանկային համակարգում նման մրցակցային պայմաններում դարձնում են տվյալ գործիքը ավելի պահանջված հաճախորդների կողմից, որն էլ իր հերթին դարձնում է տվյալ բանկին առաջատարը բանկային համակարգում տվյալ գործիքով ցուցանիշները համեմատելիս:

Բնականաբար, տվյալ բանկի կողմից պահանջված և որակյալ ծառայության առաջարկը (օր.՝ ինտերնետ - բանկ ծառայություն) աստիճանաբար ամրապնդում է նրա դիրքերը բանկային մրցակցային շուկայում: Տվյալ ժամանակակից ծառայությունը տալիս է հնարավորություն առանց բանկ այցելելու կատարել բանկային փոխանցումներ աշխատավայրից կամ բնակարանից, որը տնտեսում է, և՛ ֆինանսական ծախսերը, և՛ ամենակարևորը՝ ժամանակը:

Ժամանակակից բանկային ծառայություններից է տարատեսակ քարտերի թողարկումը, տրամադրումը, քարտերով կատարվող գործառույթների բազմազանությունը: Ստանալով պլաստիկ քարտը, տրամադրող բանկից համապատասխան առևտրային կետում կամ բանկոմատում կանխիկ ստանալիս, հաճախորդի անվտանգության տեսանկյունից ելնելով քարտի հետ տրամադրվում է ծածկագիր, որը տարբերակում է հաճախորդների քարտերը միմյանցից: Քարտերը ուշագրավ են իրենց տարատեսակներով և յուրաքանչյուրի գործառույթներով:

Այժմ ՀՀ բանկային համակարգում քարտերով կարելի է իրականացնել մի շարք գործարքներ, որը ուղղակի խնայում է շատ մեծ ժամանակ: Քարտերով կարելի է կատարել կանխիկացում, տարբեր վճարումներ (օրինակ՝ կոմունալ վճարումներ, բջջային հեռախոսների լիցքավորում, քարտով այլ քարտային հաշիվներին փոխանցումներ, ինտերնետով տարբեր ծառայությունների պատվիրում կամ ապրանքների ձեռքբերում, այլ երկրներում հյուրանոցային համարների ամրագրում, ավտոմեքենաների վարձույթ, առողջապահական ու ապահովագրական ծախսերի կատարում և այլն), իսկ մի շարք

եվրոպական զարգացած երկրներում պլաստիկ քարտով կարելի է անգամ օգտվել հասարակական տրանսպորտից:

MODERN BANKING SERVICES

In the article RA banking services' regulation is discussed.

Naturally, the quality of offered services reinforces bank status in terms of cometitive aspect. Current bank service allows making bank transfers just at working place without visiting the bank or from home, thus saving financial resources which are important in the modern era.

Currently, the banking system of RA can deliver a range of services that save time. The card enables you to withdraw money and carry out a variety of payments.

In developed European countries the card can be used in public transport.

Keywords – *banking system, financial service, financial intermediary, plastic cards, financial result, interest income, profit*

СОВРЕМЕННЫЕ БАНКОВСКИЕ УСЛУГИ

Статья посвящена вопросам урегулирования банковской услуг в РА.

Естественно, качество предложенных услуг укрепляет конкурентные позиции банка /например, интернет-банк услуга/. Данная современная услуга позволяет не приходя в банк совершать банковские переводы с места работы или дома, экономя при этом финансовые затраты и, что самое важное, время.

В настоящее время в банковской системе РА можно совершать ряд операций, позволяющих экономить достаточно времени. Карточка дает возможность обналичить деньги, совершать разные операции. В развитых европейских странах пластиковой карточкой можно пользоваться и в общественном транспорте.

Ключевые слова – *банковская система, финансовая услуга, финансовый посредник, пластиковые карты, финансовый результат, процентный доход, прибыль*

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ասատրյան Բ., Բանկային գործ, Երևան, Սարվարդ հրատ., 2004, 720 էջ:
2. Բաբայան Վ., Բանկային գործի հիմունքներ, Երևան, 2003, 55 էջ:
3. Բադանյան Լ.Չ. Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ, Երևան, 2010, 588 էջ:
4. Банки и банковские операции, Под ред. Е.М. Жукова, М., Банки и Биржи Юнити,1997, 203 с. ww.arlis.am
5. www.banker.am
6. www.cba.am
7. www.economy.am

Հովակյան Գրիգոր Սուրենի
ԷԻԿ ամբիոնի դասախոս

Միքայելյան Լուսինե Նվերի
ԷՄ 41 խմբի մագիստրանտ





ՀՏԴ 347.243 ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ

Ա. Ռամազյան
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան

Բանալի բառեր. *Կադաստր, անշարժ գույք, կադաստրի վարում, անշարժ գույքի շուկա*

Կադաստրը, որը ներկայումս իրականացվում է աշխարհի բոլոր երկրներում, սերտորեն կապված է բնական ռեսուրսների հաշվառման, վիճակի գնահատման և օգտագործման հետ, ինժեներական գործունեության, բնապահպանական հասկացողության հետ, և ենթադրում են միատեսակ պայմաններում գտնվող տարածքների սահմանների առանձնացումը, նրանց քարտեզագրումը և նկարագրում[a] հաշվի առնելով քանակական և որակական բնութագրերը:

Հողային կադաստրը դա փաստաթղթերի փաթեթ է, ուր ամփոփված են հողի մասին բոլոր տվյալները: Այն ներառում է հողամասի աշխարհագրական դիրքը, պատկանելիությանը ձևակերպումը, քանակական և որակական հաշվարկը, բնական բերրիության բնութագիրը և վերջապես, տնտեսական գնահատումն ու գինը:

Խորհրդային պլանային տնտեսության ժամանակաշրջանում Հայաստանում անշարժ գույքը իրավաբանորեն չհանդիսանալով առք ու վաճառքի առարկա՝ լիարժեքորեն ընդգրկված չէր անշարժ գույքի շուկայում որպես գույքային շրջանառության օբյեկտ: Ավելին՝ Հայաստանում սահմանված չէր նաև « «անշարժ գույք» հասկացությունը: Հողը հանդիսանում էր պետության բացառիկ սեփականությունը, և այն, դիտարկելով որպես արտադրության միջոց գյուղատնտեսության մեջ, տրամադրվում էր միայն օգտագործման իրավունքով: Հայաստանի Հանրապետության անկախության ձեռքբերումից հետո հանրապետությունում սկսվեց հողի, բնակարանային ֆոնդի և տնտեսության մյուս ճյուղերի սեփականաշնորհման գործընթացը, առաջին անգամ օրենքով տրվեց (1996 թ.)« «անշարժ գույք» հասկացությունը՝ միավորելով հողը և նրա վրա ամրակայված գույքը մեկ գույքային համալիրի մեջ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի հունիսի 30-ի N 234 որոշմամբ ստեղծվեց անշարժ գույքի պետական միասնական կադաստրի համակարգ:

1999-2001 թվականներին ընդունվեցին Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրքը, Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին Հայաստանի Հանրապետության օրենքը, « «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը և այլ օրենքներ ու դրանց հիման վրա ընդունված նորմատիվ բնույթի փաստաթղթեր, որոնցով կարգավորվեցին ու սահմանվեցին սեփականության և գույքային այլ իրավունքների ձեռքբերման և դադարման հիմքերը, տրվեցին անշարժ գույքի միավորի, հողամասի սահմանումները, հողամասի նկատմամբ սեփականության և այլ գույքային իրավունքների առանձնահատկությունները, տարանջատվեցին և հստակեցվեցին հողի կառավարման խնդիրները, համայնքների և պետական մարմինների, պետության և մասնավորի իրավասությունները, քաղաքաշինական գործունեություն ծավալելու ընթացակարգերը և ընդհանրապես՝ անշարժ գույքին առնչվող հարաբերությունները:

Արևմտյան Եվրոպայում հնագույն հողային ռեսուրսների կառավարման համակարգ են հանդիսացել Անգլիայի մարզերի հողային տերությունները, որոնց մասին տեղեկություններ կան դեռևս 1086 թվականից: Այնուամենայնիվ Անգլիան համակարգված պետական գրանցում չի ունեցել մինչև 1862 թվականը: 1875 թվականին ընդունվեց "ընդհանուր սահմաններով" գրանցման գաղափարը և արդեն 1897 թվականին Հանութագրման քարտեզը (տեղագրական քարտեզ) դարձավ գրանցված քարտեզագրման իրավական հիմքը:

Կադաստրի համակարգը Նիդեռլանդներում պաշտոնապես գործում է 1832 թվականից: Համակարգի ձևավորման նպատակն է եղել երկրում գույքային բոլոր միավորների գնահատման և չափագրման միջոցով հողի հարկման ընթացակարգերի բարելավումը: Հետագայում Կադաստրը հողի հարկման կազմակերպությունից աստիճանաբար վերաճել է անշարժ գույքի իրավունքները երաշխավորող կազմակերպության: Նիդեռլանդների կադաստրը իր տրամադրության տակ ունի երկրում տվյալների ամենամեծ բազան: Սա համարվում է շատ կադաստրային խնդիրների իրականացման հիմնական աղբյուրը:

Ի տարբերություն արևմտաեվրոպական երկրների, նախկին խորհրդային երկրներում հողային ռեսուրսների կառավարման համակարգում կան շատ ընդհանրություններ: Այս երկրներում կատարվել է հաշվառման և գրանցման ՙպոզիտիվ՚ համակարգի ընտրություն[a] այսինքն պետության կողմից երաշխավորվում են անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքները: Այնուամենայնիվ, ուշագրավ է, որ այս երկրների մի մասը ընտրեց մինչխորհրդային համակարգը (Լատվիա, Էստոնիա), մեկ այլ մասը[a] ուսումնասիրելով միջազգային փորձը և հաշվի առնելով զարգացման ներկայիս տենդենցները ձեռնամուխ եղան նոր համակարգի արագ ձևավորմանը (Լիտվա, Հայաստան, Ղրղզստան և այլն), իսկ մյուսները չմշակելով հստակ ռազմավարություն ձեռնամուխ եղան առկա համակարգի բարեփոխումներին, որոնք արդյունքում ավելի ժամանակատար, ծախսատար ու անարդյունավետ գտնվեցին (Ռուսաստան, Ուկրաինա և այլն):

Կոմիտեն իր նպատակների և խնդիրների իրականացման համար՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է հետևյալ գործառույթները՝

• անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարումը և կադաստրի համակարգի գործունեության ապահովումը

• պետության կողմից գույքի նկատմամբ իրավունքների ճանաչումը, երաշխավորումը և պաշտպանությունը

• անշարժ գույքի (անկախ սեփականության ձևից) նկատմամբ իրավունքների, սահմանափակումների և օգտագործման նկատմամբ սահմանափակումների պետական գրանցման իրականացումը

• ՀՀ օրենսդրությանը համապատասխան անշարժ գույքի (անկախ սեփականության ձևից) պետական հաշվառում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ հողային ֆոնդի հողային հաշվեկշռի կազմում

• անշարժ գույքի կադաստրային և տեղագրական քարտեզների ստեղծում, թվային կադաստրային և տեղագրական քարտեզների կազմում

• ՀՀ օրենսդրությանը համապատասխան անշարժ գույքի կադաստրային գնահատում, հողի հարկի, գույքահարկի բազայի ստեղծում, բազմաբնույթ կադաստրների վարման նպատակով անշարժ գույքի՝ հողերի շենքերի, շինությունների գնահատման մեթոդիկայի մշակմանը մասնակցություն

• անշարժ գույքի ծածկագրման (կոդավորման) համակարգի, պետական գրանցման ծածկագրերի մշակում ու ներդրում

• գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման, անշարժ գույքի հաշվառման, կադաստրային քարտեզագրման, գնահատման տեղեկագրական քարտեզների ստեղծման ոլորտներում համաշխարհային փորձի ուսումնասիրում ու ներդրում

• անշարժ գույքի պետական համակարգված դիտարկումների (մոնիտորինգ) կազմակերպում ու իրականացում, անշարժ գույքի շուկայի վերլուծություն և կազմակերպում

• անշարժ գույքի շուկայի ձևավորման ու կայացման միջոցառումների կազմակերպում

• անշարժ գույքի և դրա նկատմամբ իրավունքների, սահմանափակումների մասին տեղեկատվական բանկի ստեղծում ու կառավարում, կադաստրային գործերի և պետական գրանցման փաստաթղթերի պահպանում

• տեղագրական և կադաստրային քարտեզագրողների, ռիելթորների, անշարժ գույքի շուկայական գնահատողների լիցենզավորում:

Անշարժ գույքի կադաստրի վարումը, որը մեր երկրում իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն իրենից ներկայացնում է անշարժ գույքի հետ կապված ֆիզիկական և իրավաբանական անձանց հարաբերությունների, դրանց արդյունքում ծագած իրավունքների պետական գրանցումը: Անշարժ գույքի կադաստրային գնահատման, ինչպես նաև քարտեզագրման աշխատանքները:

Քանի որ 21-րդ դարում, գիտատեխնիկական առաջընթացի պայմաններում տարեցտարի կատարելագործվում են չափագրման գործիքները և տեխնիկապես հնարավոր դարձնում չափագրման աշխատանքներն իրականացնել նույնիսկ առաջին հայացքից խիստ անկանոն և դժվարին թվացող շինություններում, ապա հարկ կհամարեի նշել, որ անհրաժեշտ է նաև կազմակերպել հաշվառման մասնագետների չափագրման գործիքների տիրապետումը, դրանցից օգտվելու մասնագիտացումը:

Իհարկե, կցանկանայի հատուկ ուշադրություն հրավիրել նաև օրենսդրական դաշտին վերաբերվող գիտելիքների խորացմանը, դրանց հստակ տիրապետմանը, քանի որ հաշվառումն իրականացնելիս շատ հաճախ հանդիպում են այնպիսի իրավիճակներ, որ անհրաժեշտ է հաշվառողի մասնագիտական պատրաստականությունը, օրենսդրական գիտելիքների և ինժեներական հմտության ողջ ներուժը:

Հաշվառման աշխատանքներն իրականացվում են անշարժ գույքի տարբեր գործառույթներ իրականացնելու նպատակով, օրինակ ինքնակամ շինությունների հաշվառումը կատարվում է ինքնակամ շինությունների առկայությունը փաստելու, դրանց քանակական և որակական տվյալները ստանալու և դասակարգելու նպատակով, որպեսզի հետագայում հնարավոր լինի ճշգրիտ գնահատական տալ ինքնակամ կառուցված շինությունը:

Real estate records

Keywords *- cadastre, real estate, real estate market*

The registration office, which is currently being implemented in all countries of the world, closely related to the accounting of natural resources, assessment and use of engineering activities related to environmental understanding, and provide for the separation of the borders of the territories the same conditions, their mapping and details [a] considering quantitative and qualitative characteristics .

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Գ.Ն. Մուշեղյան, Պ. Մ. Սողոմոնյան – Քաղաքային հողօգտագործումը շուկայական տնտեսության պայմաններում, Երևան 1993թ,

Անշարժ գույքի կենսացիկլի կառավարում – Ստեփանյան Սարգիս

Շահինյան Արմեն Զավենի
ԷԻԿ ամբիոնի դասախոս



Ռամազյան Արտյոմ Ռուդոլֆի
ԷՄ 44 խմբի մագիստրանտ



ՀՏԴ 681

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՄՈՒՆԻՑԻՊԱԼ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԵՋ

Վ. Առաքելյան
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան

Առանցքային բառեր. *տեղեկատվական համակարգեր, տեղեկատվության թվայնացում, «էլեկտրոնային իշխանություն», «էլեկտրոնային կառավարում»:*

Դիտվում է մունիցիպալ կառավարման մեջ էլեկտրոնային տեղեկատվական համակարգերի կիրառման արդիականության, առանձնահատկությունների և խոչընդոտների խնդիրները: Վեր է լուծվում էլեկտրոնային տեղեկատվական համակարգերի կիրառման հայրենական և միջազգային փորձը:

Համաշխարհային մունիցիպալ կառավարման պրակտիկան, ինչպես և քաղաքային համայնքների ձևավորման և զարգացման գործընթացները, ունեն երկար և բովանդակալից նախապատմություն: Հայաստանի Հանրապետությունում մունիցիպալ կառավարման կազմավորման հիմքը դրվեց 1996 թվականին՝ «ՀՀ Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի ընդունմամբ [1]: Այդ օրենքը սահմանեց տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ-րի) կառուցվածքը, լիազորությունները, ինչպես նաև դրանց գործունեությանը վերաբերող բազմաթիվ այլ հարցեր: Թեև տեղական ինքնակառավարումը մեր երկրում համեմատաբար երիտասարդ է, սակայն այն հասցրել է անցնել կայացման և ամրապնդման երկար ուղի: ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի անցած ուղին և միջազգային փորձն ապացուցել են, որ մունիցիպալ կառավարման արդյունավետությունը ուղղակիորեն կապված է կառավարման արդի մեթոդների կիրառման հետ, որոնց հիմքում ընկած է էլեկտրոնային տեղեկատվական համակարգերի մշակումը և արդյունավետ ներդրումը համայնքներում: Քաղաքային բնակավայրերի վերջին ժամանակաշրջանի ժողովրդավարացման համաշխարհային միտումները ընդլայնում են բնակչության տարբեր սուբյեկտների մասնակցությունը մունիցիպալ կառավարման գործընթացներում: Նման իրավիճակում համայնքային տեղեկատվական համակարգերի ներդրումը և զարգացումը դիտվում է որպես առաջնային մունիցիպալ կառավարման հետագա զարգացման գործընթացում: Անվիճելի է այն փաստը, որ այսօրվա համայնքներում կառավարման մարմինների մրցակցային դիրքերը ամրապնդելու նպատակով՝ իրենց առաքելությունը կատարելու մեծ հնարավորություններ են ստեղծվում տեղեկատվական համակարգերի շնորհիվ:

Սույն հոդվածի շրջանակներում կանդրադառնանք համաշխարհային և հայրենական պրակտիկայի էլեկտրոնային տեխնոլոգիաների կիրառմամբ տեղեկատվական համակարգերի ձևավորման և կայացման փորձը ուսումնասիրած մի շարք հեղինակների աշխատություններին: Դրանց վերլուծությունը և հիմնական դրույթների ամփոփումը, մեր կարծիքով, հնարավորություն է ստեղծում առանձնացնել գործնականում արժևորված մի շարք առաջարկություններ, որոնց իմացությունը անշուշտ օգտակար է մունիցիպալ կառավարման ինստիտուտի հետագա զարգացման համար:

Ակնհայտ է, որ նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ներմուծումը լիովին վերափոխում է մունիցիպալ կառավարման մոդելը: Վերջին տասնամյակում միջազգային պրակտիկայում լայն տարածում է ստացել «էլեկտրոնային կառավարում» և «էլեկտրոնային տեղական իշխանություն» գաղափարները: Ոլորտի խնդիրներով զբաղվող մասնագետները անդրադառնում են «էլեկտրոնային կառավարում» հասկացության սահմանման ձևակերպմանը: Այսպես օրինակ, մեզ համար պարզ և ընդունելի է էլեկտրոնային կառավարման (e-governance) սահմանումը, որպես իշխանությունների կողմից տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառում մատուցվող ծառայությունների համար [2]: Անվիճելի է հոդված [2] հեղինակների միտքը այն մասին, որ էլեկտրոնային կառավարումը մատչելի է դարձնում բնակիչների համար իշխանությունների կողմից մատուցվող ծառայությունները՝ վստահելի,

արդյունավետ և թափանցիկ միջոցների կիրառմամբ: Ուշագրավ է, որ հրապարակումներից մեկում [3] Գարսոնը էլեկտրոնային կառավարումը դիտարկելիս առանձնացնելով մասնակիցների երեք հիմնական խմբեր (իշխանություն, բնակիչներ և բիզնեսի ոլորտի խմբեր) ընդգծում է, որ նրանց միջև բացակայում են իրենց տարանջատող որևէ հստակ սահմաններ: Հեղինակի կարծիքով հնարավոր է չորս հիմնական մոդելների ձևավորումը՝ «իշխանություն-բնակիչներ», «իշխանություն-ծառայողներ», «իշխանություն-իշխանություն», «իշխանություն-բիզնես» [3]:

Մեր տեսակետից, անշուշտ, Էլեկտրոնային կառավարման տեխնոլոգիաները թույլ են տալիս ոչ միայն ինտեգրել իշխանությունը և ծառայությունները սպառող հասարակության տարբեր սուբյեկտներին (բնակչություն, բիզնես ոլորտ և այլն), այլև դրանք ամրապնդում և զարգացնում են ներիշխանական կապերն, ինչպես նաև բարձրաձնում են հաղորդակցման արդյունավետությունը:

Մի շարք հեղինակներ անդրադառնում են կիրառվող տեղեկատվական համակարգերի, համացանցային լուծումների և համայնքային կայքերի իրավիճակի վերլուծությանը: Այս առումով ուշագրավ է 2014 թվականին լույս տեսած «ՀՀ ՏԻՄ-րի տեղեկատվական համակարգերը և համացանցային կայքերը» հրապարակումը [4], որտեղ հեղինակները ներկայացնում են Հայաստանում ՏԻՄ–երի գործունեության տեղեկատվայնացման, նրանց կողմից կիրառվող տեղեկատվական համակարգերի, համացանցային լուծումների և համայնքային կայքերի իրավիճակի նկարագրությունը: Կատարված հետազոտությունների արդյունքում հեղինակները բացահայտել են հիմնական խնդիրները և վերլուծություններից բխող եզրահանգումների հիման վրա ձևավորել են առաջարկություններ: Դժվար է չհամաձայնվել, որ «Համացանցի բուռն զարգացումը կառավարման մարմինների համար լայն հնարավորություն է ընձեռնում էականապես բարձրացնելու կատարվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների որակն ու արդյունավետությունը, ինչպես նաև ապահովելու քաղաքացիների տեղեկացվածության բարձր մակարդակ:» [4]

Մի շարք հեղինակների աշխատություններում անդրադարձ է կատարվում «Էլեկտրոնային իշխանություն» (e-government) և «Էլեկտրոնային կառավարում» (e-governance) հասկացությունների պարզաբանմանը և դրանց կիրառման արդյունավետության հարցերին [5,6,7,8,9]: «Էլեկտրոնային իշխանություն»-ը սահմանվում է որպես ինտերնետի կամ այլ թվային միջոցների կիրառմամբ՝ ազգային կամ տեղական (մունիցիպալ) իշխանության կողմից տեղեկատվության փոխանցում բնակիչներին, ձեռներեցներին կամ որևէ գործակալություններին/ կազմկերպություններին: «Էլեկտրոնային կառավարում»-ը սահմանվում է որպես կառավարիչների (ղեկավարների) բարձրագույն տեխնոլոգիաների և ինտերնետի օգտագործման կարողություն՝ իրենց լիազորությունները (վարչական, կազմակերպչական, պլանավորման, կանոնակարգման և այլ) իրականացնելու ընթացքում արդյունավետություն ապահովելու նպատակով:

Համաձայնվելով վերը նշված աշխատությունների հեղինակների տեսակետների հետ, կարծում ենք, որ մունիցիպալ կառավարման գործընթացի թվայնացումը համայնքներում փաստացի ապահովում է էլեկտրոնային տեսքով տեղեկատվության մատչելիությունը, բարձրորակ ծառայությունների մատուցումը բնակիչներին՝ ժամանակակից տեխնիկական միջոցների կիրառմամբ: Նման գործիքի ավելի լայն կիրառումը համայնքներում կապահովի երկկողմանի շահավետություն: Մի կողմից բնակչության տարբեր սուբյեկտներ հնարավորություն են ստանում մուտք գործել համայնքին վերաբերվող տեղեկատվական բազա՝ առանց որևէ «բյուրոկրատական» խոչնդոտների և ակտիվ մասնակցել համայնքին վերաբերող ցանկացած հարցի շուրջ որոշում կայացնելու գործընթացին: Այլ կերպ ասած, ինքնակառավարումը համայնքներում ձեռք է բերում տեղական իշխանությունների կառավարման թափանցիկության բարձր մակարդակ, ինչպես նաև բնակչության մասնակցային բնույթ: Մյուս կողմից՝ տեղական իշխանությունը

հնարավորություն է ստանում արդյունավետ կապ հաստատել ծառայություն մատուցողների, ծառայություն սպառողների և ձեռներեցների հետ և դրանով իսկ ապահովել արդյունավետ որոշումներ կայացնելու գործընթաց: [8, 10, 11]

Մունիցիպալ կառավարման տեղեկատվական ապահովման թվայնացման գործընթացը բավականին ծավալուն, աշխատատար և ծախսատար է: Թվայնացման գործընթացը ներառում է տեղեկատվական ապահովման բոլոր փուլերը, մասնավորապես՝ տեղեկատվության որոնման կազմակերպում, հավաքագրում, պահպանվում, վերամշակվում և փոխանցում օգտատիրոջը: Համայնքին վերաբերող տեղեկատվությունը, ինչպես և ցանկացած այլ ոլորտի տեղեկատվություն, պետք է ունենա որոշակի հատկանիշներ, մասնավորապես՝ լինի վստահելի, լիակատար, ճշգրիտ, արդի: Ակնհայտ է, որ նման գործընթացի իրականացումը կպահանջի մի շարք նախապատրաստական միջոցառումների անցկացում: Այսպես օրինակ, թվայնացված տեղեկատվական ապահովումը սերտորեն կապված է հետևյալ փոխկապակցված խնդիրների լուծման հետ.

ա/տեղեկատվության բովանդակության որոշում,
բ/ տեղեկատվության աղբյուրների և սպառողների ցանկի հստակեցում,
գ/տեղեկատվության թվայնացման մեթոդների ընտրություն,
դ/տեղեկատվության կրիչների, տեխնիկական միջոցների ընտրություն,
ե/ մասնագիտական կազմի նախապատրաստում և այլն:

Անշուշտ վերը թվարկված նախապատրաստական միջոցառումների անցկացումը կպահանջի զգալի ռեսուրսներ (ֆինանսական, մարդկային, տեխնիկական, նյութական և այլ): Չվիճարկելով այս նախադրյալը, այնուամենայնիվ, նշենք, որ համայնքների կառավարման համակարգի հետագա զարգացման ուղին չի կարող դիտվել այլ կերպ, քան ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ընդլայնելու գործընթաց:

Key words: *information systems, digitization of information, «e-government», «e-governance».*
Issues of an urgency, specificity and troubles of application of electronic information systems in municipal governance are considered. Domestic and international experience of application of electronic information systems is analyzed.

Ключевые слова: *информационные системы, оцифровка информации, "электронное правительство". "электронное управления".*
Рассматриваются вопросы актуальности, специфики и препятствий внедрения электронных информационных систем в муниципальном управлении. Анализируется отечественный и зарубежный опыт использования электронных информационных систем.

Գրականություն

1. ՀՀ Օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին», 2002 թ.

2. Saugata, B., and Masud, R.R. Implementing E-Governance Using OECD Model (Modified) and Gartner Model (Modified) Upon Agriculture of Bangladesh, 2007. https://en.wikipedia.org/wiki/E-governance

3. Garson, D.G. Public Information Technology and E-Governance. Sudbury, MA: Jones and Bartlett Publishers, 2006. https://en.wikipedia.org/wiki/E-governance

4. ՀՀ ՏԻՄ-րի տեղեկատվական համակարգերը և համացանցային կայքերը. 2014:

5. Shailendra C. Jain Palvia, Sushil S. Sharma. E-Government and E-Governance: Definitions/Domain Framework and Status around the World. http://www.iceg.net/2007/books/1/1_369.pdf

6. Mary Maureen Brown. "Electronic Government" Jack Rabin (ed.). Encyclopedia of Public Administration and Public Policy, Marcel Dekker, 2003, pp. 427–432.

7. The Benefits of E-Government. http://www.mass.gov/anf/research-and-tech/it-planning-and-collab/strat-planning/prev-plans/e-gov-strat-plan/section-2-the-benefits-of-e-government.html

8. Электронный муниципалитет – новое качество муниципального управления. 2002. № 9-10. 20 ноября, https://www.hse.ru/news/1093456.html

9. А.Э.Саак, В.Н.Тюшняков. Применение технологий электронного правительства в системе государственного и муниципального управления. http://cyberleninka.ru/article/n/primenenie-tehnologiy-elektronnogo-pravitelstva-v-sisteme-gosudarstvennogo-i-munitsipalnogo-upravleniya

10. Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման հետագա զարգացման և իշխանության ապակենտրոնացման ռազմավարական մոտեցումներ. Երևան, 2012:

11. Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում / Յու. Մ. Սուվարյան և ուրիշներ.– Եր.: Տնտեսագետ, 2014:

Վանյան Իրինա Ղևոնդի
տնտ.թ. դոցենտ



Առաքելյան Վարդուհի Վանիկի
ԷՄ 42 խմբի մագիստրանտ



Բովանդակություն

Ստեփանյան Սարգիս, Մուրադյան Առնո Սևակ
ՄԵՆԵՋՄԵՆԹԸ ԵՎ ԴՐԱ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ.....2
Ստեփանյան Սարգիս, Մանասարյան Լաուրա
ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԴԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ.....7
Հովհաննիսյան Արա, Սարդարյան Ռոմեն
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՎԱՐՔԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆ.....11
Բեգլարյան Անահիտ, Մուրադյան Լիլիթ
ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....18
Բեգլարյան Անահիտ, Դավթյան Մեղրիկ
ԱՐՏԱԳԱՂԹԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....26
Աղաջանյան Հերմինե, Հակոբյան Լևոն
ՈՒՂՂԱԿԻ ԵՎ ԱՆՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ ԴՐԱԿԱՆ և ԲԱՑԱՍԱԿԱՆԿՈՂՄԵՐԸ.....32
Հովհաննիսյան Անդրեաս, Պապյան Մարիամ
ՌԵՆՏԳԵՆՅԱՆ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ԳՈՐԾԻՔ.....38
Շահինյան Արմեն, Եգանյան Անահիտ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՈԼՈՐՏ.....41
Հովհաննիսյան Աշխեն, Եգանյան Դավիթ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ.....46
Աղաջանյան Հերմինե, Հարությունյան Հովիկ
ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ.....52
Հովակյան Գրիգոր, Միքայելյան Լուսինե
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....57
Շահինյան Արմեն, Ռամազյան Արտյոմ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ.....60
Վանյան Իրինա, Առաքելյան Վարդուհի
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՄՈՒՆԻՑԻՊԱԼ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԵՋ.....63

Տպաքանակը՝ 101 օրինակ:
Շապիկը մշակված է Տաթևիկ Բոյախչյանի կողմից :
Տպագրված է Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի «ԷԻԿ» ամբիոնում: Հասցե՝ ք. Երևան Տերյան 105: